




64

U-45







12004

9 U.S.C. § 1 U.L.U.P. by

2.9.1 of by (Original Plan)

Stephens Agency 72.00 paid 9

64

5173

158-

1-45

66

ՀԱՄԱՐՈՑ

UP

ՎՐԱՒԵՍՏՐԵՎԱՌԻՒԹԵ

ԵՒ ՆՈՐՄԱՆ ՀԱՅՐՔ

ՏԵԱԿ ՄԵԽՐՈՊԱՅ ՎԵՐԴԱՊԵՏ
 ԱՂԱՋՐԱՐԵԱՑ ԿՈՍՏԱԴԻՈՒՊՈԼՍԵՑԻՈՑ
 ԸՆԿԵՐԱԿՅԱ ՃԵՄԱՐՄԱՆՑ ԵՒՐՈՊԻՈՑ


ՆՊԱՍՏԻՔ ԱԶՆՈՒԱԿԱՆ ՊԱՄՈՆ
 ՊԵՏՐՈՍԻ ԻՒՍՈՒՖԵԱՆՑ
 ԶՄԻՒՌՆԱՑԻՈՑ ԲՆԱԿԵԼՈՑ 'Ի ԹՐԵԱՏ



'Ի ՎԵՆԵՏԻԿ

'Ի ՑՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑՆ ԴԱԶԱՐՈՒ

1830



help

Հունիս

Երես շնորհիկան

Գրաշարակ.

Խոր պատճեններ

Գյուղաց Պահպատ

6.7.1976
Մուհիս



ԱՌԱՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Արհեստը ծառայական գործք մի է իրաւ,
բայց որչափ որ անմիջապէս կելլայ տեսական
գիտութէ մը, նոյնչափ ալ կաղնուանայ : Քի-
միական և բնական գիտութիւնները որք բոլո-
րովին տեսական են, ասոնցմէ ելածներնալ ազ-
նիւ և օգտակար կըլլան, և կըղատվին մէքենա-
կան և ուրիշ ծառայական արհեստներէն . զի-
քիմիական ուժով արհեստներուն մէջի եղած
գործողութիւնը՝ բնութիւնն է որ կըգործէ, և
մարդը նիւթերը միայն մէկզմէկու կըմօտեցընէ,
ու թող կուտայ որ, բնութիւնը իր բնական
ուժովը արուեստաւորին մտացած գիտումը ու-
վախճանը կատարէ : Բնութէ ուժը քիչ մարդ
ճանչնալով աշխարհիս մէջ, բնական գործքերը
կամ արուեստները, գաղտնիք այսինքն ուռու ար-
հեստք ըսվեցան. հին ատենը (*) եգիպտացիք շատ

(*) Եգիպտոսի հողի մէջէն ելած շատ աղճա-
պակներ (ֆառֆուուիներ) և զանազան գեղե-

ծանօթ էին գաղտնի արհեստներուն . վիւնի-
կեցիքալ նմանապէս, բայց խիստ գաղտնի պա-
հելով, և ուրիշի չիմացընելով մեծ մասը կոր-
սըլեցաւ . ինչպէս ոսկին ապակի կամ պիլլօռ
դարձնելու կերպը՝ կորսըված է հիմայ . ևս աս
պիլլօռէս պըզտի կտորմը տեսայ, Փալին ըստած
շըվէտի դեսպանին քովը՝ եգիպտոսէ բերած,
առ պիլլօռս ծանը էր ընտոր ոսկին, և քանի
մը մանը չիհալած կտոր ոսկի կար մշջը :

Երբոր Յոյները գացին հին ատենը եգիպ-
տոս՝ միայն մաթէմաթիգական և աստղաբաշ-
խական գիտութիւննէր սորվեցան, և չիսորվե-
ցան արհեստական գաղտնիքնէր, զի եգիպտա-
ցիները ծածուկ կըսլահեին զքիմիական և զբնա-
կան գիտութիւնը ուրիշ ազգերէն, ասոր հա-
մար յունաց բնաբանութիւնը միայն չոր խէլ-
քով և առանց փորձերու դրած է, ասոր հա-

ցիկ գուներով ներկած և գրած մինէլի բաներ
տեսած եմ : Չինացիք հին աղդ ըլլալով շատ
գաղտնիք գիտեն, ու բարակ գիտութիւն ալ չկյ-
տեն . ուրեմն հին եգիպտացւոցմէ մտած է ի-
րենց : Տես հնաստանցոց գուները կամ գու-
նաւոր բաները և որչափ ալ գեղեցիկ և բարակ
արհեստներու տէր են, կըհետեւի թէ ասոնք ժա-
մանակաւ պայծառ ազգ են եղեր, և քաջ քի-
միագէտ :

մար յունաց մէջնալ չեկար այնչափ արուեստական հանագըներ այսինքն մարիֆէթներ, ուստի՝ կարօտ էին եգիպտառսի . և փիւնիկեցիներուն վաճառքներուն, նոյնալես ալ ետքը հռովմայեցիք ասանկ էին . ընտոր ալ հիմոյ արևելքին այս կողմերը արևմբացոց կարօտ է : Հիմըկու եւ բոպացիները որչափ որ աւելի ծաղկեցան ասըսած գիտութիւններուս մէջը, այնչափ ալ նորէ 'ինոր արհեստական գըտումներ ունեցան ու փառք ու պայծառութիւն ըրին իրենց ազգին, և որպէս զի ալ աւելի առաջ երթան, քանի մը տարի է որ հաստատեցին ամենայն մայրաքաղաքի մէջ ընկերական ջանք մը այսինքն զայրէթ մը, որ աս ընկերութիւնը նայի և տարվէ տարի քննէ . նոր նոր եղած գտումները, ու անոնց արժողութեան ինկած վարձքը հատուցանէ գըտօղներուն, ասանկ (*) ալ իմացիր հին

(*) Յամին 1809. 1810. 1811. շատ խոստումներ եղան արքունական գպրատուններէն և քաջալերական ընկերութիւններէն . և փարիզու տէրութենէն զանազան բանից գտումներու համար, զոր օրինակ թէ մէկը որ ազգէ ըլլայ գտնէ կերպը մէքենայով ոլորէլ զբուրդը ինչպէս որ պէտք է, մէկ միլիոն ֆուանկ (որ կընէ շ հազար քէսէլէն աւելի) կատրվի իրեն արքունական գանձէն, թէ որ իր գըտումը ըլլայ ու-

արհեստներուն, թէ որ մէկը նոր կատարելու-
թիւն մը տոյ նէ. ասոր համար շատ դժուա-
րին համարված բաներ գանրվեցան հիմայ:

Շատոնց կուղէի մեր ազգին մէջը մէկ նոր
եռանդմը, այսինքն հավեսմը գիտութե՛ ձգել,
բայց տեսայ որ շատերը մեր ազգին անօդուտ
բանմը կըսեպէն գիտութե՛, ինչպէս որ լըսեցի
աշկերտիս մէկէն երկրաչափութիւն դաս տալ-
նիքէն. վարդապէտ, ըսաւ ինծի, աս եռանկիւ-
նըս ցըցընեմնէ՝ հաց կուտան ընծի, և ևս ըսի
ոչ. առա դոցեց գիրքը և ալ չառաւ ձեռքը.
աս խօսքոքանի որ գնաց՝ մտաւ ինծի: Մեր ազ-
գին մէծ մասը արհեստաւոր է կալուածք չու-
նի ինչով ապրի, առա իրաւունք ունի ասանկ
ըսելու. զի գիտութեան համնալ կատարեալ
առած չէ, ինչպէս գիտութիւնը իր արհեստին
մէջնալ գործածելու կերպը և հարկաւորութը
գիտնայ. ասոր համար հաղիւ որ մէնծցերէ տը-
ղան՝ շուտով կերթայ շուկան, այսինքն չարշին
արհեստաւոր վարպէտի մօտ. ո՞րչափ պարապ
ատեն կանցնէ՝ մինչև որ խելքը հակէ, ըսւ չէր

զուած թէութե՛ը՝ անոր կեսը կըտըրվի. և ալ
աւելի պակաս ըլլոյ գըտումը, 25000 ֆուանկ
կըտըրվի. և շատ մարդ շատ վարձքեր առին.
ըստ իրենց ըրտծ գտումներուն.

ըլլար որ կարդալու մէջ ուշանար և դպրատան
մէջ արհեստական գիտութիւն կարդալով և ա-
նանկ փորձեր տեսնալով վարժեր միտքը • ուս-
տի մեր աղքին տըղոց չորս բան խիստ հարկա-
ւոր կըհամարիմ դպրատան մէջը հիմակվան վի-
ճակիս նոյելով:

(*) Հաշիւ, նկար՝ այսինքն ռէսիմ, մէքե-
նական թեթև սկզբունք, և դլիսաւոր արուեստ-

(*) Դպրատան մէջը յէտ ամենահարկաւոր
ուսումէն այսինքն յէտ քրիստոնէական վարդա-
պետութիւն, բարոյական ոկզբունքէն, և քա-
զաքավարական կրթութենէն, հաշուագիտական
ուսումը խիստ հարկաւոր է այսինքն թուա-
բանութեան և վաճառականութեան տօմարի
այսինքն տէֆտէրի գիտութիւր իր սարօքը • այս-
ինքն վաճառականութեան օրէնքներուն ծանօ-
թութեամբը • զի մեր աղքը առաջ շատ երե-
լի էր վաճառականութե մէջ, մինչև ժամանա-
կաւ քանիմը եւրոպայի տէրութիւները ուղեցին
որ իրենց տէրութեան մէջ հայ վաճառական-
ներ գան, բնակին, ինչպէս Լուիզ չորեքտասա-
նորդին ատենը, որպէս զի իրենց մէջնալ ծաղկի
վաճառականութիւնը : Բայց հիմա մեր աղքը
վաճառականութե վիճակէն անդէտ մնալով և
յարմար ընկերներ չունեցած ձեռք զարնելով,
ումանց և վնաս քաշելով, լախ եկած է շատե-
րուն, և եաք կայնած էն : Խոկ ընդհակառակը
ուրիշ աղքերու մէջ շատ ծաղկեցաւ վաճառա-
կանութիւր և հետեւապէս ալ հարստութիւր, որ
ժամանակաւ դրեթէ չի կայր մէջերնին այն-

տարանութիւն։ Ասոր համար արուեստաբառ
նական բաներու պարապեցայ որ կարենամ աղ-
դիս օգուտմը ընել, գիտութեան համը ցըցնել,
և հիմայ ձեռք զարկի աս գործքիս, յուսամ
որ իմ վախճանիս կըհասնիմ։ հիմըկու հիմայ
Ճաշակ մը այսինքն չէնի մը տալով արուես-
տական նոր գիւտերուն, որով հասկըցնեմ թէ
գիտնական ծանօթութիւնը է առաջին մարդ

չափ։ Որովհետեւ ըռեսիմը շատ արհեստներու
հարկաւոր հիմն է։ ուստի ըռեսիմ գիտցող ար-
հեստաւորը նորանոր և շնորհալի այսինքն հիւ-
սիւնլիւ ձեռվ բան կըշինէ։ Թող որ ըռեսիմը
կըբարկըցնէ մարդուն երեակայութել, և շատ
բանի ձեռաց յարմարութիւն կուտայ, կընամ
ըսել ալ, թէ շատերուն բարքին աղնուութե
կըբերէ, և կոպտութենէ կըհեռացնէ։ Մեքե-
նական գիտութել կենթադրէ մաթիմաթիքա-
կան գիտութե, գոնէ ստորին երկրաչափութել,
որով ալ միտք մարդուն կիրթ կըլլայ ուշադրուե-
և անդրադարձութե։ Ընդհանրապէս ամէն ար-
հեստ՝ երկու Ճուղ կըբաժնըլին։ մէկը մեքենա-
կան, որ չառխով, կամ գործիքով այսինքն ա-
վատանըըսով, և կամ ծանրուեն ուժով կըդոր-
ծէ։ իսկ միւսը դեղերու այսինքն էղաներու ու-
ժովը կըդործէ։ ուստի գոնէ համառօտ մէքե-
նական գիտութեն սկզբունքը։ և արհեստաբառ
նութել կտմ արհեստներու վերաբերեալ ծանօ-
թութիւները օգտակար կըդատեմ տղոց՝ նախ-
դպրատան մէջը փոքր'ի շատէ սորվել, զի միտ-
քերնին նախապատրաստ ըլլալով, երբոր եր-

ըլլալու և փարայ վաստըկելու ձամբան . և Էտ-
քը ած ուղէնէ առանձին զանազան արհեստնե-
րու վրայ ալ կըխօսինք :

Հինուց հետէ ամենայն ազգեր , որք պայ-
ծառ եղան գիտութիւնով , գեղեցիկ արհեստ-
ներով ալ ծաղկեցան . և որ ազգը որ այսպէս
եղաւ , կոսկութէ ելաւ բարակցաւ քաղաքա-

թան մասնաւոր արհեստի վարպետի .քով , ոչ
միայն շուտով կըսորվին նոյն արհեստը , այլ և
հնարագէտ և հանճարեղ կըլլան ամէն մէկը ըստ
իր ընդունակութեանը : Անդիտայիներուն ոյս-
ինքն ինկիլիզներուն այսչափ քաջ արհեստ և
հնարագէտ ըլլալուն մէկ մեծ պատճառը աս է .
զի աս ազգին արհեստաւորներուն մեծ մասը
գիտուն ըլլալով կըդերազնցենքան զամէն ազ-
դերուն արհեստաւորը . ուստի և իրենց ձեռա-
գործներնալ ամէն քաղաք կանցնի :

Չատ մարդիկ մեր ազգին մէջէն ծուռ դրած
են , կարծելով որ գիտունի սորվող մարդը միշտ
նոյն սորված դրագիտութիւնը պիտի ապրի վաս-
տըկի . և երբ կըտեսնէ որ չապրիր այսինքն չի-
վաստըկիր , զի գեռ մեր ազգը ան աստիճանի
մէջ է , կըփախչի գիտութէ . այլ պէտք է գիտ-
հալ որ՝ գիտուն արհեստաւոր ըլլալովը պիտի
ապրի կամ վաստըկի : « Ամանապէս շատ տարբե-
րութիւն կայ գիտուն վաճառականի մէջը և տգէտ
վաճառականին մէջ . զի վաճառականութիւնը
կենթագրէ , նաև լեզուագիտութիւն և աշխար-
հագրական տեղեկութիւն , և տէրութիւններուն
կառավարական ծանօթութիւնը . զի վաճառակա-

վար եղաւ . մեծցաւ և հարստացաւ : (*) Երանի
ժողովրդեան որոց մեծերը կամ իշխանները հոգ
և ջանք ունին գիտութիւններ և արհեստներ
ծաղկրցընել իրենց ազգին մշջը , ասանկները չե
թէ իշխան են միայն՝ հապա լոյս են , արեգակ
են , և ամենայն պատռոյ և փառաց արժանի :

նութե՛ մէջ ուղիղ նախագուշակութելը առու-
ծախքի , այնչափ կաժէ , որչափ կաժէ քաղաքա-
կան կեանքը մէկ վաճառականին . որովհետեւ
ասով կրնայ շահիլ . և աս նախ տեսութենիս
պակսելով կը վնասի և կը վաճանայ :

(*) Այսպէս եղան հին եգիպտացիք , որք
գիտուն մարդերը իրենց թագաւոր ընարեցին .
փիւնիկեցիք , աթենացիք և այժմեան եւրո-
պացիք , բայց գլուխաւորապէս անգղիացիք . զի
աս ազգը որ խիստ հին տտենը կոպիտ կը հա-
մարվէր , յետոյ իր ազգին մշջը գիտութենիր
և արհեստներ օրէօր ծաղկրցնելով , մէծ վաճա-
ռականութե՛ ծագեցաւ և մէծ հարստութե՛ :

ՊԱՐՏԻՉԱԿԱՆ ՀՆԱՐԺ

ԵՒ ԴԱՐՄԱՆՔ

ԳԼ. Ա.

Ե՞ր պողե քեսաէ հասցընէլ :

Անդրէաս Վնթայկ ըսած անգղիա-
ցի նոր հեղինակը, շատ փորձեց նոր տե-
սակ պտղոց դուրս հանել, բայց ինչպէս
ըրածը ծածուկ պահեց, բաց ՚ի խընձո-
րին խաւողին և դեղձին փորձերէն, որ
գրով տօւաւ : Երբ որ կուղես ունե-
նալ, կըսէ, մէկ տարբեր պտուղմը,
ալէտքէ որ մըտցընես ծաղկին մէջի փո-
շին մէկ ուրիշ պտուղի ծաղկի մը մէջ,
որպէս զի աճի . թէ որ տարբեր յատ-
կութէն և մէծուն պտղոց ծաղկի փոշի
ըլլայ, պէտք է որ մտցընես փոշին պզտի
տեսակի ծաղկին՝ մէծին մէջը . զի փոր-
ձուած է, որ պտուղը գրեթէ միշտ
քեղմնաւորին յատկութիւն կառնէ, աս
քանի մը օր առաջ չի բացված ընելու

է : « Առ տեսակ գտած դեղձին կուտը
Երբ որ Երկու նուշ ունենայ , փորձեց
Հեղինակս , որ վար տեսակի պլտուղ
կուտայ , հապա պէտք է որ մեծկակը
և լաւ հասածինը տընկըվի :

Առաջնակ Հարդ հասցնել :

Վարդի ծառը տընկէ մօտ ոստղի
թուփին քովը կմզ զոստղն (ըստ տաճ-
կաց էօքսէ) վարդի ծառին քովը , հա-
նէ քիչմը կՃեպը թէ մէկին և թէ մե-
կալին , միացուր կպուր մէկտեղ Երկու-
քին կամ շատերուն Ճիւղերը , և դիր
կըտրը վաճառած խոտը կամ չիմէնը ,
Ետքը կապէ և ծեփէ հողով , Երբ որ
արմատ ձըգէ՝ կըտրէ նորէն տընկէ ,
այսպէս կուտայ կանաչ վարդ :

Առինի Հարդ :

Պէտք է տնկած ունենալ տակ մը
այսինքն բանՃար մը մօտ վարդի ծա-
ռին , անցուր մէկ Ճիւղը վարդի ծա-
ռին բանՃարին մէջէն , հողով ծածկէ՝
Երբոր արմատ ձգէ՝ նորէն հանէ տնկէ :

Դաւիթի վարդ :

Անկար աշխաղը վարդի ծառին անցուը
ստեպղինին այսինքն հավուաշին մէջէն,
մնացածը վերինին պէս ըրեւ :

Հետանդ ծառը էամ զիոնց ծառին
բժշկել :

Ոստըկե ասլականած մասերը կը ձե-
պին, ու ապա քսէ հոն բեւեկնի այս-
ինքն թիրէմէնթին խէժը արեւու տաքին
ատենը, քիչ ատենէն ետքը կը տեսնես
քսած տեղանքդ լաքքայով ծածկած
որ կարգելէ օդին մուտը, և ծառը
կունենայ նոր ուժ մը . այս կերպովս
կողջընցնեն հիւանդ ծառերը, որոնց
տերեները դեղնած էին, նաև ան
ծառերը որ գարնան ատենը տերենին
թափած էին, նորէն կողջընցունեն մէկ
տարվան մէջը :

Թարեւ ծառին էամ պէրեւներուն վրայ
եղած նընթարները :

Ծաթւուան ածխական այսինքն քէօ-
միւր քէզապին մէկ հատիկ դեղէ, աս

բանիս համար . բայց դիւրին ըլլալու
համար տեղ տեղ կրակ վառէ ասդին
անդին պարտէզին մէջը բոլոր գիշեր-
վան ատենը , որուն մըխովն կըկոտրատին
ծառին վըրայի որդունքները :

Պ արտել զւեմարտւ պէօմէիները :

Փորձվեցաւ , որ Փըշխըյին ջրովը կը-
ջարգըմին պարտէզին կամ հողին մէջի-
եղած ժըժմունքները կամ որդունքնե-
րը . նաև մըջմունքները այսինքն խա-
ռընձաները են . թէ որ աս ջրովս ջրո-
տեն պարտէզը :

Պ արտել զեմարտւ պէօմէիները , այսինքն սայլանիօկ-
ները և սիւմարտւ պէօմէին և ուրիշ որ-
տերը կամ ճմիները :

Ուն որ ջրոտես երկերը չորս տիրչէմ
իւղ արջասապի այսինքն զաջեաղիխառ-
նած անձրեսի ջրով , քանի մը ժամէն
ետքը որդունքը , ու սողունքները երբ
որ կելլան երկրէն և ջրոտած հողին
վըրայ ժուռ կուգան կըսատկին . աս
կերպովս կըընայ ջրոտվիլ մէկ մեծ եր-
կիր մը , հինգ օխայ ուկէս արջասապի

եղը շատ անձրեսի ջրով խաւնած ըլ-
լալով :

Ո՞ադրել պաղապու- ծառերը գարնան
արևնը :

Հօլանտացիք դարնան ատենը կը-
մաքրեն զբոսերը որ եօսունները ծա-
ռոց կՃշալին վրայէն կրի որ քիրէՃի
ջրով, որ կուտէ բոսը, վնաս մը չխտա-
լով կեղեներուն :

Պապրասպուտի հողուն գեղեցին բարդ այսինքն
զանձնէր ծաղիներ հասցենը համար, ամե-
նայն պէսակ ծաղիանց :

Աեծ փոս մը կը փորեն չորս հինգ
ոտնաչափ խորունկ, բարձրցած երկը ի-
մը վրայ, որպէս զի անձրեսի ջուրը
չըկրնայ մանալ հոն . և կը լեցնեն հե-
տեեալ ըսածներէս ամմեն մեկէն հա-
ւասար բաժինով :

1. Կովու կամ ոչխարի թրիք այ-
սինքն ֆըշիը, ըստըկած ըլլալով յար-
դէն այսինքն սամանէն :

2. Պարձածած փոշի վայրի կաղինի
(բալամուտին) :

3. ԽԱԾՈՒՐԴԻՆ ՇՐԵՐ ՄՐՅԱՆԻԲԻՆ ՎՈՐԱԾ
ՀՈՂԸ որ ԺՈՂՎԱԾ է Պաշտերէն :
4. ՅՈՒԵՓ ԱՅՍԻՆՔՆ ՔԵՓԵՐ :
5. ԼՈՎԻ ԱՐՈւՆ :
6. ՎԱՌՆԵց ՀԵՏ ալ ԿՐԽՄԱՌՆԵՆ ԿԱ-
ԶԻՅԻ ԿՏՈՐՎԱԾՆՔՆԵՐ :
7. ՈՍԹՈՒԵԼԻ ԱՅՍԻՆՔՆ ԸՍԹՈՒԻՄԵԱՅԻ
ՃԵԾԱԾ ԿՃԵՎԱՆՔՆԵՐ :
8. ՆՐԱՌԵ ԹԱՓԻԱԾ ՄԵՐԱՆԵՐ :
9. ԼԱՎԾԻՒՐԻ ԱՅՍԻՆՔՆ ԱՊՈՎՅՆՈՒՎԻ ԿՐ-
ՄՈՐՎԱԾՆՔ :
10. ՎՆԴԻ ԱՅՍԻՆՔՆ ՊԱռԼԱՅԻ ՀՈՂ :
ՎԱՌՆԵց մով կրլեցնեն, յետոյ կրծած-
կեն փոսը ձիու ֆրշխըով և չայիրով,
և կրթողուն որ հանգչի տարիյի մը
չափ, անկէ ետքը կրքանան, կրխմառնեն
այսինքն չափալամիշ կրնեն . և նորէն
կրդոցեն, վեց ամսէ վեց ամիս ասանկ
կրնեն մինչև երեք տարի, որպէս զի ար-
տադրութե զօրութիւնը աղէկ աճի,
և երբեմն երբեմնալշատ ջուրով խառ-
նած թթւուտով մը, այսինքն քէզա-
պով մը կրջրոտեն ան միջոցներուն մէ-
ջը, ետքը երբոր աս տեղս ցանվի ծաղ-
կի հընտեր, բարդ կըքումնի :

ՕՐԱԿՀԵՐԵՆԵԼ ՃԱՊԻՇՆԵՐՈՒՄ ԱՐԵՆԵՐԸ ՅԵ-
ՄԵԴԱՎԱՆ արքենը , պահը մէջ :

ԱԿ շիշէիմը այսինքն պուխալի մը
մէջ լեցուր անուշ ջուր . 32 տրէմ շընչ
բորակ այսինքն կիւվերմիլէ , 8 տրէմ
հասարակ աղ , 4 տրէմ ածխակ բօթա-
ծական որ իտալէրէն կըսվի սալ տի
թառթառօ , ասոնք աղէկմը շիշէյին
մէջի ջուրին հետ հալած պահվի , և երբ
որ պիտի ջուր տաս սոխերուն , 10 կամ
12 կաթիլ խառնէ աս ջուրէս հասարակ
ջրի մէջ , և անով ջրոտէ , աս կերպովս
շուտ կըծաղկին սոխերը :

ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ ՀՆԱՐՔ :

ԳԼ. Բ.

ԱԵՐՊ պահելու զարգենը հողին մէջը 'ի գորո-
ւէ և առադաբէր ընելու զանի :

Բնկերական ջանքը Շիխ գաւառին
գաղղիոյ հրատարակեց զմիջոց մը աս
բանիս համար , որ շատ անդամ փոր-
ձրված է գործառնեայ ըլլալը . պէտք է
կըսէ նախ մարել զկենդանի կիրը քիւ



664-86

ջըռով, և յետոյ տարածել զանի շատ
ջրով, համեմատուիլ ըլլայ մէկ օխայ
կրին 15 օխայ ջուր ամէն մէկ չափու
ցորենին որ կրնայ թրջըվիլ այսչափ
ջրով, այնպէս որ երբ լեցնես բաժին
մը ցորեն այս կաթնանման ջրիս մէջ և
լաւ մը խառնես անցնի երկու մատիդ
Ճեղքէն : Խսկ այս ջրիս վըրայ լողա-
ցած ցորենները տկար է վերցմէր և զա-
տէ ժողվէ . ցորենը աս ջրիս մէջ մէկ
քառորդի չափ կենալէն և միշտ խառ-
նելէն ետեւ հանէ դիր մէկ սէփեթի
մէջ որ ցամքի , և յետ չորցնելէն սեր-
մանէ . թէ որ չունիս կիր, կրնաս անոր
տեղը գործածել լՃի ջուր , ֆշլլյի
ջուր , արդ այս կերպովս պատրաստած
սերմանած ցորենը շատ կուտայ , չի
փըթտիր հողին տակը և չոջլոտիր և
մանաւանդ ընտիր և ուժով աղէկ ցո-
րեն կըլլայ :

Ալեքար մահրելու սորենին ոջելները :

Ջորենին շտեմարանին (ամսլարին)
մէջը լեցմէր ձիոյն ուտելու խոտե-
լէն , և պահէ տասն ամիս , միայն թէ
լաւ պէտք է նայիլ որ ըրլլայ մէջը ցո-

լենին, գարիբն և հաճարին հատեր, յետ տասն ամիսէն պարապէ զլսոտը, և լից տեղը ցորեն, այս կերպովս ցեցակեր ըրլար ցորենը :

Ուշ որ ցորենդ ոջլոտերէ՝ դիր քըթանին կանանչ խուրձերը (յոէմէթները). Հետ ժամ կենալէն ետեւ վերցներ ձգէ զանի վաղուկ ջրին մէջը, որ վրան ելած Ճճիները ջըրին մէջը թափին. ասանկ ըրէ քանի մի անդամ մինչեւ մաքրի ցորենը իր ոջիլներէն :

Ո՞ւշոց պահելու զնանիս ցորենին և ուրիշ ծառերուն պէրհները՝ լույսուներէն, մուհիներէն, և լուլուներէն :

Ուինկայ չոր ձուկին զըլուխներուն մէջը լեցնելով խէժ անուշատրի, (ֆո՛՛) կօմմա ամմօնիակա (տՃ՛՛) շէյթան փոխի ըսած խէժէն որ շատ գէշ կըհստի, և անցնելով զանոնք մէյմէկ փոքրիկ դաւազանի վըրայ, կըտընկեն այնչափ բարձր որ հասնի պտղոց կմթերեներուն մօտ, և ալ անդին չանցնի. ասոնց մէ ելած գէշ հոտը չի թողուր որ մօտենան ըսած կենդանիները. սոյնս պէտք է ընել սկիզբէն մինչեւ 'ի վերջն, արդ

ուր որ ասըսած ձուկը որ չի կայ, կը ք-
նայ անոր տեղը գործածվիլ ըռո օդ ձու-
կին գլուխը, կամ այլ ուրիշ գէշ հոտ
ունեցօղ չոր գըլուխը, թէե գետի
ձուկ ըլլայ՝ չէ փոյթ :

Տնիագործել պիտին բաշիլ (Առանքել) :

Ես տեսակ բողկին, որ կըսվի ֆռան-
սըզ թուռփի, ազնիւ է, և իրեք կերպ
կայ, կարմիր, մանուշակագոյն այսինքն
մօռ, և ճերմակ: Վեչէլէնմիշ ըլլալու-
համար պէտք է բացօթեայ տեղ մը շի-
նել մէկ ամուր սէտիր մը դետի աւա-
զով: յետոյ պըզտի կըլոր փայտով մը
ծակծըկել զանի: և որոնց ամէն մէկուն
մէջը դնելու է մէյմէկ հունտ բողկի,
աս հունտերը աղէկ ընտրած որ ըլլան՝
ամմէնը կըբռնեն, և բուսած բողկե-
րը կըլլան աղէկ թափանցիկ և դիւ-
րաբեկ, այսինքն կէվրէկ :

Բաժշնել պիտանութել ծառին :

Ծառերը շատ անգամ որ կըչոր-
նան՝ է մէկ հիւանդուն մը պատճառաւ,
որ գլխաւորապէս առաջ կուգայ ար-

մատին (քեօքին) որդնակեր ըլլալէն,
որոյ դեղը փորձըված է որ խոզին Փըշ-
խըն է . զի աս խոզի Փըշխըյով որ
ծառին տակը բուծանես (ակսլէմիշ-
ընես) կըթքշկի ծառը և կառողջա-
նայ :

Ածլիեւ զբորպառահը ոչիաբներուն :

Ավեյոն նահանգին մէջը դիւրին
կըթքշկեն զոչխարներուն բորը խըմցը-
նելով անոնց արմատի մը եփած ջու-
րը, որ լու լատ¹¹, կըսվի վեռաթռում
ալպում, կմ ագթագա ըսրիգաթա :

ԳԻՒՂԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ (ԻՏԱՐԵ)

ԳԼ. Գ.

ԱԵՐՊ ՊԱՀԵԼՌ ԿԺՆԵԲԵԼԸ (Գուշ Գօնմակը)
ՅԵԿԱՆ Համար :

Ազէկ հասուն ծնեբեկները կըտրելէն
ետեւ կըլուանան լաւ մը և կըցամքեցը-
նեն լաթով մը, որ չի մընայ վրանին
ոչ աւագ, ոչ հող . յետոյ ամէն մէկ
ծընեբեկը զատ զատ կաղոտեն, մինչե-

տակի կտրած գինալ՝ և յիսսուն յիս-
 սուն ծընեթեկ խուրձ (տէմէթ) կըկա-
 պեն լայն սէզով (սազով) և լաւ մը
 կըքոլորեն աս խուրձերը խէլ մը չոր
 աղէկ ալուրին մէջը, որուն վեցերորդ
 մասին չափ հետը խառնած է աղէկ
 փոշի եղած՝ չոր հասարակ աղ. և յե-
 տոյ ամեն մէկ խուրձը զատ զատ կըպա-
 տեն դանկի թանձրութ՝ աղէկ մայան
 եկած հացի կերպ խմորի մէջ, կըդը-
 նեն արեւը որ չորնայ, զգուշանալով որ
 չի քակվին, և մէջերնին օդ չիմընայ .
 և խիստ յետոյ ամուր մը կըտեղաւո-
 րեն տակառի կմթակոյկի, (քիւփի)
 մէջ, և անոր բերանը հալած ձիւթով
 (զիֆտով) կըծեփեն, և կըդընեն չոր
 տեղ մը . և ձըմեռվան ատենը որչափ
 որ պէտք ըլլայ կըհանեն անկէ և կը-
 դընէն մէկ ժամու չափ ջրի մէջ, և ա-
 պա կըխաշեն, կըլլայ ընտոր է նոր
 կտրած ծնեթեկը գարնան ատենը . թէ-
 պէտ չիկայ աղէկ ծնեթեկ ըստամպօլ,
 ուստի աս կերպով պահելու ալ հար-
 կաւորութի չիկայ, բայց կարելի է որ
 մէկը արթնալով ուրիշ բան կուզէ
 պահել աս կերպովս, թող որ հայաս-
 տան շատ աղէկները կան :

Պահել պահանջն այսինքն շեքառեն :

Դեղձը կըպատեն բարակ ու մաքուր
քթանով, ապա կըթաթխեն հալած
ու դաղջ դեղին մեղքեմոմին մէջը, և
կըհանեն անկէ՝ որ չորս դին աղեղի պա-
տած է մոմէ կճեպով. և յետոյ կը-
պահեն չոր տեղ մը. աս կերպովս գրսի
օդը կարօղ չէ ապականել դեղձը . և
կընայ հեռու տեղեր աւ խըրկըւիլ:
Խսանկ է հաւկիթը . դեղին մեղքամո-
մին մէջը թաթխելով երկան ատեն կը-
պահվի և չաւրիը :

Պահել պահանջներ ընդեղէններ և այլ ուրիշ
բաններ :

Յանձնըվեցաւ քաջալերական այս-
ինքն խայրէթի ընկերուէն քանի մի
քիմիագէտներուն՝ քննել տնկական և
կենդանական գոյացութիները , որոնք
աւելի ութ ամիսէն հետէ պահած էին,
ու ատեանին այսինքն տիվանին առջին
դրած , ըսած բաներս էին ու խաշած
միս , Է պիրեան , գ կաթ , դ մածուն ,
Է ոլուն այսինքն պիղէլեայ , Ղ բակլայ ,
Է կեռաս այսինքն քիրազ , Է ծիրան

այսինքն խայիսի , թ ֆուէնկ իւղիւմիւի
ջուր , չ մորմենի : Ա սոնց ամէն մէկը
պահված էր մէյմէկ շիշէյի մէջ , և
աղէկմը բերաննին դոցած , անանկ որ
օդ չիմտնար . երբ որ բացին գտան
զամէն մէկը թարմ այսինքն թաղէ .
ու համերնին տեղերնին , ինչպէս որ
պէտք է :

Փարէզ բերանը դոց պութէլի մէջ
թարմ ոլոռն շատ կըծախվի ձմեռվան
ատենը . և է թարմ՝ ընտոր ժամանա-
կինը :

Ա լանը շատ արտէն պահէլ որ չաւրի :

Դ անի մը օխայ խուէն՝ որ գաղ-
ղիացիք կըսէն ուէյֆոռ՝ բարակ բա-
րակ այսինքն տիլիմ կըջարդեն , ու իր
ծանրութենը հաւասար ջրով կըդընեն
եղջերեայ շիշէ ամանի այսինքն իմակի-
կի մէջ , և կըհանեն շոգիացնելով չորս
մասին իրեքը , մեղմ կըակով . զի զան-
դուածը որ ամանին տակն է՝ չայրի և
չիկորսնցընէ իր բարկութիւը այսինքն

1 Խուէն ըստածը հառատալի պէս քէսկին՝ իսո-
չոր թուռփի նման է :

քեսկինութիւն . ասլա ելած ոգիքը՝ ո՞ր
ունի մէկ անուշադրի հոտ մը՝ շիշէ անօ-
թի մէջ դնելով ու լաւ մը դոցելով ,
տարիյի չափ կըպահէն , անանկ որ ան
հոտը չի թռաչի : Ուշ որ ամուվան ատե-
նը կուղեն որ պահէն զկաթը 8 , կմ 10
օր , կըդընէն մէկ դըդալի չափ մէկ
խօվայ կաթին մէջը աս վերի շինած
ջուրէս և կըխառնէն . աս կերպովս
կըպահվի կաթը քաց տեղ և բերանը
քաց մնալով . որոտումի կամ փոթորկի
ատեն ալ չի կըտրած կըմընայ :

Այս փորձս շատ անգամ փորձըված
է , ու դիտուած ալ է՝ որ աս ջուրս կը-
հեռացնէ օդին որդերը կէս օր ատե-
նին , և ինչ որ գէշ համ ալ կուտայ
նէ կաթին աս ջուրս , չորս հինգ օրուան
մէջը կանցնի :

Զել եղին աեղը բըտնէ մէ ուրեշել հը :

Կերմանիայի մէջ ձէթ եղը սուղ
ըլլալով , մէկը կըհանէ եղ մը կաղամըի
այսինքն լահանայի հունտէն , որ քըն-
նըվեցաւ Պէոլին մայրաքաղաքին մէջը ,
թէ աս եղս գեղին գունովը և թէ մա-
քրութը , հաւասար է նուրբ եղերուն .

ըունի հոտմը , և ունի նուշի համ մը .
կըքնայ ձեթ եղի տեղ գործածվիլ , թէ
աղցանի մէջ , ու թէ զանազան կերակ-
րոյ մէջ . աս յատկուիս ալ ունի որ ,
կանթեղի մէջ պայծառ բոց կուտայ ,
և ծուխ այսինքն իս չփտար . և քան
զուրիշ եղերէն քիչ կերթայ մի և նոյն
ժամանակի մէջ :

Ա աշբել ապահանած էամ հոգած Ծուրը :

Ա ըջասպը այսինքն զաջի խըպըըզը
դիք քուրայի այսինքն բօթայի մէջ ,
ու այրէն մինչեւ որ կարմըի , ետքը զա-
նի ջրովլ լաւ մը հարէ ու ապա թղթէ
քամէ . աս քամած ջուրէս կաթիլ կա-
թիլ կմ քիչ քիչ լեցուը հոտած ջրին
մէջը , հոտը շուտովլ մը կանցնի . ջուրն
ալ կարմըուի մը կունենայ , բայց ետքը
քիչ քիչ տակը կընըստի և կըպայծա-
ռանայ , կըմաքըի , գունը կերթայ , ա-
ղէկ համ կունենայ : Ունէ որ պատահ-
մամբ շատ փախած ըլլայ դրած ջուրդ ,
և համը փոխված ըլլայ , կընայ անցնիլ
շուտ մը դնելովլ մէջը 16 տրէմ բօթաս
այսինքն մոքուր մսխրաղ ամմէն մէկ
տակառին (Քչիյին) մէջը :

ՊԵռ [ՃՈՂԵ քիմիագետն խրատ կու-
տայ որ, ջրին մէջը պահես պողպատի
այսինքն չելիկի կըտոր մը, որ չիհոսի
ջուրը. զի պողպատին մէջը ածուխը ըւ-
լալով կըպահէ ասլականութենէ զջու-
րը, զի փտուե դէմ է ածուխը այս-
ինքն քէօմիւրը:

Ա օքլէնը իր դասատուութե մէջը
մէկ ուրիշ փորձ մը ըրաւ մեր առջեւը.
Հոտած ջրի մէջ դնելով քիչմը ածու-
խի փոշի՝ լաւ մը յուզեց (չալխամիշ
ըրաւ), ետքը թղթէ անցուց, ոչ դէշ
հոտը և ոչ դէշ համը մնաց ջրին. Թէ
միս թէ ձուկ կուզես որ պահես և ցի-
վախնաս որ հոտի, ածուխի փոշիյի
մէջ պահէ։ Ես բանըս շատ պէտք է
նաւու մէջ։

ՊԵՐՄԻ ՋՇԵՐԸ ԿՄԵԼ:

Գ ուրն որչափ որ պղտոր ըլլայ, 1000
հօխային բաւական է 2 տրէմ պաղլե-
ղի (շապի) փոշի մէջը ձըգես ու խառ-
նես, և թողուս որ զտի (տուռուլմիշ
ըլլայ). զի դրած պաղլեղդ կըմիանայ
ցեխին (չամուռին) հետ, ու ամանին
տակը կընըստի. և մի վախնար որ պաղ-

Եղը ջուրին մէջը կըմընայ , թէ որ չա-
փազանց ըրլլայ :

Տնիական եղբակ հայրել :

Փռանսայ ձէթ եղը կըմաքրեն , և
կըբերեն Պստանպօլ ալ և ուրիշ քա-
ղաքներ ալ կըտանին կըծախեն , որ
շատ մաքուր եղ է և մարդու վսաս չի-
տար . և աս կերպովս կընեն . 2 տրէմ
թթւուտն (զաջ եաղին) քիչ քիչ լեց-
նելով կըխառնեն 48 տրէմ անուշ ջրի
մէջ . ետքը վրան 180 տրէմ եղ կըլեցը-
նեն . 24 ժամը քանի անդամ մը կը-
թօթվեն լաւ մը քանի մը ըոսկէ՝ մինչեւ
որ կաթի պէս ըլլայ . ետքը բերանը
գոցելով կըթողուն 8 օր՝ որ աղէկ մը
հանդչի և եղը երեսը ելլէ , որ կըժող-
վեն ըզգուշուր մաքուր եղը . և աս եղը
ոչ համ ունի և ոչ հոտ , որ խիստ պա-
տուական է գործածելու համար . թէ
կերակրի մէջ , թէ սեղանի վերայ , և
թէ ուրիշ մեքենական ալիհեստներու .
զի բարակ է շատ , և ուշ ալ կըսառի .
Պայց ինձ կերենայ որ յետոյ դինիի
ոգիքով ալ յուզես արհեստի համար
ալ աղէկ կըլլայ . զի իր ձիւթական

գոյացութիւնը՝ ողիքին հետ միանայ,
 և եղին զատվի : Ի՞իչ ատեն է որ
 Շէվուեօլը, որ իմ վարպետս էր՝ քի-
 միական դիտութե, հնարեց սքանչելի
 կերպմը, եղին ձիւթը զատելու, որով
 չիսառիր . կակուղ կապուտ թղթին
 թերթերը եղին մէջ ընկղմելով, յե-
 տոյ քամեց մամուլով զթղթերը, վա-
 զած եղը տեսաւ որ չի սառիր, որ ժա-
 մագործաց (սահաթաճիներուն) շատ
 հարկաւոր է . ձեթ եղը իր մէջը մածու-
 ցիկ նիւթմը ունի, որ ցուրտ ատենը
 կըսառի . և երբոր աս նիւթը զատվի
 եղին, եղը չի սառիր, և չի թանձրանար
 գործիքներուն բանվելու ատենը : Ուս-
 տի ձեթ եղը առաջ ջրով եփէ, ետքը
 ծծմբական թթուուտին ջրովը (որ ե-
 ղին տասնըվեցերորդ մասը պիտի ըլ-
 լայ) յուզէ (չալխայէ) երբեմն եր-
 բեմն, որ եղին մէջի օտար նիւթը ու-
 տէ, և պահէ քիչմը ատեն . ետքը աս
 թթուուտը եղին զատելու համար՝ չոր-
 ցուցած և մանը փոշի եղած դէպէշիր
 ձգէ մէջը : Դէպէշիրին տեղը չոր մոխ-
 րադ (բօթաս) ալ կընայ գործած-
 վիլ . 24 ժամսպասէ որ հանգչի : Այս
 կերպով մաքրած եղը սահաթաճիներուն

և ուրիշարհեստաւորաց հարկաւոր է :

Ուրիշ հերոհները :

Վեկ խանթար եղին համար 25 օնցա պաղլեղ լուծէ 1410 տրամ տաք ջրի մէջ, եղը մէջը դիր խառնէ կէս ժամի չափ . ետքը 15 օնցա զօրաւոր ժանտաջուր (կիւվերտիլէի քէզապ) դիր մէջը խառնէ . թող 48 ժամ որ հանգչլի . յետոյ մզէ (սիւզմիշըրէ) մաքուր եղը : Վնացած ջուրը ուրիշ եղի ալ կընայ գործածվիլ :

Ըստանեայի գինիյին նմանցնելու հերո :

Ֆրէնկ իւզիւմիյին ջուրը եփէ շուսի թանձրութի բերելով . յետոյ դիր մէկ շիշէի մէջ ու բերանը դոց պահէ . աս շուօպէս երկերկու թքալամմէն մէկ նեղկուկ պուխալ շիշէի մէջ եղած աղէկ ճերմակ գինիյին մէջը դիր և բերանը աղէկ մը դոցելով մաղազայի մէջ պառկուկ պահէ . և երբեմն յուղէ (չալխամիշըրէ .) և սկատք եղած ատենը բերանը բանասնէ՝ օդը կըտեսնէ և կըսկսի վրփրիլ Ըստանեա գի-

նիյի պէս, և զբէթէ տարբերութիւն
չունի անկեց :

Ուրել Էթրու Ը ամբանեայ Գինի շինել:

Կոր շրային որ դեռ եռալին չէ դադ-
րեր, դրի իրեք կամ չորս թքալի չափ-
հին Ճերմակ գինիյի մէջ, և մէկ պղտի
թքալմը լեցուն շաքար ալ մէկտեղ .
ամմենքը մէկ պուխալի մէջ դնելով լաւ
մը գոցեցի բերանը մանթարով, յետոյ
ձիւթով պատեցի, և երկթի թելով
ալ սինդեցի, և դրի գլխի վար մաղա-
զայի մէջ . և ամովան ատենը բացի
բերանը որ փրփրեցաւ ընտոր Ը ամ-
բանեայի գինին՝ նմանապէս համը հո-
տը անոր պէս ըլլալով :

Փոշի ժայիտուր :

Խելմը գուէմ թառթառ ըսած ա-
ղին առ . ու զօրաւոր քացախով թըր-
ջէ, չորցուր, ասանկ չորս հինգ անգամ
ընելով, ետքը փոշի ըրէ ու սլահէ շի-
շէյի մէջ . և երբ որ պէտք ըլլայ նէ,
մէկ գաւաթ գինիյի մէջ կամ գարօ-
ղիյի (առփայ սույութի) մէջ դի՞ք մէկ

անուշի թըքալով մը աս փոշիյէս, ու
գործածէ քացախի տեղ, նաև 8 տրեմ
ջրի մէջ 1 տրէմ աս փոշիէս թէ որ
դնես՝ բաւական քացախ կըլլայ. աս
փոշիս շատ աղէկ է Ճամբորդներու հա-
մար :

Ի՞նտիբ ժայռին բուհել:

Օ անազան կերպով կըքոնեն քա-
ցախ, բայց Փուանցայի Տօռլէան գա-
ւառին գործատան կերպը ամենէն պա-
տուական է :

Կըպատրաստեն 400 օխանոց տակառ
մը, որուն քացախով գործածվածը ա-
ւելի յարգի (այսինքն մախալուլ) է. աս
տակառս ունի պըզտի ծակ մը, որ
միշտ բաց կենալու է. եղած տեղը ա-
մառը կըբակ պէտքը չէ, ձմեռը 18
կամ 20 աստիճան տաքութի տալու
չափ կըակ վառել հարկաւոր է: Ո՞ե-
տոյ ամմէն մէկ հօխայ քացախի մարին
վրայ կըլեցընեն 100, հօխայ եռացեալ
լաւ քացախ, և ութ օր ետքը 10 հօ-
խայ իստակ՝ դինի կաւելցնեն մէջը,

1 Այս գինին եղած տակառին տակը դրած է

դարձեալ՝ ութը օրէն ետքնալ 10 հօ-
խայ գինի կաւելցնեն, ասանկ ութ օրէ
ութ օր տասնական հօխայ գինի կըլեց-
նեն մինչև որ լեցվի մեծ տակառը • լեց-
վելեն տասնը հինգ օր ետքը՝ քացախը
եղած է : Ահօը կըպարպեն, ու վըրան
նորէն 10 հօխայ գինի կաւելցնեն, և
նորէն ութ օրէն ութ օր ինչպէս վերը
ըսինք : Բայց երբեմն կըլլայ որ ըսա-
ծէս աւելի կամպակաս կըլեցնեն՝ գի-
նիյին խըմորելոյն չափը նայելով • ասի
Ճանչնալու համար կըխոթեն քացա-
խին մէջը մէկ աման մը ու երբ վեր
կառնեն՝ որ շատ փրփուրով լըցուած
է, կըդատեն որ, շատ գինի պէտք է
աւելցընել մէջը, թէ պակաս :

Կարմիր քացախը թէ որ շատ ան-
դամ անցնես ածուխի վրայէն շուտով
կըձերմըկի . 10, կմ 15, հօխայ քացա-
խը իստակ ընելու համար բաւական է
որ մէջը դընես մէկ գաւաթ մը տաք
կաթ ու խառնես աղէկմը, ետքը տոր-
տէն (թոռթույէն) կըզատես համը
տեղը ըլլալով :

Խելմը ըհլամուռ փայտի թալաշէն, որուն վըայ
կընստի գինիյին տորտը, այսինքն թոռթուն :

ԱՌԵՐԵԿ ՀՐՅՈՒ ՄԻՆԵԼ:

Երբ որ լաւ է մեղրը անկի շինած
շրօպնալ շաքարի շինած շրօպին հետ
հաւասար աղէկ է : Գուանցայի մէջ
շաքարին սուզութեան ու քիչութեան
ատենը] օվիտ անունով մէկը ասի շատ
գործածեց . կերպը ասանկ է . կըխառ
նեն 100 մաս աղէկ մեղր, 20 մաս ջուր,
մէկ մաս ու կէս տէպէշիր . 5 մաս ա
ծուխ (քէօմիւր) փոշի եղած, լուա
ցած ու չորցած . հաւկիթի մը Ճերմը
կուց ամէն մէկ հօխայ մեղրին, յետոյ
պէտք է դնել մէկ մեծ ամանի մէջ միա
տեղ մեղրը, ջուրը, աէպէշիրը . ու եր
կու մինութի չափ եռացընելէն յետոյ,
դիր մէջը ածուխը . երկու մինութէն
ալ յետոյ հաւկիթին Ճերմը կուցը՝ հա
րած դրած ջուրիդ երրորդ մասին չափ՝
ուրիշ ջրով դիր ու խառնէ . 2 մինութի
չափ ալ շարունակելով եռացումը . ետ
քը վար առ կըակին վրայէն, ու մէկ
քառորդէն (չէյրէկէն) յետոյ քամէ
շուօպը լաթէն : Եւ մնացած տորտը
դարձեալ լուած տաք ջրով . ու աս ջուրը
նորէն շոգիացուր եփելով մինչեւ որ շուա
պի թանձրութիւն դայ, բայց աս ետքի

առած շուօպդ ունի միշտ մէկ անհաջոյ
համմը : Եթ կըկարծեմ որ տէպէշլրին
տեղը լաւ կըլլայ կիր մարմարոնի (մէռ-
մէռ քիրէցի) դործածելը . ինչու որ՝
թէ որ ձգածդ շափէ դուրս ըլլաս կը-
նըստի տակը :

ԱՅՆ ՀԱՇՎԻ ԹԵՂ ԳՈՐԾԱԾԵԼ :

ԱՅՆ ՀԱՇՎԻ ԹԵՂ ՄԱՍՆԱւՈՐ ՀԱՄ-
ՄԸ , որ ախորժելի չէ շատ մարդու . աս
համը անկէ վերցնելու համար , կըհա-
լեցնեն մեղրը , ու կառնեն փըրփուրը
և յետոյ կըկըտրեն շաքարի պէս , ու
վար կառնեն կրակէն . մէջը հինգ վեց
անգամ կարմրցած երկաթի կտորվանք
կամ մեծ դամեր կըձգեն , յետոյ թը-
քալ մը օղի (ըռախի) ամէն մէկ կէս
հօխայ մեղրին կըդնեն : Աս ճամբաս
խիստ սլարդ է , կըվերցնէ զբնական
համը մեղրին . ուստի ասկից եփած ա-
նուշները (ըռէցէները) կըլլայ ախորժ
ընտոր շաքարէ եփածը , ու աւելի ա-
ժան :

Քանակութիւն հացին շատցնել :

Եւ 325 հօխայ մաքուր ալուր, 10
կամ 12 հօխայ խոշոր թէփ, որ կելէ
առաջին անդամ ալուրին հետ աղո-
րիէն (տէյիրմէնէն), եփէ աս թէփս
մէկ ժամու չափ 248 հօխայ ջրով, ու
միշտ խառնէ որ չըլլայ թէ կպչի կաթ-
սային (խաղանին) տակը. յետոյ քա-
մէ խիտ (սըխ) քեկիրէ մը քանի որ
տաք է՝ տորտին վրայ դիր մէկ ծանր
բանմը, որ լաւ մը քամվի և ունեցած
եղնալ դուրս տայ, ետքը դարձեալ
եփէ մինչև որ քիչմը թանձրանայ մօի
ջրի չափ, որ ան ատենը կսկսի տալ
անուշ հոտմը ու համմը, ընտոր թարմ
(թազէ) ցորենին կաթին անուշուիր.
յուղելով (չալսայելով) կըձերմըկի.
ու հացի դոյն կըքերէ, և վրան մէկ դե-
ղին եղմը կըլողայ. աս ասանկ պատ-
րաստ ըլլալով՝ նոյն իրիկունը բռնէ
խմորը (մայան) և առաւտուն շաղվէ
խըմորը աս թէփի ջրովս, առանց ա-
ւելցնելու խմորին մէջը ուրիշ ջռւր.
զէրէ կաւրէ. նոյն տեղը պէտք է շի-
նել և չիփոխել տեղը, զէրէմ կըկոր-
սընցնէ իր որպիսութիւնը ու կըբըսու.

ըի . աս կերպովս կաւելնայ հացը քոր-
սին մէկը . մինչև ալ իրեքին մէկը :

ԽԱՀԵԼԵՎԵ ՀԵՐՊԻՎԼ ՀԱԿ ՀԲՆԵԼ :

Հացը շաղվելու ատենըդ 10 հօխայ
ալուրին տրէմ մը պաղլեղ (շապ) հա-
լեցուր ջրի մէջ ու աս ջուրս դիր մէջը
և անանկ շաղվէ . մայան շատ կուգայ ,
աղէկ կուռի եփած հացը . և շատ ճեր-
մակ ու փափուկ կըլլայ : Ամմէն մէկ 100
տրամ ալուրին , հացը շաղվելու ատե-
նը , խմորին մէջը տասը կամ քսան ցո-
րէն զառազնաթ մանիեղիայի դնես ,
մայան աղէկ և շուտ կուգայ . և հացը
եփած ատենը սունդի պէս կուռի (խա-
պառմիշ կըլլայ) . և վնաս չիտար . ասի
Փարիզ քաղաքը կըդորձածէն :

ՇՐԱԳԸ (Խոմը) ՀԵՂԱԿԵ ՀԱԿԱԾ աՊԷՆԸ և ՊԱՅԺԱՐ ՀԱԿԻ :

Շրագը վառած ատենը չիվաղելու
համար և լուսաւոր վառելու համար
Ճրագ թափած ատենդ 2 հօխայ հա-
լած մաքուր եղին մէջը դիր 2 տրէմի
չափ երած պաղլեղի փոշի և 1 տրէմ ալ

մաքուր կիւվերչիլէ՝ ու անանկ թափե. թափած ճրագդ պինտ կըլլայ. ամըռ. վան ժամանակը՝ բռնած ատենդ չի. պըլշտկիր ձեռքդ և շատ կըդիմանայ ճրագդ և լուսաւոր կըլվառի : Կըլլայ սոսկ պաղլեղով ալ թափել . բայց ես շատ անգամ փորձեցի որ երած պաղլեղով և շնչըռօրակով թափած ճրագը շատ լուսաւոր կըլվառի : Կայ ուրիշ կերպմը որ հետեւեալ կերպովս կըլլայ :

Ճարդէ մոճ նմանցնել մեշրամոմի , և խիստ լուսաւոր հառավելու հերո :

Չարթէ 1240 տրամ ճարպ և դիր ամանով ածուխի կըակի վրայ , և իր կշոքին չորրորդ մասին չափ ջուր լեցուր վրան . զգուշացիր որ չերի և չի սկնայ եփելու ատենդ . աղէկմը հալելէն ետեւ լաթէ անցուր քամէ . ետքը նոյնչափ դարձեալ ջուր դիր ամանին մէջը 5 տրամ շնչըռօրակ (կիւվերչիլէ) և այնչափ մընալ անուշադր (նիշատըր) և 10 տրամ երած պաղլեղ , և նոյն մղած եղը այնչափ եփէ մէկտեղ , մինչ և երեսը երեխ պղալ ջակ (քէօփիւք) և եղին վրայ շիտակ սեր (խայմախ) կա-

պէ . յետոյ դարձեալ մզէ և պահէ :
 Բայց մոմը թափելու համար՝ պէտք
 է նրբաթելքամզակով պատրոյկը (Գի-
 թիլը) պատրաստել . զի որչափ որ թե-
 լը նուրբ է այնչափ ալ համրանքը այս-
 ինքն թելին թիւը շատ կըլլայ , մինչեւ
 որ ուղած հաստութիւնդ գայ . և աս
 թաթիւէ ճարպով հալած քաֆուռի
 մէջ , կամ զօրաւոր գինիի ոգիքի մէջ
 հալած քաֆուռիին թաթիւէ և հանե
 չորցուր :

Դ'երմակ մեղրէ մոմը և ճարպը հա-
 ւասար կամ աւելի բաժինով հալէ՛ մէկ
 տեղ՝ և յետոյ տաք տաք լեցուր քիչմը
 կաղպարին (մոմի խալիպին) մէջը , և
 ասդին անդին դարձուր ժուռածէ՛ որ
 ամէն դին մալակոնի :

Հարմարէ մէջը վերի շինած պատ-
 րոյկը և մաքրած եղդ հալեցուր մէջը
 թափիէ . և երբոր պաղի՝ քաշէ հանէ՛
 մոմը մէջէն . կըլլայ մեղրամոմի նման
 ճրագ . որ խիստ լուսաւոր կըլլառի , և
 չիվաղէր , և կըդիմանայ :

Ծակ կուղես որ շատ դիմանայ՝ պատ-
 րոյկին կէսը բամզակ , կէսը դերձան
 ըրէ , կամ շինէ՛ պատրոյկ հաւասար բա-
 ժինով բաղադրած դերձան . բուրթ

և բամպակ : Յառւրդ դնելով մէջը մօն
մին քիթը կտրելու շատ հարկ չըլլար :

Օ անօլուս լիւ :

Վզեկ ճրագ շինելու համար , պէտք
է որ ճարպը բաղադրի հաւասար բա-
ժինով կովի , ոչխարի և այծու ճար-
պով :

Իսկ թաթախ մօմի դորձատան կեր-
պով շնելու համար ճրագ՝ հասարակօ-
րէն աւելի կովի ճարպ կըդնեն : Եւ
կաղպարով (խալիպով) թափելու հա-
մար աւելի ոչխարի և այծու ճարպ կը-
դորձածեն :

Ուրեւ իւրու :

Ց720 տրամ ճարպ կտրտած՝ եռա-
ցուր բաւական ջրով . և եփելու ատե-
նը որչափ որ պակսի ջուրը՝ նորէն ա-
ւելցուր . յետոյ լաթէ քամէ , և նորէն
դիր կըակին վրայ և եռացուր կէս
ժամ երկու հօխա ջրով , որին մէջը լու-
ծէ 15 , տրամ պաղլեղ . 19 կամ 20 ,
տրամ մոխրաղ (բօթաս) և 80 տրամ
հասարակ աղ :

Իսկ քան զհասարակ ճրագը կըկին

(Երկու խաթ) դիմանալու համար եփե
1240 տրամ կովի ճարպ . 465 տրամ
ոչխարի ճարպ , բաւական ջրով , որին
մէջը լուծած ըլլայ 2 տրամ ու կէս ա-
նուշադր , 20 տրմ հասարակ աղ և 5
տրամ շնչքորակ : Առմ թափելու ա-
տենդ պատրոյկդ բարակ բռնէ . դեր-
ձանի բուրդի և բամպակի թելով բա-
զադրէ :

Աւերդ հանշայնելու և բարահյնելու
բուն բուրդէ :

Վատ դերմանացի գործավարներ
փորձեցին թէ , էդ այծերը գաշելով
խոյերուն (խոչերուն) , ծնած այծե-
րուն բուրդը կըլլայ կակուղ , փափուկ ,
և բարակ , որ շատ օգտակար կըլլայ
արհեստաւորներուն , Հնտու շալիինը-
մանցելու համար :

ՏԵԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ այսպէս
 ՊԵՂ : ՊԵՂ բարդակ վյանակը
 Պաղեղնել սեհեաիը (օդակի) :

Անգնեցուր խարըսխի մը վ՛ր, որ ու-
 նի 18 մատ բարձրութիւն և 15 մատնա-
 շափ լայնութիւն, կտրած գըլան մը (խու-
 պուռմը), որին տրամագիծը 10 մատ-
 նաչափ և բարձրութիւնը իրեք ոտնա-
 շափ ըլլայ . Լեցուր աս գլանս 14 կամ
 15, հօխայ սառով (պուզով) սենեա-
 կին մեծութեանը նայելով. ներքին 1
 կողմն գլանին բաժանված ըլլայ այս-
 ինքն օջախի կերպով՝ որ է կասկարայով
 մը, որ մինչ ջերմաբեր օդը կըփախի
 դէալ 'ի վայր ուժով, նոյն արագութե-
 նով կըտարածվի սլաղ օդը վարի կող-
 մի ծակերէն սենեկին մէջը, որ կելլէ

¹ Օջախը կըբանի որչափ պաղ օդը կըվալն-
 աէ զաաք օդը դէալ 'ի վեր, հոս անոր ներհա-
 կը կըլլայ . կամ կընաս մտածել թէ սոպային
 վարի կըակին տեղը, վերիդին սառ դրած ըլ-
 լայ վերի մուխին ելլալու տեղը, վարը պաղ օ-
 դը կըտարածի սենեկին մէջը :

սառնոցէն : Հինգ կամ վեց դլանով
զիւռոնտօնը իջեցուց ժամ ու կէս-
վան մէջ, 8 աստիճան ջերմաչափ գոր-
ծին՝ ան օրը որ Փարիզու մէջ ունէր
29 աստիճան բարձրութիւն և սենեակն
ալ էր հարաւի (Լոտոսի) կողմն :

Այսա մէլան (Թոքէտի) շինել :

Ա Եց հարիւր տրամ անձրեխ ջրով
եփէ 8 տրամ մօռ պախամ փայտին
մանրուկը, 16 տրամ խէժի (զամս ա-
ռապիյին) հետ մինչեւ մնայ կէսը . և
դեռ շիպաղած դիր մէջը մէկ տրամ
խառամֆիլ և 24 տրմ քիստորին (մա-
զիին) փոշին . և երբ որ պաղի դիր
մէջը 8 տրամ արջասպին (զանը խըստ-
ուղղի) փոշին . ապա աղէկ մը խառնէ-
ու քիչ մը թող որ տորտը նըստի տա-
կը, և կամաց մը երեսէն առ մելանը
որ շատ պատուական մելան է :

Այսանին և պատշաճներուն բիծերը (լէտէն) հանել :

Բիշմը շաքարի մէջ դամէ իլիմօն
մինչեւ որ թըջի, յետոյ բծաւոր տեղը

անով շրփել, և աղեկ լուս որ մաքրի :
Եթե քիչմը շաքարը իլիմօնի ջրով ե-
փես, երկու եփմը բերելով, աւելի զօ-
րաւոր կըլլայ :

Դարձեալ հանել իստ մելանի բեծը դախակի
և հանդեբի վրայէն :

Աառնեն թթուաւոր ծծմբակի (զաճ
եաղի) մէկ մաս, մէջը կըխառնեն կա-
թիլ կաթիլ 8 մաս անձրեի ջուր . տախ-
տակին բժաւոր տեղը առաջ տաք ջրով
կըշփեն լաթովմը . ետքը քիչմը կըկա-
թեցնեն վրան վերի ըսած ջրէս, և մէկ
ուրիշ լաթովմը կըշփեն աղեկմը նոյն
տեղը . երբ որ չիմընար բիծը, տախ-
տակը կըլուան պարզ ջրով :

Դակ կտաւեղէնները և բրդեղէննե-
րը առաջ կըթաթղեն ջրի մէջ . ետքը
վերի ըսած ջրովս քիչմը կաճըռեն, իս-
կոյն բիծը կերթայ, և պարզ ջրովմը
կըլուան և կըթուեն : Դարձեալ պարզ
եղանակ մընալ կայ պըտղի բիծը հա-
նելու . քիպրիթին ծուխին բռնելով
զլաթեղէնը, այս բիծս թէ կեռասի ըլ-
լայ և թէ ուրիշ պտղոց՝ կելլայ :

Հայուս շագանակով (Ետպան ու Արտանեսիով)
հանել էրաւելինաց բեծերը :

Կառնեն աս տեսակ շագանակին հա-
սունը , որ ծառեն ինքիրեն կըթափի ,
ու կըստըկեն դանակով իր կըճեպ-
ներեն . յետոյ Ճերմակ միսը անկանի
մշջ կըծեծեն մինչեւ որ փոշի ըլլայ . աս
փոշիկս կըքսեն լաթին բծերուն վրայ
կամ աս փոշիօվս կաճռեն . ամէն բի-
ծերը կերթայ դիւրաւ , քան թէ աճա-
ռով (սապոնով) ընեիր :

Եշէ բեծը հանել մշտառեղէն ու բրդեղէն
բեհեղներէն (խումաշներէն) .

Դյեփելով բծաւոր տեղերը բեհեղ-
ներուն ծծող հողովմը , ինչպէս կաւով
(քէֆէ քիլիով) քանի որ չորնայ աս
կաւը եղը իրեն կըքաշէ , յետոյ շփե-
լով մը կըմաքըի . քայց երբ Ճարպով
(մոմ եաղիով) եղած է բիծը կամ ա-
սոր նման քանով , պէտք է կաւը ծե-
փելէն յետոյ կրակով ալ տաքցնել ու
այնակ չորցնել . քանիմը նիւթերու կըր-
նայ գործածվիլ կակուղ թուղթը , տե-
պէշիրը , չոր նիշաստան , թեփը , ու վրայ-

Էն տաքցնել (իւթիւ զարնելով) . մետաքսի կամ բըդի վրայէն եղի բծերը կընայ հանվիլ ալ , գինիյի ոգիքին հետխառնելով լիմօնի կամ դիրէմէնդինի էական ոգիքը , կամ պարզ մէկը միայն և բծաւոր տեղերը ասով թրջելով , ու ապա սպունքով կամ չոր լաթով վրան աղէկ մը շփելով , մինչեւ որ չորնայ :

Պարզեալ հանել մէտաժսէղէն (ճանփէս)
բաներուն բիծերը :

Վետաքսեղէն բաները խոնաւ տեղպահվելով կըբորբոսի (քիւֆլէնմիշ կըլլայ) ու կըբծաւորի . աս բանիս համար կըդնես սըռլը Ճերմակ ամանի մէջ օխայ մը ջուր , 16 տրամ անուշադրի ոգիք (նշատը ոուհի) , ու աս ամանիս մէջ կըթաթխես խումաշը այնպէս որ հաւասարապէս թրջի . և կըթողուս զանի 5 մինութի չափ մէջը , յետոյ կըլուաս իստակ ջրով , չորցընելէն ետեիւթիւլէմիշ կընես , որին գոյնը քիչմը կըմոյգանայ (կըխոյինայ) , բայց կըպահէ իւր աղվորութիւր :

Անգղիացաց հերթով չաշբելու նշան դնել
լավեղնաց վրայ:

Խնը տրամ իմպիկէ ելած ջրով կըհա-
լեն երկու տրամ խէժ արաբիոյ (զամի-
առասլի) և երկու տրամ աղէկ բռու-
սիական բօթաս, որ կըսվի բիւռիւ-
սիաթ տը բօթաս, և աս լուծուն մէջը
կըթաթղեն ծայրը Ճերմակ կըտաւե-
ղէն բաներուն մէկ քառորդի չափ, ետ-
քը վերցնելով անկէ՝ կըչորցնեն, և փըդ-
ոսկըով կամ ապակիով կարծնեն ըզ-
նոյն տեղը: Ենտոյ վրան ինչ ձև նշան
որ կուզեն կըզրեն մէկ տեսակ մելա-
նով՝ որ շինածէ. 8 տրմ գխտոր խո-
շոր ծեծած և կէս ժամու չափ եփած
բաւական ջրով. և յետոյ ասոր մէջը
որ դրած է չորս տրամ արջասպ (զա-
ճը խալրըզ): Այս տեսակ մելանին դի-
րը չավրիր լուացքի ատենը, և սե կը-
մնայ: Խոկ թէ աղածական անադով

1 Անտք պէտք է որ զօրաւոր աղածական
թթուուտի (թուզ ուռուհիյի) մէջ լուծվի,
ոյնչափ որ աս քէզապը կըշատանայ և յետոյ
չոդիացնելով զանի կըմնայ անագը սպիտակ փո-
չի մը, որ քիչ մը ջրի մէջ դնելով գրելու է:

զրես լաթերուն պատրաստած ծայրերուն վրայ, նշանդ կըլլայ կապտագոյն :

Յամայիքի ոօմէն՝ Աբրահամուցի (Թոհի)

հռտը :

Ուօմը է շաքարէն ըախը . իսկ ամերիգային Յամայիք գաւառէն եկածը ամմէնէն լաւ և զօրաւորն է . բայց ունի մէկ մուշկի հոտ մը . ասի վերցնելու համար անկէ, կառնեն անցած կըրակ, և կըդնեն զանի անկանի (հաւանի) մէջ և կըծեծեն մէջը դնելով քանի մը կաթիլ ոօմ, և երբոր աղէկ փոշի կըլլայ, խելմը աս փոշիկս կըդնեն պուխալի մը մէջ և վրան կըլեցնեն ոօմ և անոր բերանը գոցելով կըյուզէն և կըթողուն հինդ բոպէի (թաքիքէի) չափ, յետոյ քիչմը ոօմ թղթէ կըմըզէն՝ ու կընային որ հոտը գացերէ, թէ չէ նորէն կըթոթվէն (չալխայէն) և կըթողուն որ բոլորովին երթայ, ետքը բոլորը կըմըզէն թղթէ և կըպահէն . իսկ ածուխին հետ պըլըշտկած ոօմին վրան քիչ մը ջուր դնելով նորէն շոգիացնելով կըհանեն :

Այսպէս զմբոի ջուրը չը դաստեղի իերուն:

Աս տեսակ մսի ջուրը շատ դիւրունի է ձանքորդներու, և չարշի գացօղ հիւանդկախ մարդիկներուն:

Ասի շինելու համար կառնեն երկու օխայ հորթու այսինքն տանայի ոտքեր, վեց օխայ կովու աղդեր (պուտին) բարակ դիյէն. մէկ օխայ ու կէս հորթու թանձը (լոթ) կտոր միս. հինգ օխայ ոչխարի աղդեր (պուտին) հաստը դիյէն:

Վեփեն աս միսերը մէկտեղ բաւական ջրով և մաղմաղ կրակով, և քէֆը կառնեն. յետ բաւական եփելուն լաթէ կանցնեն աղէկմը սըզմելով. ետքը նորէն ջուր դնելով երկրորդ անգամ կեփեն. յետ աղէկ մը քայքայ ելուն՝ լաթէ կանցընեն սըզմելով, և կըթողուն որ պաղի որպէս զի եղը մէջէն զատեն:

5 կմ 6 հաւկիթի ձերմըկուցով կըկտըեն աս մսի ջուրը որպէս զի զտի. ապա բաւական աղ կըխառնեն, և ձերմակ չուխայէ կանցնեն. և յետոյ նորէն մաղմաղ կրակի վրայ կըդնեն կմբարակ շիշէյով տաք աւազի վրայ կըդնեն մինչեւ որ խիստ թանձըընայ:

ԱՍԿԵՐՁԱԿԱՆ ՀՆԱՐՔ

ԳԼ : Ե :

Ունիելոծեւ պաղպատը (չէլիէլ) Բնիւլիւլ

Հերպով :

Դալեցմւր ոսկին արքայական ։ Թը
թուուտին մէջը . մէկ մաս աս ոսկիա-
ւոր հեղուկէս խառնէ՝ իրեք մաս ա-
զէկ էթէու սիւլֆիւուիկ ըսած ոգիք-
ին հետ , հինգ ըոպէի չափ ատեն թոթ-
վէ աս խառնուրդը որ միաւորի ոսկին
ոգիքին հետ , իսկ թթուուտը կըմնայ
անգոյն զատուած ոսկիէն , ամանին տա-
կը . երեսէն զգուշութը կառնես ոսկի-
աւոր ոգիքը , և երբոր աս ոգիքին մէ-
ջը մէկ ըոպէի չափ ատեն կընկղմես ա-

1 Աս արքայական թթուուտս է մէկ քէզապ
մը բաղադրած 3 մաս կիւվէրջիլէ քէզապիյէն
և մէկ մաս թուղ ուռուհիյէն :

2 Էթէու կըսվի որ հաւասար բաժինով խառ-
նելով դինւոյ ոգիքը և զած եաղին կըհանեն .
և ելածը դարձեալ կըհանեն և կուղղեն . որ
շատ թեթև է քան զլոիման ուռուհին , որ մին-
չե երեսը կըկայնի :

զեկ Ճիշտալը պողպատը, և յետոյ կը-
հանես ու խտակ ջրով կըլըլաս, կը-
տեսնաս որ պողպատդ ոսկեզօծած է և
փայլուն :

¹ Պալաթինաւորբն արշապը և լէգօնը (Դա-
ճը և բերինաճը) :

1 ուծէ այսինքն հալեցուր բլաթինը
արքայական ջրի մէջ աղէկ մը կըշտաց-
նելով. գիր յետոյ մէջը էթէռ սիւլ-
ֆիւռիկ, թոթվէ ուժով մը խառնուր-
դը, ոգիքը կըմիանայ բլաթինի հետը,
ու լուծվածը կունենայ մէկ բաց գե-
ղին գոյնմը. թէ որ ընկղմես արծնած
պողպատը աս լուծութե մէջը, և յե-
տոյ շուտով ջրի մէջ ձգես, հանած ա-
տենդ կըտեսնաս որ բլաթինէ շապիկ
մը վրան պատած է, որ կըպահէ բա-
սոտելէն. աս բլաթինէ շապիկը է թը-
խագոյն. սոյն կերպովս կընաս բլաթի-
նաւորել լէգօնը ժանգէ ու թըթույէ
պահէլու համար :

¹ Բլաթին ըսածը ոսկիէն աւելի ծանը մէկ
մետաղ մի է որ ոչ երբէք կըժանդուի, կրակով
շատ գժուար կըհալի, գոյնը արծաթի պէս Ճեր-
մակ է և քիչ կըփայլի :

ՅԱԼԵՐԻՆԱՊԱՐԵԼ ԿՈՂՈՒԽՅԸ (ՊԱԽԵԾԱԸ) :

Հալեցուր կամ լուծէ զբլաթինը
արքայական¹ ջրին մէջը . ապա իջեցուր
զանի անուշադրի աղով ամանին տա-
կը , ու լաւմը լուալէն յետոյ տակը ի-
ջած բլաթինը , դիր քուրայի մէջ և
ծեփէ բերանը . և թողկէս ժամու չափ
սաստիկ կըակի մէջ , որ աղէկ մը կարմըի
հալոցը . ու վար առնելէն և պաղե-
լէն ետև կըտեսնաս որ բլաթինը թխա-
գոյն կամ մոխրագոյն եղած է՝ խիստ
բարակցած ըլլալուն համար : Այէկ
մասմը աս բլաթինի փոշիէս և 5 մաս
մնդիկ (ժվայ) հետը՝ դիր աղէկ մը տաք-
ցուցած անկանի մէջ զասոնք՝ ու լոսէ
(սահմ ըրէ) մինչև որ թանձր մալա-
կօն ըլլայ . ապա աւելցուր մէջը 2
մաս մնդիկ ալ որ աւելի կակուղ ըլ-
լայ . թէ աս մալակօնս տարածես լաւ
մը պղնձի վրայ , և յետոյ թոցնես սըն-
դիկը կըակով , բլաթինը կըմընայ պը-
ղընձին վրայ կպած :

¹ Արքայական ջուրը՝ բըլաթինին համար՝ ո-
մանք կէսվաիկէս կըխառնեն կիւվէրչիլէի քէ-
զապէն և աղէկ թուղ բուհույէն :

Առ զործողութիւն պատուական ըլլալու համար կըխառնեն մալակօնին մէջը տէպէշիր, քիչմը ջրով թրջած, և անով երկրորդ անգամ մնաւ կըտարածեն պղնձին վրան, յետոյ դարձեալ կըթոցընեն մնդիկը կըակով, որ շատ աղեկ կըլլայ քան առջի անգամը. աս զործողութիւններէս ետև թէ որ լաւ մը արծնես, կըլլայ փայլուն ընտոր արծաթը: Ասի կըբանեցնեն խալայի տեղ կերակրի ամաններուն այսինքն թէն ձիրէններուն սահաններուն վրայ եւ. որ թթուէ չավրիր ու չիժանգոտիր:

Օ ապէլ արծուն բլատէն այսինքն խարժանա արծուն պղնչին վրայէն.

Առ 8 մաս իւղ արջասպի (զամեապի) Ճերմակ ու զօրաւոր, լուծէ մէջը մէկ մաս շնչըորակ (կիւվէրչիլէ) մաքրած, խառնէ կըկին չափ (երկու խաթ) անձրեի ջրի հետ, դիր ապակի (շիշէ) ամանի մէջ բլաքէ եղած պղնձինձ, ու աս ջրէս լեցուր վրան մինչեւ որ աղեկ ծածկէ, և աս ամանս դիր աւազէ բռան վրայ, ու նայէ որ չանցնես տաքութիւն քան Յօ կամ Յօ աս-

տիշան , այսինքն հազիւ թէ ձեռք դի-
մանայ . աս կերպովս արծաթը կըլու-
ծի , ու պղինձը կըմընայ գրեթէ ան-
ջնաս : Իսկ արծաթը զատելու համար
ժանտաջրէն (քէզապէն) հասարակ ա-
ղով կըտացած ջուր լեցուր մէջը մինչեւ
որ աւչիալրդտորի ժանտաջուրը . արծա-
թը կընստի ամանին տակը ընտոր մէկ
շատ ձերմակ տորտմը . որ է արծաթը
միաւորած դրած աղի ջրիդ թթուու-
տին հետ . և քանի լոյս որ տեսնայ , կըս-
կըսի սենալ . իստակ ջուրը երեսէն թա-
փէ , ու դարձեալքանի որ իստակի՝ լե-
ցուր թափէ երեսին ջուրը մինչեւ չորս
հինգ անգամ . ու մինչեւ որ երեսին ջու-
րէն լեզուիդ որ դալցնես աղի կամ
թթու համ չառնես , ան ատենը ցամ-
քըցուր զտորտը , ու խառնէ հետը մա-
քուր բօթաս (սալ տի թառթառօ)
իւր ծանրութեր կրկին չափը . և լից
մէկ քուրայի մէջ , ու վրան ծածկէ հա-
սարակ աղով և այլն :

Ոճէ որ աս քուրան դնես կրակի վրայ
բռան մէջ և կըրակը ետևէ ետև սաստ-
կացնես մինչեւ որ ամմենը միակերպ հե-
ղուկանայ (ջուր կտրի ,) և ապա կրա-
կէն վար առնելով պաղեցնես , ու կոտ-

ըես քուրան՝ կըդըտնաս կլորիկ զան։
զուած մը արծթի, շատ մաքուր, և
աւելի մաքուր է քան զսրմա կիւմիւշին
այսինքն խաս է քան թէ խալէ ելած
ըլլար :

Արծաթ Բլատէ (Խափլամա) չնել ողնջի ու-
երիանի վրայ :

Արծաթ թիթեղը (այսինքն արծաթ
տախտակը) հաստ կամ բարակ պղինձ
տախտակի վր կըդընեն ու մէջը (այս-
ինքն արան) ինչ և իցէ տեսակ մը բա-
րակ լէհիմի կըդընեն կամ քիչմը փոշի
երած պօռայի (թէնէքեարի), կամ
թէ հիչ բանմը չփրած սաստիկ կը-
տաքցընեն զսրմինձը, անկէ ետև կան-
ցընեն աս բլաքէն չիլինտուօյի տակէն
(չառխի տակէն) ինչուկ որ ճղմըվի,
և բոլոր օդը որչափ որ կայ նէ արծա-
թին ու պղինձին մէջը դուրս ելլայ . յե-
տոյ դարձեալ տաք տաք կանցնեն չառ-
խի տակէն մինչեւ որ աստիճան բարա-
կութեան որ կուղէն դայ : Եցրը որ մէկ
արծաթ Յօ պղինձ է՝ Յօ այար կսվի .
ասոր պէս ամ աստիճանը իմացիր :

Աերպմընալ կայ, որ արծաթազո-

ծէն վեր է, և խափլամայէն վար է. ա-
սի կըլլայ՝ երբ որ արծաթէ տերել
(վառախը) սնդկի միջնորդութ կըպցը-
նեն սղնածի վրայ կըակը տալով, բայց
պէտք է առաջ տաք սղինձը¹ թեթև
ժանտաջրի մէջ խոթելու յետոյ մաք-
րել:

Արծաթը խափլամա կըլլայ երկա-
թի վրայ. արծաթին ու երկաթին կմ-
սղնածին մէջ տեղը անագ (խալայ) գոր-
ծածելով. աս կերպովս լաւ կոճակներ
կըշինեն: Ը ատ ատեն չիգայ որ սկսան
ոսկիէ ալ խափլամա բան շինել Փարի-
զի մէջ սլատուական ու աժան քան Խն-
կիլիլինը:

Ո՞ադրել ոսկին և գոյն դաշւ:

Կ մաս թուղլայի փոշի :

1 մաս գօլքօթառ :

1 մաս ծովու աղ:

Խառնէ ամմէնը միատեղ, և դիր մէկ
շար ոսկի և մէկ աս փոշիկս, և հետ
զհետէ նմանապէս, յետոյ վրան ծած-
կէ, և եփէ 16 կամ 18 ժամ:

1 Թեթև ժանտաջուր կըլլայ, երբոր քէզա-
պին մէջը կիսով չափ անուշ ջուր խառնես:

Ունեղօծել պաշտոնակ տառ իւրառակ:

Ոսկեզօծելու պղինձդ շփե՛ լաւ մը
աւազով. քիչմը ատեն դի՞ր տկար ժան-
տաջրին մէջը , որ կէսվակէս հասարակ
ջրով խառնած ըլլայ , հանէ յետոյ և
տաքցուր կրակով՝ որչափ որ պէտք է .
ու չիպաղած ոսկեզառեկը (վառախ
ոսկին) վրան յարմարցուր բամպկէ
խցանքով (թխաճով), արծնէ մասխա-
լայով կամ բախան քարով . աս կերպս
խիստ հաստատուն ըըլլալով՝ այնչափ
յարգի չէ և կտրվի անանկ բաներու
վրայ , որք շատ չեն գործածվիր , և չեն
այնչափ շփման ենթակայ :

Իսկ հաստատուն կերպը սնդիկով
(ժվայով) կըլլայ . առաջ պղինձդ վե-
րի ըսածիս պէս պատրաստէ , յետոյ
ընկղմէ սնդկի տկար լուծութե՛ մէջը ,
այսինքն սնդիկը որ ժանտաջրովկտրած
է , յետոյ մէջը կէսվակէս հասարակ
ջուր խառնած և տկարացած է . կտես-
նես որ պղնձէ բանըդ բոլորովին կըՃեր-
մըկի , հանէ մէջէն և լուած ջրով . յե-
տոյ յարմարցուր վրան շատիկ մը : մա-

1 Աս մալակօնս շինած է 1 մաս ոսկի դա-
3 *

լակօնի հաւասարապէս երբ որ պղմն-
ձիդ մակերևոյթը աղէկ ծածկըված է
մալակօնով, դիր կրակի վրայ, մինչեւ
որ թռչի սնդիկը. թէ որ կրակի վրայ
իքէն պղնձիդ վրան տեսնաս քանի մը
կէտեր, որք չեն աղէկ ծածկըված մա-
լակօնով, տուր վրան նոր շապիկ մնալ:

Երբ որ կուզես որ թանձր ոսկեզօ-
ծած ըլլայ, նորէն խօթէ պղինձդ սնդկի
տկար լուծման մէջը, և յարմարցուր
վրան երկրորդ անգամ մալակօնը ըն-
տոր առաջ ըբիր, և դիր նորէն կրակի
վրայ և այլն, թռցուր սնդիկը. ասանկ
որչափ որ կուզես՝ կրնաս թանձրացնել
ոսկի եալտըզը, և յետոյ արծնէ մաս-
խալայով կամ արենաքարով (ըախան
թաշիով:

Երբ որ ոսկեզօծած բանըդ գեղնա-
գոյն է և կամ աղօտ (տունուխ), կըր-
նաս կենդանացնել ցա աթէշի գոյն մը
տալ ոսկեմոմով, (եալտըզ մոմիով)
որ բաղադրած է գրեթէ հաւասար բա-

ռեկ և դ մաս մաքուր սընդիկ . մէկ քարէ
անկանի մէջ քիչ դնելով յարելով, կամ հա-
լած ոսկիյին մէջ լեցնելով սնդիկը միացուցած
և առա լուսացած :

ժինով՝ հայկաւե՛ (քիլէրմէնի) ժան-
գարե՛ (Ճէնկեառե՛) և 'ի պաղլեղէ (շա-
պէ) և բաւական դեղին մեղրամօմէ .
(խամ սլալմօմիէ) . աս բաղադրութիս
քսելէն ոսկեղօծած բանիդ վրան , և
ասով շըփելէն յետոյ , տաքցուր հա-
լեցնելով՝ մեղրեմօմը վազցընելու հա-
մար :

Երրորդ կերպը ոսկեղօծելոյ պղին-
ձը , կըսվի յօշոտած որ կըլլայ յօշոտե-
լով պղնձին վրան (խըյմալամիշընելով)
անհուն պղտի Ճխկածներ (չըզգներ)
ամմեն դիաց ձրգելով՝ պողպատեղէն
բարակ թիթղունքի պէս դանակով մը ,
ապա յարմարցնելով վրան մինչեւ տա-
սը կամ տասուերկու խաթ ոսկի զա-
ռեկ , որ ան Ճեղքերը ծածկէ . բայց
իրեք կամ չորսն ալ կօգտէ միակերպ
ընելու համար . աս տեսակ ոսկեղօծած
բանը շատ աղվոր է և շատ հաստա-
տուն :

Կայ մէկ ուրիշ կերպ մընալ մետաղ-
ներու վրան ոսկեղօծելու , և մասնա-
ւորապէս արծաթի վրան . շատ մար-
դու ծանօթ է աս , բայց բանի տեղ-
չեն դներ , չպիտնալով պէտք եղած տե-
ղը գործածել :

Ասկին բարքունական ջրի մէջ կըտ-
րէ . թաթղէ մէջը քթան լաթմը , լաւ-
մը ծծելէն ետև երէ ան լաթը և անոր
մօխիրը պահէ . պէտք եղած ատենը
աս մօխիրս քիչմը թրջելով և արձա-
թին վրայ դնելով լաթով մը քըսէ և
շփէ . և կըտեմնաս որ աս մօխիրս կը-
թողու արձաթին վրայ իր ոսկեփոշի-
ները կպչուն , յետոյ լուանալով և մաս-
խալայ ընելով կըփայլի ոսկեգոյնը . աս
կերպովս ոսկեզօծելը շատ աժան կըլ-
լայ և գործ կածի զարդարանաց բա-
ներու վրայ . այսինքն հովանոցի (ել-
քաղէի) ու քթախոտի տուփերուն վը ,
և պղտի չքնաղաշէն զարդերու վրայ ,
որք ուրիշ բան չեն , քան թէ բարակ
արձթէ թիթեղ մը ոսկեզօծած :

Երժանակածել պղինչը առաջ էլլպով :

Պղնձին վրայ մէկ շապիկ մը (խաթ-
մը) արձաթ ծածկելու համար , պէտք
է որ առաջ պղինձը քերթես և խօ-

1 Առքունական ջուր կըսվի 1 մաս աղածա-
կան թթուուտը (թուզ ուսուհին) 3 մաս ժան-
տաջրի մէջը խառնած , կամ կ արամ անուշտ-
դրի աղը 16 տրամ ժանտաջրի մէջ խառնած :

լեւ, հանես Երկրորդական ջրի մէջէն
այսինքն ժանտաջրի մէջէն, որ կիսուա-
կէս հասարակ ջրով խառնած է, յե-
տոյ սպունկ քարով (բոմզայով) ջրի
մէջ բռնելով շփես. Ետքը նորէն տաք-
ցընես պղնձէ բանըդ, ու կատարեալ
շիպաղած թաթղես նոյն Երկրորդա-
կան ջրին մէջը. այնպէս որ ՃըրՃռայ
(Ճղամիշ ըլլայ), յետ աս գործողու-
թիւններուն, պղնձիդ վրայ որչափ որ
խորթուփորթ կըլլայ, այնչափ ալ ա-
ւելի յարմար կըլլայ արծրթէ զառե-
կին (վառախին) հետ միանալու :

Երբ որ բանըդ ասանկ պատրաս-
տած է, դիր Երկթէ կամ պղնձէ կաս-
կարայի վրայ ընտոր մինելի էթէկները
կրակը կուտան, որ կրնայ շարժիլ ու
դառնալ կրակին վրայ դիւրաւ (խօ-
լայ), յետոյ տաքցներ, և Երբ որ կապ-
տագոյն այսինքն մավիլէնմիշ կըլլայ,
յարմարցներ վրան թիթեղը (Եաբրա-
լոը) արծաթին այսպէս : Կառնես
ձեռքդ Երկու թիթեղ արծթի չփ-
տովմը մէկէն բռնելով. վրան դնելով
կըլլել կուտաս, ու մէկալ ձեռքովդ
մասխալայով կըյարմարցնես. Եթէ ու-
նեցած պղնձէ բանըդ քանի մը տեղ

կրակեն զարնըված է, որ կիմացվի տես-
նալով մէկ սև փոշի մը մակերեռւթին
վրան, կըվերցնես գնձկովմը (Փոչա-
յովմը) որ շինած է բիրինձէ բարակ
թելերով . յետոյ նորէն կըտաքցնես
բանըդ առջի կերպով . և չորս թի-
թեղը մէկէն չի ֆտովմը բռնելով վրան
դնելով մասխալայով կըյարմարցնես
և կտարածես . ասանկ ալ յետոյ չորս
չորս կամ վեց վեց թիթեղ կըշարու-
նակես մինչեւ 20 կամ 60 թերթ թիթ-
ղանց , որչափ աղվօր ու հաստատ կու-
զես որ ըլլայ արծաթաւորած բանըդ ,
լըմբննալէն ետեւ մասխալայով կարծ-
նես :

Եսկէ աւելի հաստատ և աւելի աղ-
վօր կերպը յօշոտելով կըլլայ (խըյ-
մալամիշ ընելով) պղնձէ բանիդ վրան,
ինչպէս ըսինք վերը ոսկեզօծելուն հա-
մար :

Պաշ ինքուն արծաթաւորէն (պաշ եալուն
ընել) պշինչը :

Երծաթը կտըէ ժանտաջրով (քէ-
զապով) յետոյ իջեցնւը զանի մէջը
պղինձ դնելով . աս իջած արծաթէս

առ մէկ տրամ, և 8 տրամ քռեմօռ
 թարթառ աղ և մէկ կամ 2 տրամ
 պաղլեղ. ասոնք ամմենը միատեղ խառ-
 նէ և փոշի ըրէ, յետոյ աս փոշիէս քիչ
 մը առ քսէ կամ շըփէ պղնձին վրայ
 կակուղ կաշիով մը կամ մանդարով
 մը, և կամ չուխայի կըտորովմը, ապա
 սրբէ մաքուր լաթով և տէպէշիրով
 լաւմը. որչափ որ պղնձէ բանդ փայ-
 լունէ՝ այնչափ ալ աւելի փայլուն կար-
 ծաթաւորի : Առ կերպով կըրնաս ար-
 ծաթազօծել թիւթիւնի թապլաները,
 թոմպախ զառֆերը, և Շրագարան-
 ները, և այլ բաներ : Իրաւի որ շատ
 դիմացկուն չէ աս . բայց շատ աժան
 է, և երբ որ աւրի նորէն տէպէշիրով
 կըրնաս փայլեցներ, կամ նորէն քսել
 վերի ըսած փոշիէն, աս փոշին թէ որ
 քիչ մը թաց ըլլայ շուտով կըմիանայ
 պղնձին հետ, բայց թէ որ պղինձին մա-
 կերեսյթը առաջ ժանտաջրով որ օծ-
 վի՝ շատ դիւրաւ կարծաթաւորի :

Յաւելուած, համ Վերի ըստածնելուած համա-
ռօդու բայապրութիւն :

Ժաց Եալտըզ կըսէն, երբ որ թէ
կարմիր և թէ դեղին պղինձը արծա-
թաւորելու համար վրան պինտ առաջ
1 կըթրջեն լուծութք շնչքորակաւոր
սնդիկ որ անօսրացած է ջրով, յետոյ
կուտան վրան շնչքորակաւոր արծա-
թը չոր, կամքիչ թաց . տաքցնելով
ապա զմետաղը՝ ցնդել կուտան սնդի-
կը, և կըմնայ պղնձին վրայ արծաթը.
ասանկքանի մը հեղ կընեն՝ երբոր կու-
ղեն թանձր արծաթաւորել. և խիստ
ետքը կարծնեն, աս կերպս յարգի է
և դեռ մեր ազգին արհեստաւորքը ա-
սոր անծանօթ են :

2 Ոոր Եալտըզ ընելու համար պղին-
ձին վրայ, առ չորս մաս արծաթի փո-
շի (աֆօ), և հաւասար բաժին հասա-

1 Շնչքորակաւոր սնդիկ կամ արծաթ կըս-
վի, երբոր սնդիկը կամ արծաթը քէղապի մէջ
լուծած է, և չոգիացած դրեթէ մինչեւ ցկէսը,
և թողուցած որ կամաց կամաց պաղի և սառ-
նորականայ (այսինքն պիլուանայ). և նոյնը
դարձեալ մաքուր ջրով լուծելով և նորէն չո-
դիացնելով սառնորակացած է, այսինքն աղի-
պէս եղած է :

բակ աղ, և աղ անուշադրի, և մէկ
մաս սիւլիւմէն. թրջէ զասոնք ամմէ-
նը, և ետքը գնձիկով յարմարցնւը մե-
տաղին վրայ . կասկարմիր տաքցնելէն
ետե, թաթղէ ջրով լուծեալ թառ-
թառօին մէջը, միայն թէ պինտ առաջ
եփած ըլլայ մետաղդ նոյն լուծութը
թառթառօին :

Արծաթ բլաքէ (խաթլամա) ընե-
լու համար, կառնեն չորս մատ թանձը
թերթ պղինձ, և $\frac{1}{3}$ մատ թանձրութը
արծաթ տախտակ . առաջ աղէկ կը-
տաքցնեն երկուքին ալ մակերեսոյթը
որք մէկզմէկ պիտի շօշափեն . և մէջ
տեղը յետոյ կըդընեն երած պօռակիմ
սօտա, այսինքն Գալիա թաշիյին մա-
քուրը . և յետոյ չիլինտոյի տակէն
կանցընեն մինչեւ որ ուզած բարակու-
թիւնը դայ :

Ա երը ըսինք որ Անդղիացիք երկաթ
կիմ պողոպատ բլաքէ (խափլամա) ընե-
լու համար առաջ վրան կուտան շա-
պիկմը անագ, և ետքը թիթեղ այս-
ինքն թերթ արծաթին անոր վրան կը-
յարմարցնեն . բայց լաւ ևս գործ կա-
ծեն աս բանիս լէհիմը որ շինած է ա-
նագէ և պղնձէ, կամ անագէ, կապա-

ըէ , և 'ի պիզմիւթէ՝ որ է շուտ հալօղ նոր մետաղմը :

Վալակօն ընելու համար ոսկին սընդըկի հետ , պէտք է և տրամ ոսկի զառեկ (վառախ) քիչ քիչ դնել քարէ անկանի (հավանի) մէջ , և յ տրամ մաքուր սնդկի հետ յարել , մինչեւ որ լաւ միանան , և ապա աղէկ լուանալ . աս կերպովս սուդ՝ կըլլայ :

Վժան կերպով կըլլայ այսպէս . 1 մաս ոսկի ծեծելով տափակցուցած և մանր մանր կըտըրտած և աղէկ տաքցուցած կըմիացնեն 8 մաս տաք սնդկի հետ ու կըխառնեն երկըթէ սանդիտուով (հավանի կոթով). և երբ որ աղէկ միացած են , ջրի մէջ կըթափեն ու կըլուանան :

Կարմիր կամ դեղին պղնձէ բանը որ պիտի ոսկեզօծեն , առաջ աւագով կըշրփեն , և կըդընեն քիչմը տկար ժանտաջրի մէջ . յետոյ կըթաթխեն ջրով տկարացած լուծուեն սնդկի մէջ , մինչեւ որ ձերմըկի . ետքը դնելով վրան միակերպ շապիկ մը ոսկեղէն մալակօնէն , և կըակով թռցնելէն ետքը սընդիկը , կուտան վրան ոսկեմոմը . յետոյ մաքուր և պաղ ջրի մէջ կըձըգեն՝ որ

մոմը ելլէ . խիստ յետոյ կըշըփեն վրան
դընձկով , և տաք լուծութ թառթա-
ռօյին մէջ ձըգելէն յետոյ՝ կըհանեն և
կարծնեն . և երբ որ կուզեն թանձը
ըլլայ ոսկեղօծումը , մէկ քանի հեղ կը-
նեն վերի ըսած գործողութիւն : Ար-
ծաթնալ նոյնպէս կըլլայ ոսկեղօծել .
միայն թէ չեն թաթղեր սնդիկաւոր
ժանտաջրին մէջը :

Պաղ կամ չոր կերպով ոսկեղօծե-
լու համար , ոսկին որ կտրած է արքու-
նի ջրով , շոգիացուր կէսուակէս , և
դիր որ կամաց կամաց պաղի , ու ոս-
կին ամանին տակը ապակիանայ . երե-
սէն առ ջուրը , և նորէն շոգիացուր .
իսկ տակը նստած ոսկեղէն սառնորա-
կը խառնէ 8 կամ 10 բաժին շոգիա-
ցուցեալ (իմպիկէն ելած) պարզ ջրով .
և թաթղէ մէջը այնչափ քըթան կտաւ ,
մինչեւ ամմենը ծծէ . ապա չորցուր և ե-
րէ զանոնք քուրայի մը մէջ , և երբ որ
կուզես ոսկեղօծել զպղինձը կամ ար-
ծաթը՝ հասարակ աղի ջրով թըջէ ըզ-
մանթարը . ետքը թաթխելով ոսկէմո-
խիրին մէջը շփէ մետաղին վրայ աղէկ
մը . յետոյ մաքրէ լուալով ու սրբէ .
Երկաթը կամ պողպատը աս կեր-

պով ոսկեզօծելու համար պէտք է տալ
առաջ մէկ շապիկ մը անագ այսինքն
խալայ :

Կայ մէկ ուրիշ տեսակ մը խոնաւ ոս-
կեզօծելու, որ կըլլայ թաթղելով մե-
տաղը չէզոքական¹ լուծման տկարա-
ցած ոսկիաւոր արքունի ջրին մէջը, ոս-
կին կըկըպչի մետաղին վրան քիչ քիչ.
աս տեսակ ոսկեզօծումը կըմընայ բա-
ւական և շատ աղէկ պղինձին վրան :

Ի՞այց երկաթ օծելու համար պէտք
է երկաթը առաջուց թաթխել կէօղ
թաշըլի ջրին մէջը. այս կերպս չիկըր-
նար գործածվիլ արծաթին համար :

Ոսկին բարակ փոշի ընելէն ետե.
պաղեղի ջրով շփէ լաւմը զմետաղդ և
ետքը ոսկեփոշիով շփէ, և կոսկեզօծի:
Իսկ կտաւեղէնդ արծասպի ջրով թրջէ,
և չորսուր, կամ ուրիշ բռնօղ բանով,
ետքը ոսկիին լուծուե ջրով տկարա-
ցուր, և մէջը թաթիէ կտաւը և թող
որ ոսկին վրան իջնայ, ետքը արծնէ

¹ Ոսկին երբ որ կտրած է արքունական ջրին
մէջը, պէտք է աւելցնել այնչափ մընալ անձրեւի
ջուր. յետոյ այնչափ մէջը թառթառօ քռուտօ
դնել որ կշտանայ, և աւ չի հալի մէջը. և աս
կովի չէզոքական ոսկի :

(մէօհը է զարկ) որ փայլի դեղին գունովմը :

Արծաթին համար կըլուծեն ալամ սլուօթ ըստած աղը ժանտաջրին մէջը , յետոյ կըլուծեն մէջը՝ աղածական ոսկին . կըթաթղեն արծաթը աս հեղուկիս մէջ որ տաքութք շոգիանալ ըսկըսեր է . ներկայութի մնդկին չիթողուր՝ որ աղածական արծաթը գոյանայ . և ոսկին կըտորտանայ (այսինքն չէօքմիշ կըլլայ) արծաթին վրայ :

Երկաթը ոսկեղօծելու համար զառեկով , պէտք է թաթղել առաջ երկաթը քէհրիպար վէռնիձիին մէջը . և երբոր վէռնիձը քիչմը ցամքած է , ոսկիին թիթեղը յարմարցուր վրան բամ-

1 Ոսկին որ լուծվեր է , կամ սառնորակացեր է արքունական ջրին մէջը , կըսվի աղածական կամ Շլորական ոսկի :

Ալամպոօթ ըստած աղը որ հեղինակին անունովը կըկոչվի , ասանկ կըշինվի . հաւասար բաժին առ սիւլիւմէն և անուշադր . երկուքնալ փոշխացուր . և դիր շոգիացեալ կամ անձրեի բաւական ջրի մէջ . և դիր մեղմ կրակի վրայ . որ ցնդի մինչեւ որ ջրին երեսը մաշկ մը գայ . յետոյ վար առ , թող որ պաղի և սառնորականայ : Զոր օրինակ 24 ցորեն սիւլիւմէն , այնչափ ալ անուշադր . ջուր անձրեի կամ իմալիկէ ելած , 2 լիսպէ :

պակով, և յետոյ տուր տաքութիւն մը
երկաթին, այնչափ՝ որ երբ նոյն տա-
քութե՛ մէջը պողպատ մը դնեիր կը-
կապտանար (այսինքն մավի գունով
մէվշէնմիշ կըլլար) :

Ապակին ոսկեզօծելու համար կու-
տան վրան մէկ վէռնիջմը . ետքը կը-
տեղաւորեն վրան ոսկի տերեները :

Կոսկեզօծեն զփայտը, ալչիշ բա-
նը, կապարէ շինածները և այն, նախ
ծածկելով վրան վէռնիջմը, որուն մէ-
ջը աւելցուցած է 2 մաս դեղին հող,
և մէկ մաս աղէկ իւստիւպէջ. և ապա
վրան կըյարմարցըլի ոսկի տերեները :
Փայտեղեն բաներու համար բաւական
է ալ մէկ բխտիաւոր ջուր մը, զորօրի-
նակ լսէժ (զամլս) կամ թութիսալ :

Լաթի կամ թղթի վրայ կուտան
զամինի ջրով. լաթի վրայ հաստատ ըլ-
լալու համար ոսկեզիծերը ընտոր եազ-
մա թէստիմելներու վրան, հնարեցին
քանի մը տարի առաջ մէկ նոր կերպ-
մը . այսինքն ծութէ (սախըղէ) կամ
խունկէ վէռնիջ մը : Վզէկ զինիի ո-
գիքի մէջ դիր քիչմը ծութ, կամ թա-
փանցիկ խունկ, բաւական չափով, ե-
փէ բարակ շիշէկ մէջ աւազի վրայ,

այնպէս որ պաղինե զամլսի ջրի պէս
կպչուն ըլլայ . որուն հետը խառնե ու-
կի փոշիդ և այնպէս դրէ . և յետոյ
մէօհրէլէմիշ ըրէ , այս կերպը դի-
մացկուն կըլլայ , պաղ ջրով լուանաս
նէ չէլլեր . տաք ջրի դէմ դնելու հա-
մար՝ աղէկ կըլլայ , թէ որ քէհրիպա-
րի փոշիով շնես վէռնիճդ :

Արծաթը որ լուծած է զարպիսա-
նայի քէզապին մէջը , վրան աղի ջուր
լեցնելով կընըստի տակը ձերմակ փո-
շի մը . որոյ հետ խառնելով հաւասար
բաժին քռէմօթառթառ , և ջրովշաղ-
վելով խմորես զանի , և աս խմորէս
քիչմը շփես մանգարով մը պղինձի վը-
րան , խկոյն կարծաթաւորի :

Ոսկին արքունի ջրին մէջ լուծէ .

մէջը խելմը անձրեի ջուր լեցուր , յե-
տոյ անձրեի ջրով լեցած մէկ ամանի
մէջ դիր այնչափ արջասպի (զամի
խպըրզի) փոշի , որ թէ ալ ձգես չիհա-
լի . և թողքանի մը ժամ որ հանգչի .
յետոյ աս արջասպի լուծութիլ թա-
փի ոսկիի լուծման մէջը այնչափ , որ

թէ ալ դընէս չի տորտանար ոսկին ա-
մանին տակը , զի ան ատենը ոսկին բո-
լորովին ինջած է , յետոյ ոսկիին վրայ-
էն ջուրը առ , և նորէն լից վրան անձ-
րեի ջուր , թող որ հանգչի . յետոյ
վրայի ջուրը թափէ , մնացած փոշին
չորցուր . մէջը ոսկիին 15 բաժինին մէ-
կը խառնէ երած պօռաքս կամ պիզ-
միւթ մետաղին բարկը : Եւ երբ որ
գործածելու ըլլաս , թիրէ մէնթի եղին
ոդիքովը խառնէ , և զնձիկովզրէ կամ
տարածէ յախճապակին վրայ , և թող
որ ցամքի . յետոյ գրած բանը դիր կայծ
մը կրակի վրայ , որ եղը լաւմը թըռ-
չի . ետքը դնելով գրած բաները կար-
միր հողէ ամաններու մէջ վրանին ծած-
կելով , դիր բուռը , և տուր , կամաց էն
շատցնելով , զօրաւոր կրակ մինչեւ որ
հալի միանայ . կամաց կամաց պաղե-
ցուր բուռը և հանէ մասխալայով արծ-
նէ :

* Այս հերպով սսէնէլոծէլ պունիչը մընուրութէ
Նետաղական անգուստի (Ան-Անայի) :

* Աիգօլսօն ինկիլիզ բնաբանը հրա-
տարակեց , թէ մեծ մասը հիմըկվան

կարդարանաց բաներուն, որ առու-
տուրի մէջ կըծախվին՝ մէկ բարակ
թոմպախ շապիքով մը պատած են. ո-
րուն կերպը ասանկ է : Ի՞րէ մէկ մա-
լակօնիմը և մաս սնդիկ, մաս մը մե-
տաղ սնգուրի (թիւթիայի), մէջը կըր-
նաս ալ աւելցնելքիչմընալ ոսկի՝ աւե-
լի փայլունութիւնմը տալու համար¹ :
Իսոնք խառնէ լաւմը, և զի՞ր զմալա-
կօնը աղածական թթուուտին (թուզ
ռուհիի) մէջ, աւելցնելով մէջը զգի-
նիի տորտը (շարապ թօռ թուսու կամ
իտալ² թառթառօ քռուտօ) մինչև որ
կշտանայ : Աս այսպէս պատրաստած
ունելով, պղինձէ բանըդ ալ տաքցու-
ցած սաճի վրայ, տաք տաք խոթէ ա-
ռաջ ջրով տըկարացած ժանտաջրի մէջ
(քէզապի մէջ) զգուշութք, և հանէ
վերի ըսած մալակօնած հեղուկին մէ-
ջը ձբգէ, ու եփէ պղինձը այնչափ՝ որ
հանելէդ ետև պղինձդ՝ կատարեալ
ոսկեզօծած կըտեսնաս :

Պղինձէ թելնալ ասանկ որ ոսկեզօ-
ծէս և թելշանէն (հէթալէչն) բա-

¹ Մալակօնդ նայէ որ շատ առաջ իտառնած
ըլլաս աղածական թթուուտին մէջը այսինքն
թուզ ուռուուհիին մէջը :

բակցնելով մինչև մազի բարակութիւն
որ քաշես, միշտ ոսկեղօծած կըդանաս,
ուստի սուտ կըլապտանը և սուտ շերիտը ասկէ կըբանի :

ՃԻՎԱՅԻ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ՀՆԱՐԳՆԵՐ

ՊԼՅՈՒՅ

Պլյույադը և էրիանը արձնել (Ճիւղ ընել) :

|| ուծելով երկաթը ժանտաջրի մէջ
մեղմ տաքութիւն մը, և յետոյ գոլորշիացնելով կամ թուցնելով ժանտաջուրը մինչև որ հատնի և չորնայ, կունենաս ամանին տակը մնացած աղլորկամիր փոշի մը. որուն վրեւ եռացեալ ջուր լեցնելով ն կամ 8 անգամ և թափելով, մինչև որ եղկանայ ջուրը. ետքը կանցընես թղթէ, կըչորցնես կամաց մեղմ կըակով, և պէտք եղած տաենը կըդործածես պողպատը արձնելու համար :

|| Ենայ այսինքն Պլէյ, տեսայ որ
կնիք այսինքն մէօհիւր փորողները հասարակ երկաթի վրան արձնելու հա-

մար , չիմարած կրին այսինքն քիրէջին
բարակ փոշին կըգործածեն :

Ամին աւսակ էրինէ և պողպատէ ծանգուած
բաները ողբիւլու համար լուսը լը :

Յիշ ատեն է որ կըգործածեն տե-
սակ մը թղթի ժանդոտած երկըթե-
ղին և պողպատեղին բաները արձնե-
լու համար որ շատ զօրաւոր է , զի շուտ
մը կըփայլեցնէ :

Աս թղթիս մէկ երեսը կարծը է . գոյ-
նը երբեմն սե է , և երբեմն մոյգ և կի՞
դեղին է , ասոր շինելու կերպը աս է :
Խելմը սպնդաքար (բոմզայ) կըկար-
մըրցնեն , կարմիր կըակի (քէօզ կըա-
կի) վրայ , և յետոյ կըմարեն ջրով այս-
ինքն ջրի մէջ կըձգեն , պաղելէն յե-
տոյ բարակ փոշի կընեն : **Ա**յս փոշին
հաւասար բաժինով իւղոտ վէռնիջի
հետ կըխառնեն և կըլոսեն , որ կըլայ
հեղուկ զանգուած մը , բայց բաւական
թանձր , գնաճիկով գործածելու համար ,
ասոր մէջը կըխառնեն քիչ մը դեղին
կամ կարմիր բարկը երկաթին , որ

¹ Աս գբուռ ըսածս , թէ հողէն կելոյ , և թէ

Փռէնկէրէն կըսվի օքուր, կամ մեղծ
 (խուռում): Աս գունաւոր զանգուա-
 ծը բարակ մը կըտարածէն թղթի վը
 այնպէս՝ որ մէկալ դին չանցնի, և կը-
 թողուն որ չորնայ, յետոյ կուտան
 միանգամալ, և չորնալէն ետե գլանա-
 ձե չառխէ կանցնեն զթուղթը՝ որ շրտ-
 կընայ, որովհետեւ բոմղային փոշին
 շուտով տակը կընստի, ուստի գոր-
 ծածելու ատենը ամմէն հեղ խառնե-
 լու է: Աս թղթովս կընայ փայլեցվիլ
 կաթսայ, թնդանօդ, ձիու վրայի ե-
 ղած երկթէ բաները, հրացան (թիւ-
 ֆէնկ) դանակներ, և այն:

Արծնել պշինչը և լոմպակնը :

Դիր ժանտաջրին մէջ սղնաձին խար-
 տոցած խարտուքը, և լուծէ զանի.
 մնացած բաները վերի ըսածիսպէսըրէ:

արհեստիւ կըշինվի, երկթի խարտուքը ժան-
 տաջրով որ կըտրի՝ կըլլայ կարմիր. իսկ եթէ ա-
 ղածական թթուռուտով այսինքն թուզ ուսու-
 հիով կըլլայ գեղին: Բայց ասոր տեղը կընայ
 գործածվիլ կարմիր փոշին, որ ըսինք վերը:
 Երկաթը ժանտաջրով կտրելու ատենը՝ քիչմը
 ջուրալ պէտք է խառնել, որ լուծի երկաթը:

Ունին և արծաթը արծնելու համար դուշի :

Արծաթը և ոսկին՝ երբ որ կլոր ձև
ունի, Աստամպօլի արհեստաւորները
գոհ են իրենց ըրած արծնածին վրայ .
բայց երբ որ տափարակ մեծ բան ըլլայ
(մէյտանլը), վրան մէկ մթութիւն մը
կայ, և հայլիյի պէս չէ, ուստի՝ առի
ես հաւասար բաժին արշասպ (զանի
խըպըզ), և շնչքորակ (կիւվերչիլէ),
փոշի ըրի զասնք և դրի քուրայիմը
մէջ. տըվի սաստիկ կրակ մինչեւ որ լաւ
մը կարմրեցաւ, պաղած ատենը ծե-
ծեցի, մետաքսէ մաղէ անցուցի, և յե-
տոյ ակաթ քարի վրայ սղկեցի, աս փո-
շիովս թէ արծաթին և թէ ոսկիին
վերջի անգամին Ճիլան տըվի չոր չոր .
արծաթին տըվաւ հայլիյի պէս կապուտ
գոյն մը՝ որ շատ յարգի է . և ոսկիին
աղվոր դեղին և փայլուն շողշողումն
(շավիս) : Յատ արհեստաւոր մարդու
ալ բաժնեցի, անոնք ալ փորձեցին և
ախորժեցան . ասոր խոշորկեկ մասերը
կրնաս կերցնելու համար գործածել ա-
ռաջ քան զվերջի Ճիլան տալը :

ՎԵՃ և թէ փոքը հայելիները՝ որ
կըթափեն պղնձէ տախտակի վրայ, շատ
խորտ ու բորտ է. առաջ խոշոր զըմ-
բարայով և ջրով մէկըզմէկու շփելով
կըկերցընեն, ինչպէս տեսայ Փարէզի
գործատանը մէջ. ետքը բարակ զըմ-
բարայով, ետքը բոմզայով, և խիստ
ետքը՝ գոլզոթար ըսած փոշին կառ-
նեն, նապաստակի բըդէն եղած շափ-
խայովը՝ որ կըլորցուցած է, կըքսեն
քիչմը ջրով թրջելով, մինչեւ որ աղէկ
մը ողորկի և մէկ գիծմը չիմնայ վրան:
Ա երի ըսած փոշիէս ալ կընաս գործա-
ծէլ. մինէն ալ ասանկ կընաս արծնել:

Ա նոր հանուր դոշի ամին ինըող բան արծնելու
համար :

Դ եղածախները երբ որ ժանտաջուր
որ կըհանեն, ² տակի մնացածը կառ-

¹ Գոլգոթար ըսածը է, երբ որ գեղածախ-
ները կըհանեն ժանտաջուր արջասալով և չնչ-
բորակով մնացածը հայկաւակով կըխառնեն (քի-
լէրմէնիով)։ հետևեալ առաջարկութիւնս ալ-
նայէ։

² Աս մնացածը լատիներէն կըսվի դաբութ
մօռթում վիթոխոլում։

նես, ու քուրայիմը մէջ դնելով կես
ժամու չափ երես, և ետքը սղկես ա-
պակիի վրայ ջրով. և շատ անգամ ե-
ռացեալ ջուր լեցնելով վրան, խիստ
բարակ մասերը դամես (սիւզմիշընես)
ու չորցնես, և ետքը աս փոշիյիս չորս
մասին հետ երկու մաս աղեկ կինաբա-
րիզ (զինձիֆրայ) խառնես և մէկ մաս
դեղին անթիմօնի բարկ, (որ Կտալե-
րէն կըսվի անթիմօնիօ տիաֆօռէթի-
քօ, (միայն թէ ասոնց չոր բարակ փո-
շիները պէտք է որ խառնըվին), կը-
շինվի մէկ փոշի մը ամէն բան արծնե-
լու համար, ոսկիթ արծաթէ և սղինձէ
զործիքները, և երկաթեղէն բաները,
ևս և վէռնիճները: Այս փոշիովս արծ-
նելու համար՝ առ բարակ պզտի կըտոր
մը ձեյրանի կաշի, որ է տեսակ մը լե-
րանց այծի, և անով շփէ ձիլա տալու
բաները. աս փոշիս ոչ միայն կըփայ-
լեցնէ, նաև աղեկ գոյն մընալ կուտայ:

Ա բ ծ ն ե լ մ ա բ մ ա բ ի ո ն (Ա հ ա մ ա մ) ժ ա բ ը :

**Ճիմըկու ատենը արեելք չիկայ ա-
ղեկ ձիլայ մէռմէռ քարին, ընտոր Փը-
ռէնկիստան կընեն՝ որ հայլըի պէս կը-**

փայլի, զի յետ որ քարին մակերեսոյ
թը շտկած է, միակերպութիւն մը կու-
տան՝ շփելով զքարը ջրով խառնած
պըտուկներու (չէօմլէկի) մանրուքով՝
որ սըռ չունի, և կարմիր աւազով։ Աս
կերպս աւարտելէն ետև, կառնեն կա-
պարէ հաստ տախտակի մը կտոր՝ ձիւ-
թով կըպուցած կոթ ունեցօղ փայ-
տի մը վրայ. աս տախտակին վրայ կը-
ցանեն նոր զըմբարայ չորս աստիճանի,
այսինքն բարակ. և բանով մը զարնե-
լով զըմբարան կըմլսեն կապարին մէ-
ջը, և յետոյ աս կապարէ տախտակովո
և ջրով կըշփեն զքարը՝ մինչեւ որ ո-
դորկի և շտկի քարին երեսը. բայց
գեռ չիփայլիր. յետոյ կառնեն կապա-
րի խարտուքը, որուն մէջը կըխառնեն
իրեք մասին մէկը շապ, և լաթէ կծիկ
մը շինելով՝ ուժով կըշփեն զքարը
աս փոշիով, առանց վերցնելու զըմբա-
րան՝ թէ որ կայ քարին վրայ. և երբ
որ բաւական ողորկած ու արծնած է,
կուտան ետքի Ճիլան անազի¹ կիրով,

¹ Ճարուրին 60 անագ. 40 կապար խառնե-
լով, բերանը բաց ամանի մէջ երելով, և միշտ
խառնելով կուտայ փոշի մը, որ առաջ դեղին
փառ է, և շատ երելով կըՃելմըկի:

այսինքն սրմաքէշի չառխի Ճիլայով ,
 չոր չոր առանց փոխելու գործածած
 կըծիկը , և խիստ յետոյ կըսրբեն գզած
 մաքուր բուրթով , և ասանկ կըլլայ
 մարմարիոնը աղէկ փայլուն և ողօրկ :
Դեղին փառ մարմարիոնը արծնելու
 համար կըդործածեն սպնգաքար կա-
 պարին տեղը , զի կապարը կըսեցնէ
 քիչմը զքարը . և որովհետեւ անագին
 կիրը քիչմը կըդեղինցնէ աղէկ Ճերմակ
 մարմարիոնը , ասոր տեղը կըբանեցնեն
 ոսկորի կիրը (քիրէճը) : **Առ** կիրը կը-
 շինվի ոչխարի ոսկորները աղէկ մը երե-
 լով մինչեւ որ լաւ Ճերմըկի , յետոյ փո-
 շիացնելով մէջը կըխառնեն իրեք մա-
 սին մէկը շապ : **Խսկ** կարմիր տեսակ
 մարմարիոնին համար՝ գործկածեն հայ-
 լիյին Ճիլայ ընելու կարմիր փոշին . Ճեր-
 մակ մարմարիոնը ենթակայ է դեղնե-
 լու օդին ներգործութէը . բայց կընայ
 մաքրըվիլ և կատարելապէս Ճերմըկիլ՝
 լուալով զանի աջիտօ մուրիաթիքօ օք-
 սիճէնաթօ ըսած քէզապով , բաւական
 ջուր խառնելով աս քէզապին մէջը , որ
 չուտէ քարը :

ՀԱԼՈՑԱԿԱՆ ԱՅՍԻՆՔՆ ՏԻՕԲՄԵՇԻ
ԵՒ ԼԵՇԻՄՄ ՀՆԱՐՔՆԵՐ

ԳԼՅ ԼՅ :

Ը ինեւ ոսկենման մշտաղ, էամ ոսկեգոյն պղինչ. էամ աղէկ լոմպակո շինել:

Դինդ մասին իրեքը կարմիր պղինձ. իսկ երկու մասը դեղին պղինձ թելի կամ տախտակի մանրուք հալեցնելով որ խառնես, կըլլայ ոսկենման մետաղ կամ սուտ ոսկի: Կարմիր պղինձդ դիր առաջ՝ լեմցէի քուրայի մէջ. վրան՝ պղնձին երկու կշռոյն չափ՝ լից փոշի ածուխի. երբ որ եռացման մէջ է սլուինձդ, ձգէ մէջը զմանրուքը դեղին պղնձին թղթով պըլլած. թող կըակին մէջը զքուրան մինչեւ որ լաւ մը միանան հալելով և եռալով. ապա թափէ տաք աւաղի վրայ, կամ տէրէշէյի մէջ: Կան որ, դեղին պղինձը քուրային մէջը նետեննէ, շուտովմը վրան պիլլօռի փոշի կըլեցնեն:

Եւ թումալախին աղէկ կերտմընալ

կայ որ Փռանցայի ()ո՞նը դաւառին մէ-
ջը կըշինվի . 50 մաս աղեկ դալամին ը-
սած թիւթեայ խառնած , 20 մաս ա-
ծուխի փոշիի հետ և 30 մաս պղնձի
կիւվերսէ կըդնեն մէկ տեղ . զանա-
զան քուրայի մէջ տեղաւորելով շատ
լեցուն ըրլալու համար , և կուտան զօ-
րաւոր կրակ , թիւթեային բարկը կը-
միանայ ածուխին հետ , և ետքը կը-
միանայ պղնձին հետը իրըև հինգ մա-
սին իրեքը . Երբոր բաղադրութիւն լը-
մըննայ , ամմէն քուրաները կըվերածեն
'ի մէկ քուրայ պարպելով . յետոյ կը-
թափեն ¹ : Աւելի յարդի է կիւռէմ-
պէռկ քաղքինը :

Ը ինեւ արհեստական չարային գոյացութիւն ,
իամ չար նախել :

Ո' էկ մաս զամեաղի , և ջուր աւելի
դրեթէ քան զկէսն ծանրութե , և եր-
կու մաս եփած կաւ և կամ թուղլան
փոշի եղած , խառնելով աս իրեք գոյա-
ցութիւն մէկտեղ , կուտան և մէկ լու-

¹ Ո՛՛ թիւթիան որ քիչմը ծծմբաւոր է , ա-
ւեկ կըդեղնի թօմպախը :

ծութի մը պաղեղական այսինքն շապական, երբոր կըսկսի փոխադարձառնելութիւր շուտով կըջերմանայ . և երբեմն այնչափ՝ որ մինչև նիւթը գիտեսթէ կըբարհիկի . եթէ խառնուրդը կըտեէ մէկ ժամու չափ . եթէ ջուրը շուտով քաշէ, ներգործութիւր գոյացութեցս մէկ մէկու հետ՝ աւելի զօրաւորէ զանգուածը . որ թէպէտ դեռ հեղուկ է՝ կըստանայ ակնթարթ վայրկենի մէջ մեծ աստիճան պնդութեւ : Արտադրած տաքութիւր կաւելցնէ խտութիւնը, և անկէ ետև նիւթը կանցնի գրեթէ անլուծանելի կացութեն մէջ : Կերենայ թէ թափանցկութիւր աս իրեք գոյացութիւներուն մէկզմէկու հետ շատ մեծ են, որք կանցնին 'ի խիտ բաղադրութիւ . ունի աս յատկութիւս ալ, որ մեծ աստիճան տաքութեւ այսինքն եռացեալ ջրէն վեր՝ կըկակղնայ . ուստի կընայ թափիվլ զանազան ձեռովքաներ ուղածին պէս :

Եթէ ասոր մէջը դրվի դեռ ընպընդացած զանազան գունով մետաղի բարկեր՝ այլ և այլ գունով քարեր, կըշին վի սոսմաքիի նման քարեր :

բ-աշտ հեր . 23/1
հ-ի-ն-

Ը ինեւ արհեստական և գուանաւոր հարմարին :

Ենգղիացի արհեստականք կըլեցնեն
Երկըթէ խողովակի մէջ մարմարինք քա-
րին փոշին, վրան կաւելցնենքիչմը բլա-
թի մետաղին խարտուքը կամ սնդիկ,
որպէս զի մարմարիոնին ածխական թը-
թուուտը (քէօմիւր քէզապին) չի ցըն-
դի, և կըդնեն մեղմ կրակի մէջ մին-
չե որ հալի և միաւորի մարմարիոնի
փոշին, որ կրակէն երբոր կըհանեն կը-
տեսնան երբեմն տեղտեղ թափանցիկ
մարմարիոն գլանմը . որ և կատարեալ
արձնելու (Ճիլայի) կուգայ : Եւ թէ
որ գունաւոր ընել կուզես (սոմախիի
պէս), առաջուց կրակը չիդրած, փո-
շիին հետ խառնէ զունաւոր քարկեր
մետաղի և քիչմընալ մաքուր մօխրաղ
(բելին թուզու) :

Օ անգակ Աստիւլ:

Եօթանասունը հինգ մաս հալած
կարմիր պղինձին մէջը՝ դընես քսանը-
հինգ մաս անագ . վրանին ծածկելով
շատմը ածուխի փոշիով՝ կըլլայ մետաղ-
մը զանգակի, որ զանգակի ձեռվ թա-

փելով, կըլլայ աղէկ հնչուն զանգակ .
մէջը ուրիշ տեսակ մետաղմը զոր օրի-
նակ արձաթ և այլն աւելցնել անօ-
դուտ կըթուի :

Ճամացուցի այսինքն պալովի սահանի պահաժան
շինել :

Ճաւասար բաժինով արձաթը և
պղինձը մանր կիւվէրսէ թափելէն յե-
տոյ , կըշոդիացնեն աղածական մնդր-
կաւ (թաթլը ժիվայով) . մնդիկը կանց-
նի ընդունարանին մէջը . և ինչ որ
կըմնայ տակը , կըդնեն քուրայի մէջ .
և կըհալեցնեն . և (աս քուրային մէջը
առաջուց նետած են խարտուք երկա-
թի) երկան ատեն հալած պահելով .
և ետքը ինչ մեծութք ինչ ձեւ որ կու-
զեն կըթափեն . որոյ գունը արձաթի
պէս ճերմակ է ու շատ հնչուն ձայն
ունի . և տարածական է շատ . ասոր
շոգիացումը՝ քուրայի հողէ իմալիկի
մէջ աղէկ է ընել :

Երեսնը կոյնէլ (Ահեմ Երեսնէլ) :

Չուխտ հրացանը , այսինքն չի փուէ
թիւֆէնկը , հասարակօրէն կը կպցնէին
պղնձով , այսինքն պախըռ լէհիմով .
Նաև անագով և մնգուրով , այսինքն
թիւթեայով :

Կոր ատենը | իւգա ըսած պահա-
պանը Փարիզու թանգարանին , սոր-
վեցուց թիւֆէնկի գործատունին , որ
շատ աղէկ է արծաթով կը պցնէլը , քան
թէ ուրիշ բանով . զի նախ պատուա-
կան է քան զլէհիմը անագին (խալայ-
ին .) երկրորդ բաւական է ասոր հա-
մար կեռասի կարմրութեամբ կը ակը-
այսինքն քիչ կը ակը . որ ընդ հակառա-
կը պղնձին պէտք է ճերմակ կարմրուի
կը ակի . երրորդ՝ արծաթին լէհիմը
շուտ հալելով երկաթը քիչ ատեն կը-
կենայ կը ակին մէջ , ու թըվալ չունե-
նար : Աս բնագէտս փորձեց ալ , որ հրա-
ցանը լաւ կը լայ թէ որ ծեծվի մէկ եր-
րորդ մասը զէմպէրէկի պողպատէն կմ-
մանգաղի երկըթէն , և երկու երրորդ
մասը աղէկ երկաթէ : Ուստի շատ պատ-
վեցաւ առ հեղինակս ջանքի այսինքն
խայրէթի ընկերութենէն :

Նընտստան երկաթը կըկացնեն մէկ
մէկու հետ միտիայի կՃեպին փոշիովը .
այսինըն միտիայի փոշին երկու երկա-
թին մէջ տեղը դնելով կուտան կրակ
որ մինչեւ հալի լէհիմը և կըպչի : Աւ-
բիշ տեղերալ աւազով և կըով կըկըպ-
ցընեն :

Ուի և արծաթ լէհիմ ընել:

Վաքուր խաս ոսկին լէհիմլէնմիշ
կըլայ քիչ այարը ոսկիով . իսկ այար-
ը ոսկիէ բանը լէհիմլէնմիշ կըլայ շատ
այարը ոսկիով . միշտ դիտելու է որ
լէհիմին այարը շատ ըլլայ քան ունե-
ցած լէհիմլէմիշընելու բանէն . այսինքն
թէ 20 կամ 19 այար է բանըդ , գոնէ
21 այար ըլլայ լէհիմդ . զի ոսկին որ-
շափ որ աւելի պղնձով խառնած է կիմ
այարած է , այնչափ ալ պինտ կըլայ
և շուտով ալ կըհալի :

Վրծաթեղէն բաները արծաթ լէ-
հիմընելու համար պէտք է որ արծա-
թին մէջը քիչմը պղինձ խառնես որ
դիւրաւ հալի , և որչափ որ արծաթէ
բանին այարը վար է , լէհիմին այարը
անկէ վար ըլլալ պէտք է :

Աւաղաբ էպիկոն լէհիմ:

Բնդհանրապես մէկ մաս կապար
(խուրշին), և երկու մաս անագ մէկ
տեղ հալեցուցած, կըլլայ կապարէ քան
կալցնելու լէհիմ . երբոր կապարին հա-
մեմատուիլը պակսեցնես՝ լէհիմդ կըլ-
լայ աւելի պինտ , և պինտ քաներ կըպ-
ցընելու կուգայ , ընտոր թէնէքէն եռ .
և որչափ որ աւելցնես կապարը , լէ-
հիմդ կըլլայ այնչափ ալ աւելի կակուղ :

Վան զամնէն լէհիմը էակուղ :

Երբ որ 8 մաս պիզմիւթ մետաղը ,
5 մաս կապարը՝ և 3 մաս անագը միա-
տեղ հալեցնես , կըլլայ մէկ լէհիմ մը
խիստ շուտ հալօղ , որ մինչեւ տաք ջրի
մէջ ալ կըհալի . ասի աղէկ է ան քա-
ներուն՝ որոնց խիստ կրակ տալ ըըլլար .
ընտոր մինէյի վը էլմասէղէն քան կըպ-
ցընել ու համար :

Երեսնը հողինել (խայնալմիլ ընել) տարի է համ
պարի վրայ նոր հերդով։

Կապարը սուղըլլալով, ծծումքնալ
ապականելու սկիզբ ունենալով, հա-
սարակ խոռասաննալ շատ ատեն կու-
զէ որ չորնայ, ու հաստատ բռնելու
կացութի գայ զերկաթը. ալչին ալ կը.
հալի ջրով. երկաթին բարկնալ (ժանգ-
նալ) ժանտաջրով շատ կընդարձակի
և կըլլայ վտանգաւոր, ուստի **Ճիլէ**
Լօմօնը գտաւ մէկ աղէկ և նոր կերպ
մը զերկաթը կպցնելու քարի կամ պա-
տի հետ աւելի հաստատ քան զայն կեր-
պովն որ մինչեւ հիմայ կըլլար։

Խորասանը հալած բեկեկնի խէժով
այսինքն չամսախըզիով և կիրով խառ-
նես նէ խիստ աղէկ կըբռնէ. ոմանք
քիչմը ճարպալ կըդնեն։

ՀՐԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՀՆԱՐՔ

ԳԼՅ. Բ:

Պատրիասպութիւն ածխոյ վասն վառօդի լնիդա-
նօթի :

Վաժքիմիագետը փորձով ցոյց տը-
ւաւ լաւագոյն կերպը պատրաստելու
ածուխը, որ կը ճառայէ վառօդին գոր-
ծատան մէջը, թէ պէտք է որ շոգիա-
ցուցվի առաջ թեթև փայտին ման-
րուքը կմ թալաշը, հողէ իմակիկի մէջ
դնելով առանց ջրի, և օր աւուը կը ակ-
տալով, ինչպէս կը նեն ինկիլթեռա,
և 'ի Փարիզ։ Որովհետև ածուխը կը-
բըռնկի երբեմն վառօդ շինելու ատե-
նը մէկ տեղ ծեծելով շնչըռակը (կիւ-
վէրչէլէն) և ծծումքը, աս պատահ-
մունքէս ապահով ըլլալու համար՝ հի-
մայ կը ծեծեն զատ զատ, և ապա կը-
խառնեն, և ածուխն ալ դեռ նոր որ
շինած է՝ ջրով թրջելով։

92

Փարիզու վառօդին բաղադրութիւն
նը 100ին :

պատկերակներ, որոնք, և լազար համար :

Կիւ-Աբրիւլէ,	750	78	65
Ընդունելու,	125	12	15
Ծոնդունելու,	125	10	20
	—	—	—
	1000	100	100

Ասսագույնել վառօդին ուժը :

Եթեոր պէտք ըլլայ լեռը քար կըտ-
րել (լաղըմ նետելով), վառօդ կը-
դործածէն. ասոր ուժը սաստկացնելու
համար և քիչ վառօդ դործածելու հա-
մար, երկու բաժին վառօդին հետ մէկ
բաժին չիմարած կիր (քիրէ՛չ) կը-
խառնէն : Իս խառնումն շատ առաջ
պիտի ըլլայ, զի թէ որ շատ ատէն
անցնի՝ կիրը օդէն խոնաւութի կառ-
նէ, և կըտկարանայ վառօդը. այլ քիչ
առաջ խառնելու է, և սե շիշէի (սլու-
թելի) մէջ, բերանը գոց պահելու է :

“ Ա, ո՞ր ինքու իրահաւորելու դննդանովը այսինքն
լոբը :

Ժնդանօթներուն կրակը կուտային
վառած չուանով մը (ֆիթիլովմը) :
Պոռն վերցնելու համար աս գործա-
ծութե անյարմարութիր, որուն շատ
զգուշութի կուղէ, հնարեց որ ըխլա-
մուռ գաւազանով (չուպուխով) տըր-
վի, որ թաթիսած ըլլայ ժամանակ մը
շնչքորակաւոր կապարին լուծութե մէ-
ջը, աս կերպովս ուշ կըմարի քան զչու-
վանը, ու կըգործածվի շատ դիւրութ։
Իւռուսթ քիմիագէտը քննեց աս փոր-
ձը, ու դտաւ շատ ճիշտ, և այսպէս
փորձ ըրաւ։ Եւաւ գաւազան մը ըխ-
լամուռ փայտի, երկու իրեք ու կէս
գիծ թանձրութք, չորս ու կէս կամ
հինգ գիծ լայնութք, և իրեք ոտքէն
քիչմը աւելի երկայնութք, և թաթ-
խած թողուց զանի շնչքորակաւոր կա-
պարի լուծութե մէջը¹, մինչեւ որ աղէկ
մը տոգորվի, յետոյ դրաւ որ չորնայ։

1 Երբ որ կապարը կամ պղինձը ժանտաջրին
մէջը չոգիացած և կամաց կամաց պաղած ստո-
նորակացած կամ շաքարացած է, յետոյ պարզ
չըի մէջ հալած է :

Թէ որ ջուրը եռացեալ է՝ բաւական է թողուլ գաւազանը ժամ ու կէս, և թէ որ պաղ է՝ պէտք է որ թողուս թաթիսած իրեք օր : Ընչքորակաւոր պղինձնալ կընաս ասոր տեղը գործածել:

Պատրաստութիւններ սպիտակ հրոյ .

Ես հրոյ բաղադրութիւնը գաղտնի կըպահէին անգղիացիք, որ իրենց նիւթմը էր վաճառականութե՛ զոր սուղկը ընէին գաղղիացի աստղաբաշխները և արքունական նաւապետները, որ կըգործածէն հետուանց նշան տալու համար մէկղմէկու . և շատերնալ կըզնէին զբօսանաց համար : Ի՞նչ հրատարակեցաւ 1807ին, թէ այս փոշիին ակ մասը աղեկ ծեծած շնչքորակ (կիւվէրչիլէ) է, ո մասը մաքուր զտած ծծումք, և երկու մասն է կարմիր մկրնդեղ (զռնըխ) մէկ տեղ խառնած : Հետոյ ասկէ լեցուցած է մէկ տուփի մէջ որուն լայնութիւն է 6 մատնաչափ և խորութիւն 4 մատնաչափ, և վրայի ծածկօղ կափարիչը (խափախը) ունի մէջ տեղը կլոր ծակոյկ մը, որ անկէ

կճատով (շէմէով) կըվառեն , և կը-
բըռնկի մէկէն 'ի մէկ առանց շառաչ-
ման , և կըծաւալէ Ճերմակ լոյս մը և
խիստ փայլուն , քիչ մուխով , ուստի
բունկցնօղը պէտք է որ հովին դիմացը
չիկայնի , որ ելած ծուխին հոտը չառ-
նէ : Եւ աս մեծութք եղած տուփին
լուսը կըտեւէ Յ ըոպէի չափ , և կերե-
նայ անոր լոյսը մինչև Յ հազար դըր-
կաչափ (խուլաձ) հեռաւորութենէ :
Ես փորձեցի մեծը շննելով իրեք չորս
անգամ 'ի պօլիս , գիշեր ատեն այնչափ
լոյս տուաւ՝ որ գիտես թէ ցորեկվան
պէս լուսաւորեցաւ բաց տեղը :

Ը Բնել ճըագ հը որ Շիմանայ անհրեւէ և հռչի :

Կըփոշիացնեն չորս մաս մաքուր շնչքո-
րակ , երկու մաս թնդանօթի այսինքն
թօթի վառօդ , երկու մաս ածուխի փո-
շի , և մէկ մաս զտած ծծումք , մէկ
աեղ խառնելէն ետեւ զասոնք , և մա-
զէն անցնելէն ետեւ , կըդնեն խիստ քօ-
լալը կըլօրցուցած թղթի մէջ կըլոր
գաւազանով մը , որոյ երկայնուիր եր-
կու ոտնաչափ է : Եյս փոշին որ թըխ-
մըված է թղթին մէջը կըլը փայտով ,

կըկապեն մէկ փայտի մը վրայ , և վառելու ատենը կըկտրեն մկրատով վերի ծայրը , և ճրագով կամ կրակով կըքրոնկցնեն զանի , որ կըդիմանայ անձընի և հովի . և երբ որ մարել կուզեն՝ մկրատով կըկտրեն բորբոքած մասը :

Վարսիլիա ասոր նման կՃատ մը (շէմէմը) կըշինեն , խառնելով ութը մաս զտած ծծումք , չորս մաս շնչըռակ (կիւվէրչիլէ) , և երկու մաս թընդանօթի վառօդ :

ՀԻՒՄՆԱԿԱՆ ՀՆԱՐՔ

ԳԼ : Խ :

Տուժերու (իսութիներու) և ավագ աիւլ պիտիյի համար շինելու դօսակները (չէմշէրները) ներիւլ :

Ետ կիսով չափ ձևաւորելու չի մշիրները կըդընեն ջրի մէջ 8 կամ տասը օր փոխելով ամէն օր ջուրը , և ամմէն անգամուն ջուրը փոխած ատենը կըլուան շիմշիրները մոխիրի ջրով : Երբ ատան օրէն ետև կըհանեն ջրէն կըլլան

փայտերը ձկելի , որով կրնայ շըտկվիլ
ծռութիւնը . յետոյ լաթով կըպատեն
և կըպահեն զոց տեղ , զոր օրինակ սըն-
տուկի մէջ , որ օդ չիտեսնան փայտե-
րը . որպէս զի շուտով չորնալով՝ չի-
ձաթին : Հետոյ քիչ քիչ կըվարժե-
ցընեն մէյմէկ քիչ օդ ցըցնելով այսինքն
երբեմն հանելով սնտուկէն բանալով
և դարձեալ ծածկելով , և երբ որ վար-
ժած են օդոյ և բաւական ցամքած ,
կուտան կատարեալ ձև ինչպէս պէտք
է չառիսէ քաշելով : Հետոյ վեց կամ
եօթը օխայ ջրի մէջ 50 կմ 60 տրամ
մաքուր շապ խառնելով կեռացնեն , և
երբ որ պաղի՝ կըձգեն 5 մէջը նոյն փայ-
տերը , և կըթողուն մէջը քանի մը օր .
և յետոյ կըհանեն զանոնք և կըպահեն
վերի ըսած կերպովս , և յետոյ ուրիշ
վեց կամ եօթը օխայ ջրի մէջ առջի
իրիկունէ կըդնեն 50 կամ 60 տրամ
մանրուք ալ պախամ փայտի . հետեւ-
եալ օրը կեփեն մինչև որ կէսը մնայ .
նոյն ատենը կըդնեն մէջը կ տրամ շապ ,
և վար կառնեն կըակին վրայէն՝ որ պա-
ղի : Աս գունաւոր ջրիս մէջը նոյն չիմ-
շիրները չորս օր պահելէն ետեւ , կը-
հանեն և կըպահեն ընտոր առջի հե-

զուն ըրին . և յետ վարժելոյ օդոյն և
բաւական չորնալէն՝ կըփայլեցնեն :

Իսկ եթե կուզեն մավի գոյն մը տալ,
զաջ եաղիյի մէջ լուծած լեղակի (զի-
վիտի) մէջ կըճգեն զիմշիրները , և թէ
որ կուզեն կանանչ գունով ներկել ,
ժանդին (Ճէնկեառին) ջրով լուծածին
մէջը կըճգեն :

Այս մէկ ուրիշ կերպմը ալ ներկե-
լու խութիները և ավուճ տիւլպիւնի-
յին փայտերը : Ա, ախ ձեւ տալէն ետե-
կուտան Ճիլան . յետոյ ֆռչայով կու-
տան վրան քանի մը հեղ նոյն ներկէն ,
ետքը բոմզայի մանր փոշիով դարձեալ
Ճիլամը կուտան . յետոյ երկրորդ և
երրորդ անգամ ալ կըներկեն և ամ-
մէն մէկ հեղուն Ճիլա կուտան նմանա-
պէս , խիստ յետոյ աղէկ և բարակ թոր-
քօլիով և քիչմը եղով կըփայլեցնեն ,
և նոյն թորիքօլիով կմբոմզայով կառ-
նեն եղը վրայէն :

Ա, երիել Քայտը Տավոնի Քայտի Գունով Համ հըն-
դու Քայտի նը Տանցնել :

Կըշինեն նախ ներկմը ալ պախամ
հնտու փայտով , և յետոյ քիչմը շապ

և քիչմընալ բօթաս մէջը կաւելցնեն,
որ խոյինայ գոյնը . յետոյ Փռչայով
տաք տաք կըտարածեն փայտին վրայ
աս ներկէս, մավոնի փայտին առեջքնե-
րուն այսինքն տամարներուն նըմանցնե-
լով : Եւ որպէս զի աղէկ նմանի , աս
ներկէս քիչմը զատ ամանի մէջ առնե-
լով կըձգեն մէջը քիչմը աւելի բօթաս ,
որ աւելի խօյի ըլլայ , և ասով տեղիս
տեղիս կըդպչին և երբ որ բոլորովին
ցամքած է , տաք տաք կուտան վրան
մէկ նոր ներկ մը զաֆռանի կամ չահ-
րայի ջրով , մէջը քիչմընալ առջի կար-
միը ներկէն խառնելով : Ո՞իայն զգու-
շանալու է , որ կաթիւ չըլլայ վրան վա-
զելով :

“Եւ ինչ ժայռը ինչ գունով որ հուշվի :

Աըռլը ամանի մէջ կըդնեն խելմը
տաք աղէկ քացախ , մէջը քիչմընալ
պըղնձի խարտուք , աղ արջասպի (զաձի
խպոըլ) , պաղլեղ (շապ) , և ժանգ-
առ (Ճինկեառ) : Ասոնք մէկ տեղ դնե-
լով կըթողուն եօթը կամ ութը օր ա-
րեի մէջ կամ տաք տեղմը : Ետոյ
փայտին կանանչ գոյն մը տալ որ կու-

զեն աս ջրովս կեփեն զփայտը : Իսկ ե-
թէ կարմիր գունով ներկել կուղեն ,
ժանդին տեղը ալ պախամ կամ մօռ-
պախամ փայտ կըդնեն : Թէ որ դե-
ղին կուղեն , չահրայ կամ հալիլէ կը-
դընեն . իսկ եթէ կապուտ գոյն մը տալ
կուղեն , մէկ տրամ լեղակը (չիվիտը)
հինգ տրամ թթուակ ծըծմբի (Ճեր-
մակ զա՛ եաղիյի) մէջ կըդնեն , և տա-
սը կաթիլ ջուր ալ դնելով կըլուծեն
իրեք չորս օր թող տալով . յետոյ մէ-
ջը քիչ քիչ 80 կամ 100 տրամ վերի
ըսած ջրէս խառնելով կըյուղեն և կը-
տարածեն փայտին վրայ : Աւ ասանկ
զանազան աստիճան խառնելով աս ը-
սած գուներէս , կամ այլ ուրիշ գու-
ներէն , ինչ գոյն որ կուղեն կուտան :

Ասածներէս քիչ տարբեր եղանա-
կաւ ալ կըներկեն կարմիր , այսպէս :
Կերկելու փայտը տաք քացախի մէջ
շն ժամ թրջոց կըդնեն , յետոյ անոր
մէջը կըդնեն բաւական ալ պախամ
փայտէն , և քիչմընալ պաղլեղ . և մէկ
տեղ կեփեն , մինչեւ որ աղէկ գոյնը դայ:

Այսանչ գոյն տալու համար՝ կառ-
նեն աղէկ աճէմ ճէնկեառի , և կըյա-
րեն աղէկ քացախով , և մէջը կաւել-

յընեն Յ տրամ զածը խըպուղզ, և կե-
փեն մէկ տեղ քառորդ ժամ մը եր-
կու օխայ ջրով. յետոյ փայտը կըձգեն
մէջը, որ աղեկ կանանց գոյն առնէ :

Դեղին գոյն տալու համար, կըձե-
ծեն Յ տրամ չահրայ, մէկ օխայ ջրով
կեփեն, և յետոյ լաթէ կանցնեն աս
ջրիս մէջը ընկուզի չափ պաղլեղ կըձը-
գեն, և փայտը կընկղմեն մէջը, մին-
չև որ աղեկ դեղին ըլլայ :

Ա, ԵՐԻԵԼ Քայտը աղանողի Գունով :

Կեռացնեն ջրով մօռ պախամ փայ-
տին մանրուկը (թալաշը). յետոյ մէ-
ջը ընկուզի չափ պաղլեղ կըձգեն, աս
ջուրս քանի որ տաք է ֆռչայով փայ-
տին վրայ կըտարածեն. յետոյ երկը-
թի խարտուքը քացախով կեփեն, մէ-
ջը իրեք մատին առածին չափ հասա-
րակ աղ կամ անուշադր կըձգեն, և
սոյն ջրէս ալ առջի ներկած փայտին
վրայ կըտարածեն գնձիկով, իսկոյն կը-
սենայ փայտը : Այս որպէս զի աղեկ և
հաստատուն ըլլայ գոյնը՝ անգամմը-
նալ կուտան վրան առաջի մօռ ներ-
կէն, և յետոյ երկրորդէն, և դար-

Ճեալ նոյնպէս մինչեւ իրեք կամ չորս
անգամ . խիստ յետոյ ցամքելէն ետեւ
պալմոմուլու լաթով կըշփեն աղէկ սեւ
ներկած փայտը որ կըլլայ փայլուն սեւ
ապանօղի պէս , որչափ որ աւելի պինտ
է փայտը և առաջուց Ճիլալը , աւելի
ալ աղվօր կըլլայ :

Այս մէկ ուրիշ աղէկ կերպ մընալ
ապանօղի պէս շինելու զիայտը . քիչ-
մը արծաթ ժանտաջրի մէջ այսինքն
քէզապի մէջ կըլլուծես . և յետոյ կըա-
կով կըթոցնես մեծ մասը քէզապին ,
և կըթողուս որ կամաց կամաց պաղի :
Երբ որ պաղելու ըլլայ՝ տակը նստած
աղը կառնես , ու մաքուր ջրի մէջ կը-
ձգես որ հալի , և նոյն ջուրը դարձեալ
կըթոցնես կըակով մինչեւ որ խիստ
քիչ մնայ , և կըթողուս որ պաղի . ա
մանին տակը նստած աղը կառնես և
նորէն քիչ ջրով կըլլուծես , սոյն ջրէս
շիմշիր փայտէ շիյնած , և Ճիլայ եղած
բանին վրայ կըքսես , և կըթողուս որ
չորնայ , քանի մը հեղ , և խիստ յետոյ
պալմոմիլի լաթով կըշփես որ փայլի
ապանօղի պէս սեւ գունով :

Ա, ԵՐԻԵԼ ԴԱԿԱՐԸ աԼԵ ՊԵՍ ՀԱՐԴԵՐ ԳՈՒՆՆԱԼ:

Ա, ԵՄԺԵՋԻ ՅԱՌԱՆԾՍՈԼ ԸՍԱՃ ՆԵՐԿԸ
ԶՐՈՎ ԿՐԼՈւՃԵՆ, ՎՐԱՆ ՔԻՐԵՃԻ ԶՐՈՎ
ԵՓԱՃ աԼ պախամ ՓԱՅԹԻՆ ՉՈւՐԸ տաք
տաք կրլեցնեն, յԵտոյ աս ԶՐԵՍ ՓԱՅԹԻ
ՎՐԱՅ տաք տաք կրտարաճեն. թԵ որ
աս ԶՐԻՍ մԵջը քիչմը թԹու բանմընալ
աւելցնես, աւելի բաց կարմիր կրլայ:

ԱՐՈՒԵՍՏՔ ԿԱԶՄՈՒԹԵԱՆ
ԵՒ ԳՈՐԾԱԾՈՒԹԵԱՆ ՁՆԱՐԱԿԻ
ԿԱՄ ՎԵՌՆԻՃԻ

ԳԵՂ ԺԵ

Ա ՀԱՆԻՃ ԽԵՃԻ ՀԱԿԿԱՅԻ, այսինքն ՀՈՅՅԱ
ՀԱԿԿԱՅԻ :

Բ ՆՄՐԵ ԿՈ ՄՐԱՄ աՆԱՐԱՍ ԿՕՄ-
ՄԱ ԼԱՔՔԱՅԻ աղԵկ և զԵՂԵցիկ հատեր
կամ կտորներ, ջարդել զանոնք ու դիր
մԵկ բարակ շիշեկ մԵջ, մԵկ օխայ զօ-
րաւոր զինիի ոգւոյ այսինքն շարապ
ռուհիի հետ. ամանին բերանը գոցէ
և թաղէ աւազի մԵջ. և եփել մԵղմ

կրակով իրեք ժամեն աւելի, և երբ որ
վար կառնես ու կըպաղի . երկու իրեք
ժամեն յետոյ կըպարպես ուրիշ շիշէի
մէջ, և բերանը մեղրի մօմով գոցած
կըպահես՝ պէտք եղած ատենը գործա-
ծելու համար :

Պէտք եղածին չափ կըխառնեն գոր-
ծածելու ատենը բարակ լոսած (էզ-
միշ եղած) գունով, այսինքն կինաբա-
րիսով (զինձի ֆրայով) ոգւով : Առ :

Եղածի ական վէռնիմ:

1 ուա՛ 64 տրամ սանտուաքա քիչը
գինիի ոգւով, յետոյ ձգէ երկու հա-
րիւր տրամ գինիի ոգւոյ մէջ՝ ութը
տրամ աղէկ ձութի այսինքն տամլա
սախըզի, ընկուզի չափ էլէմիխէմի հետ,
և դիր տաք մօխիրի կամ աւազի վրայ.
և երբ որ ամմենը լուծի, դիր մէջը ըն-
կուզի չափ քեաֆիրի և 8 տրամ ալ-
բեւեկնի ոգիք, որ կըսվի թիրեմէնթին
ուուհու: Ես վէռնիմա աղէկ որ գործած-
վի մարմարիոնի այսինքն մէռմէռի պէս
կըպընդանայ :

Վիճակոց վեհանիձը ամենասրբագի գունդոց
հայտը :

Դիմք մէկ շիշէյի մէջ հարիւր տրամ
զինի ոգիք , ձըդէ մէջը ութը տրամ
կօմմայ լաքքայ , տասնը վեց տրամ
ձութ յոց տամլա սախըզ , և տասնը վեց
տրամ սանտաքռա , որոնք առաջ ան-
կանի մէջ աղէկ ծեծած ըլլայ . գոցէ՛
ամանին բերանը , և դիմք արեւու մէջ
չկ ժամ , կամ եփէ կրակով մէկ ժա-
մու չափ՝ մինչեւ որ բոլորովին հալին և
գինիի ոգիքը գունաւորի անցուր շուտ
մը լաթէն՝ և պահէ՛ բերանը գոց : Ար-
դնեն աս վէռնիձին մէջը ինչ տեսակ
գոյն որ կուզեն . զոր օրինակ կենափա-
րիս՝ եթէ կարմիր կուզեն , սև խու-
ռում՝ եթէ սև կուզեն) , ժանգառ
(ձէնկեառ) , եթէ կանանչ կուզեն ,
բռուսսիայի կապուտ (որ ֆռանսըզէ-
րէն կըսվի պլէօ տը բռիւս) , եթէ կա-
պուտ կուզեն . բայց պէտք է որ առաջ
քան զվէռնիձ տալը՝ փայտը բոմզայի
փոշիով շփվի :

Գաղափարի վեհական վեհականիք :

Նէծէ 16 տրամ կօմինա լաքքա և
այնչափ ալ սանտուաքա . գիր ամմէնը
շիշէի մէջ 100 տրամ զօրաւոր գինիի
ոգիքի հետ , և տաք աւազի վրայ
հալեցուր զանոնք , և յետոյ անցուր
կտաւէ : Աս վեռնիձս կըգործածին
խառնելով ամմէն տեսակ դունոց հետ՝
պէտք եղած ատենը : Իսայց առաջքան
զգործածելը , պէտք է ընել պատրաս-
տուի մը փայտին այսպէս : Դիմիր կրա-
կին վրայ սրուլը հողէ աման մը , որուն
մէջը դիր և հալեցուր նկ տրամ բե-
ւեկնի ոգիք (թիրէմէնթին ուուհի) ,
40 տրամ սանտուաքի հետ . քանի որ
տաք է , տուր ասկէ վեռնիձաւորելու
բանիդ վրան , և երբ որ կըչորնայ ապա
տուր ասոր վրան ուզած դունով վեռ-
նիձը՝ զոր պատրաստ ունիս :

Փայտի վրայ վեհականիք առաջ որ եւայեալ ջրէ
դիմանայ :

Աս վեռնիձս պատրաստելու համար
կառնեն կրտաւատի եղ 150 տրամ
այսինքն պէզիլ եազը , դեղին քէհրի-

պար 100 տրամ, փոշի քարմարցանկի կո տրամ, այսինքն միւրտէսէնք. փոշի աղեկ իւստիւպէճի կո տրամ, ֆռէն կէրէն չերուզա. սիզիկօն կո տրամ, մինիում, տՃ. սիւլիւկէն :

Ա Եռացնեն կըտաւատին եղը պըղնձէ խալայսըզ ամանի մէջ. մէկ կըծիկով մը մէջը կախելով քարմարցանկը և սիզիկօնը անանկ որ ամանին տակը չփրալչի, և այնպէս կըշարունակեն եռացումը՝ մինչեւ որ եղը ունենայ մէկ մութ գոյն մը. ան ատենը կըհանեն կըծիկները, և կըդնեն մէկ սխտորի մը պՃեղ կամ ակռայ. և ասի կըկըկնեն 7.8. անգամ, շարունակելով միշտ եռացումը : «Բ.Էհրիպարը չփրած ասոր մէջը, կըխառնեն 16 տրամ կտաւատի եղքէհրիպարի հէտ, և կըհալեցնեն աղեկ կըակմը տալով. երբ որ զանգուածը քէհրիպարին հալած է՝ կըլեցնեն կտաւատի եղին մէջը. եռացնելով խառնուրդը, և խառնելով միշտ 2 և 3 վայրկենի չափ : »Ետոյ կըքամեն կամ կըմզեն զգուշութ խառնուրդը, և կըպահեն ամանի մէջ՝ լաւ գոյած բերանը :

Երբ որ կուզեն դործածել, փայտը

առաջը լսւ մը կարծնեն, և վրան կուտան բարակ շապիկ մը այսինքն խաթ մը մեղծ (խուռում), և էսութիւն կամ ոգիքը թիրէմէնթինի . և կըձգեն որ չորնայ աս շապիկս . և կուտան միանցամ աս վեռնիճս հաւասար տարածելով պղտի բարակ սպունգով (սիւնկէրով) : Ըորս անգամ ասանկ կըկըկնեն . միայն թէ ամմէն մէկ անգամուն թող կուտան որ աղէկ չորնայ . ետքի անգամուն փայտը փուռը դնելով կըչորցնեն , և յետոյ կարծնեն (Ճիլայ կընեն) :

Պլշնչեղէն, Շօմղախեղէն, Երիթեղէն բաներու , և Աւանեւեյէ Վրայ հարծը Վեռնիճ տալ, որ իրահի ալդիմանայ :

Պլղնձէ, բիրինճէ, Թոմպախէ և պողպատէ գործիքներու վրայ պայծառ և թափանցիկ վեռնիճմը , որ յատկապէս ժանդէ պահելու համար՝ զիտեմ որ շատերուն բաղձացած բանն է , ասոր համար կըդնեմ հոս ասնոր կերպս, որ յաէնթնէու հնարեց , որ և կըսվի վեռնիճ գօբալի . և կարծեմ թէ է ան վեռնիճը , որ նոր ատենս կուգակոր

թէնէքէյէ մէվշլի աղլոր բաներ որ գիւտէս թէ արուսեակ է :

Արդ՝ ընտրէ գօբալին (սանտալօվին) Ճերմակ և թափանցիկ հատերը և դրսի կեղևներէն մաքրէ . յետոյ ջարդէ զանոնք մանր կտորվանք, լեցուր շիշէի մը մէջ մինչև ցկէսը, ու վրան մինչև ցբերանը շիշէին լից աղեկ էթէռ (ըթըռ) սուլֆուռիք ռէքթիֆիյէ, որ լօխման ոռւհիին գրէթէ ողիքն է, և յետոյ գոցէ բերանը ամանին սունկով (մանդարով), և թող որ հանգչի 24 ժամ, միջակ բարեխառն տեղմը դնելով. 24 ժամէն յետոյ երբ որ կըտեսնաս որ ուռած են գօբալին կըտորները, հանե բերնի մանդարը, և գոցէ վրան լախ մը . գլխի վրայ դարձնուր շիշէն ու թող՝ որ վազէ ամմէն ոգիքը լաթէն անցնելով, որ քիչ մը հալած է գօբալը : Օ այս վազածը պահէուրիշ անգամին համար . յետոյ դարձնուր ՚ի վեր բերանը, լեցուր բոլոր շիշէն ոօղմարինի զտած իւղովը, (որ ֆո՞ւ. կսվի էսանս տը ոօմառէն). գոցէ նորէն բերանը, և դիր քանի մը օր բարեխառն տեղ մը . ապա գործածէ ամմէն տեսակ մետաղներուն վը . ոօղ-

մարինին եղը բնական դեղին է . զրեւ
թէ բոլորովին կը ճերմը կի գօբալով :
Հօրագրութի գործատան սեպտեմբ :
1808 :

Օհանովենութեան ա :

Առ վեռնիձը մետաղներուն վրայ
տալ որ կուզես՝ պէտք է որ առաջ վե-
րի ըսած փոշիովը արձնես , և ապա
կակուզ գնձիկով (Փռչայով) մետա-
ղին վրայ տարածես , բայց՝ առաջուց
տաքցնելու է կրակարանի (մանղալի)
վրայ . թէ որ գործիքդ թօմպախ կամ
բիրինձ է , որուն վրայ կուզես մէկ ոս-
կեգոյն մը տալ , պէտք է որ այնչափ
տաքցնես զանի , մինչեւ որ մոյզ (խոյի)
դեղին գոյն մը գայ վրան . և յետոյ
անմիջապէս տաս վեռնիձը . այս վեռ-
նիձը հազիւ թէ զգալի է մետաղին
վրան , և շատ կը դիմանայ . կը նաս եր-
կան ատեն պահել վեռնիձաւոր բանը դ
կրակին վրայ և չափիր :

Յանովութեան բ :

Վիշտարի է որ անգղիացի մը զը-
տաւ ըստ պատահման նոր սքանչելի
կերպ մը փայլվուն արուսեկի նմանցը-
նել Ճերմակ թէնէքէին երեսը այս-
պէս : Ճ'երմակ ծծմբական թթուու-
տին (զաջ եաղիյին) մէջը քիչ մը ջուր,
քիչմընալ արջառպ (զաջը խըպըզ)
դնելով, գնձիկով (ֆուչայով) տարտ-
ծեց թէնէքէյին վրայ, իսկոյն թէնէ-
քէն գոյնզգոյն վառվռուն երեցաւ-
այսինքն մէվշէնմիշեղաւ: Աետոյ վրան
վերի ըսած վեռնիճը տալով զանազան
ամաններ շինեցին զարդարանաց հա-
մար. աս վերի ըսած վեռնիճս թափան-
ցիկ ըլլալով՝ զանազան գունով կըներ-
կէն զանի. և տակէն կերենայ մէֆը:
Ասանկ ալ թիւթեային վրայ թէ որ
տարտածվի՝ թթուուտն աղածական յի
թուզքէզապին աղով և ջրով մէկ տեղ
խառնած կըլլայ արուսեկի նման: Ասոր
վրայ մասնաւոր պիտի խօսինք ետքը:

Անհետինի վերաբերյալ (առաջանութեան) առաջ դեղին
պըշտիքի վրայ :

Դեղին պըղնձի վրայ կամարձաթի
և կամսոսկ պըղնձի վրայ կուտան ոս-
կեդոյն գօյն մը աս կերպովս :

16 տրամ կօմմա լաքքայ, այնչափ ալ
դեղին քէհրիպար .¹ Կօ տրամ կամ 45
տրամ արիւն վիշապի . այսինքն քառ-
տաշ քանը . $\frac{1}{2}$ քըքում (զաֆուան) և
320 տրամ ամենազօրաւոր ոգիք գին-
ւոյ որ ըլլայ գոնէ կօ աստիճան : Ա-
սոնք ամմէնը մէկէն դիր տակը կըլոր
բերանը նեղ շիշէի մը մէջ, ու բերա-
նը գոցէ բամպակով . Ետքը դիր կըա-
կին վրայ պըղնձէ ամանով ջուր, ու աս
շիշէն դիր ան ջրին մէջ, անանկ, որ
կարենայ ջուրը դըսըվանց հաւասարիւ
մէջի նիւթերուն, բայց նայէ որ շի-
շէին տակը՝ պըղնձին չիդպչի . ու սկսի
տաքնալ ջուրը այնչափ, մինչեւ ոգիքը
սկսի պղպջակներ հանել . և այսպէս
հանդարտութ պէտք է եփել չորս կամ
հինգ ժամի չափ, միայն երբեմն եր-
բեմն պէտք է շարժել շիշէն որ մէջի նիւ-

1 Սանկուետ տի տրակօնէ կըսեն քուէնկերէն :

Ըերը յուղին ու շուտով հալին . Ետքը թող որ պաղի , ու մէկ բարակ ու խիտ լաթէ մը քամէ , եղած է վեռնիցը :

Այսպիսի գոյնիցն ուն կապարի (զուրշնի) գոյն ճը առըստ երիւնէ ամանելքու վրայ որ խիստ դիմացիւն իւլլայ :

Ո՞եկ լնգղիացի¹ մը քիչ մը քարմարցանկ (միւրտէսէնք) երկթէ թիթեղի (կամ աթէշքիւրէիի) վրայ դնելով՝ դրաւ զանի կրակի վրայ . յետոյ իրեք մատին առածին չափ զըտած ծծումը աւելցուց նոյն քարմարցանկին վրայ . երբ որ բանկեցաւ ծծումքը՝ բաւական տաքնալով՝ վերցուց կրակէն , որ շուտ մը սեցած էր . զասի եղով լոսելով (էսահընելով), եղաւ կապարի մութգոյն մը . որ կըչորնայ շուտով և կըլլայ խիստ ամուր :

¹ Կապարը երելով կըլլայ կիր (քիրէ՛ք) , և սոյն կիրս դարձեալ երելով կըլլայ դեղնագոյն կիր , որ կավի քարմարցանկ , (ֆռ . լիթառժ)

Այլ աւեստէ Վրենացաց վեռանիճ, ամիկն աւե-
ստէ Գունաց համար :

Օւեծէ ութը տրամ աղեկ Ճերմակ
քապառը, 2 տրամ դօբալ ըսած խե-
ժին հետ, նոյն չափ ալ սանտռաքի
հետ, աս ծեծած փոշիէս 8 տրամ դիր
մէկ միջակ շիշէի մէջ՝ 24 տրամ գինիի
ոգիքի հետ, գոցէ բերանը շիշէին աղի-
քի մաշկով, այսինքն թրջած պաղըր-
սախով, կրակով եռացներ մինչեւ որ
բոլորովին լուծի փոշին, և կըլլայ ա-
ղեկ վեռնիճ. փայլեցներ փայտդ ա-
ղեկ մը. տարածէ փայտին վրան ինչ
դոյն որ կուզես քիչ սոսինձով, այսինքն
պալըխ թութխալիով, որ յարած ըլ-
լայ գինիի ոգիքով. երբ որ գոյնը ա-
ղեկ չորցած է, տո՛ւր վրան մէկ երկու-
անգամ առ վեռնիճէն, բայց՝ ամմէն
մէկ անգամուն նորէն վեռնիճ չիտուած
Ճիլայ մը տո՛ւր անոր :

Ուրէշ վեռնիճ հընալ, որ իմաստ աղեկ է :

Դիմիր շիշէի մը մէջ, որչափ որ կու-
զես, աղեկ մաքրած լաքա. լից մէջը
աղեկ ոգիք գինիի, որ փոշիին վրայ չորս

մատ ծածկե՛ . զոցե՛ ամանին բերանը
թրջած աղիքով (պաղսախով), դի՞ք
արեւու մէջ Յ կամ Կ օր , և կի՞մ մեղմ
կրակի վրայ , որ միանան . և երքեմն
երքեմն յուզե՛ (չալխայե՛) . Երբ որ խե-
ժը հալած է՝ անցուը լաթէ , և դի՞ք
մէկ օրմընալ արեւու մէջ . յետոյ եղած
է վեռնիձը :

Երկե՛ առաջ վեռնիձ տալու փայ-
տը ինչ գունով որ կամիս , չորնալէն
ետքը արծնէ զանի , և յետոյ վրան
տուր առ վեռնիձէն շատ անգամ , ամ-
մէն մէկ հեղուն յետ չորնալէն . խիստ
ետքը արծնէ (Ճիլա տուր վրան) :

Կայ ասոր մէկ ուրիշ կերպը՝ որ
կիեննա կըդործածէն : Կըփոշիացը-
նեն խելմը տափարակ և թափանցիկ
լաք , և կըդնեն շիշէի մէջ . վրան կըլե-
ցընեն զօրաւոր ոգիքը զինիի՝ լաքին
երկողատիկը . կուտան ասոր տաքուիմը
կո կամ Յ օստիձանի , այսինքն ձեռք
չողիմանալու չափ՝ առանց եռալոյ ,
մինչեւ որ լուծվի . և կըխառնեն փայ-
տովմը իրեք ժամէ իրեք ժամ միայն :
Երբոր լուծումը լըմընցած է , և վեռ-
նիձը չունի դեռ պէտք եղած թանձ-
րութիլ , կավելցընեն քիչ մը ալ լա-

քայի փոշի . իսկ եթէ խիստ թանձը
է կաւելցընեն քիչմը ողիք, և կըխառ
նեն կամ կըյուզեն աղէկմը դչեղուկը՝
որ կատարելագործի, և ան ատենը
կըընայ գործածվիլ:

Կառնեն մաքուր բայց հին քթան
լաթ, և քիչմը բուրդով կընեն զանի
պղտի կըծիկ մը . վրան կըլեցընեն եր-
կու մաս աս վէռնիճէս, և մէկ մաս մա-
քուր ձէթ (եղ), և ասով կըշփեն փայ-
տին վրայ շուտ շուտ բայց կակուզ,
միշտ փայտին առեցքին դին (այսինքն
տամարներուն դին) : Եթէ կըծիկին
վրայ սլակսի նիւթը, դարձեալ նոյն-
պէս կըթրջեն՝ ինչպէս առաջ ըսինք՝
երկու մաս վէռնիճ, և մէկ մաս եղ
դնելով և դարձեալ կըշփեն, մինչեւ որ
փայտին վրայ դայ թեթև շապիկմը
վէռնիճի :

Այս վէռնիճս շուտ կըչորնայ, երկ-
րորդ անգամ, երրորդ անգամ նոյն-
պէս կընեն՝ մինչեւ չորս անգամ ալ: Ո-
րովհետեւ վէռնիճը միշտ երեան կը-
հանէ փայտին պակսութիւր, հարկա-
ւոր է վէռնիճ տալէն առաջ փայտը
արձնել: Երբոր վէռնիճը խիստ չոր-
շած է և պնտացած, կարձնեն զանի

բարակ լաթով՝ որ ձեթով տողորած
է, և իւսիրովի փոշիով. առաջին ան-
դամուն պէս՝ շուտ շուտ և ուժով կը-
շրփեն՝ մինչև որ վէռնիճը աղէկ փայ-
լի, և կըսրբեն յետոյ կակուղ կըտա-
ւով կամ բարակ կակուղ կաշխով:

Եթէ վէռնիճ տալու բաները են
քանդակագործ (օյմալը), պէտք է
վէռնիճը շինել աւելի նօսր, վազող,
բաց, որ կըլայ մէջը աւելցընելով քիչ
մը ոգիք, և պէտք է տալ վէռնիճը
գնձիկով, և յետոյ սամուռի գնձիկով
ալ ոըրբել և մաքրել:

Եթէ վէռնիճ տալու բաները ու-
նենան մեծ ու ընդարձակ երես, յու-
մէյտանլը ըլլան, նմանապէս պէտք
է որ բաց կամ նօսր ըլլայ, զի խիստ
շուտ կըչորնայ տալու ատենը և միա-
կերպ չըլլար: Կըլոր բաներուն չառխի
վրայ կըրնայ տըրվիւլ վէռնիճի ձիլան:

Խառնացին վէռնիճ՝ կըմանառէն հընարած:

Ամէն գօթալ յարմար չէ աս վէռ-
նիճը կազմելու. պէտք է ընտրել փոր-
ձելով զկըտորները հետեւեալ կերպով:
Կըկաթեցնեն ամմէն մէկ գօթալն

կըտորին վրայ կաթիլ մը ռօզմառին
եղին ռուհը , այսրնքն զըտած ոգիքը
պիպէռինեի եղին՝ որ չէ ապականած ,
և միայն ան կըտորները կառնեն՝ ռ-
րոնց եղը դպած կամ ծըծած դին կա-
կուղցեր են , կամ որոնց եղը աւելի
ներգործեր է : Փոշիացնելով այսպի-
սի ընտրած կըտորները , և բարակ մե-
տաքսէ (իբեկէ) մաղէ անցնելով , կը-
դնեն շիշէի մը մէջ՝ մէկ մատի լայնուր
կամ քիչմը աւելի , և կըլեցնեն վրան
հաւասար բարձրութե՛ ռօզմառինին ռ-
գիքը , կըխառնեն փայտովմը զանի մէկ
քանի վայրկենի (թաքիքէի) չափ :

Պաօթալը կըսկսի հալիլ շողինքիպէս ,
և կըլլայ խիստ թանձը հեղուկ մը . կը-
թողուն որ հանգչի երկու ժամի չափ ,
յետոյ կըկաթեցնեն մէջը երկու իրեք
կաթիլ զօրաւոր և զտած ոգիք դինիի
կամաց կամաց ասդին անդին ծըռելով
ամանը՝ լոյծ (սուլու) մասը ժուռ կա-
ծեն : Աս կերպովս կըյարի , և սոյն գոր-
ծողութիւնս կըկըկնեն , մինչեւ որ աս
վէռնիշը կըհամնի պէտք եղած հեղու-
կութել : Եթէ դիտվի , կըտեսնըվի որ
առաջին կաթիլը դինիի ոգիքին դը-
ժուար և երկան ատեն կըսարի , քան

թէ Երկրորդ կաթիլը որ յետոյ կը-
դնես . և այլն :

Երբոր վէռնիձը կըհանի յարմար
աստիճան հեղուկութէ , կըթողուն որ
հանգչք քանիմը օր . և Երբոր աղէկ իս-
տակ կըլլայ , կառնուն վրայէն (սիւզմիւշ
կընեն) . մասցածին վրայ կըդնեն կա-
թիլմը գինիի ոգիք՝ ինչպէս վերը ըսինք
և այլն , բայց քիչ քան զառջինը :

Աս վէռնիճս պաղ կըգործածեն ,
շատ իստակ է և անգոյն : Կըգործա-
ծեն մուխավայի վրայ , փայտի և մե-
տաղներու վրայ : Այն վէռնիճս հեշտ
կըտարածվի և հեշտ կարծնըվի (Ճի-
լայ կըլլայ) քան զուրիշ հասարակ վէռ-
նիճները :

Փատկերքի և այլ քաշուածներու
վրայ ալ կուտան աս վէռնիձը , և շատ
աղուորութիմը կուտայ անոնց :

Ա ԷԿԱՆԻՁ . 3 :

¹ Ոգիք գինւոյ յոյժ զօրաւոր 32 մաս-
ձութ (սախըզ) մաքուր 6 սանտա-

¹ Զօրաւոր ոգիք գինւոյ ունենալու համար
մինչև 46 աստիճան , պէտք է հասարակ զօրա-

ռաք Յ. թէռէպէնդին Ա ենետիկու
խիստ պայծառ Յ. խոշորիեկ՝ ծեծած ա-
պակի (Ճամ) Կ : Փոշիացնելով ձութը
և սանտառաքը, գիր ամմէնը շիշէի մէջ
բաց 'ի թիրեմէնթինէ . և նոյն շիշնալ
դիր եռացեալ ջրի մէջ մինչեւ երկու
ժամ . խառնէ երթեմն ապակի գաւա-
զանաւ . ապա գիր և զթիրեմէնդինը
նոյն շիշէին մէջը , և կէս ժամ ալ շա-
րունակէ ջրին եռացումը , և թող .
վաղվան օրը պարզէ (սիւզմիշ ըրէ)
բամպակով :

Աս վէռնիձը հասարակօրէն կըզոր-
ծածվի , չէքմէջէից վրայ , տուփերու
վրայ , թանձրուտ (մուխավա) բանե-
րու վրայ , և բեհեղեղէն կըտրըված
բաներու վրայ (այսինքն չախմա կըտ-
րըված ճանֆեսից վրայ) , որ շիտակ
կայնին :

ոոր ոգիբին մէջը դնել հաւասար բաժին աղա-
ծական կրի (muriate de chaux) և թողուլ որ
մարսի գոց ամանի մէջ : Ապա շոգիացուր կէ-
ոը ոգիբին . մնացած մէկալ կէսը տկար է :

Աշուա Հերնիճ. Է :

Պաօթալ 16 մաս, կտաւատ եղ 8 մաս,
որ տասնին մէկը միւրտէսէնկով եփած
է . նէֆթեղին ոդիքը 16 մաս : Հալե-
ցուր գօթալը շեշէի մէջ, միջակ ջեր-
մուի տալով, ետքը լեցուր վրան կտա-
ւատի եղը եռացուցած (խայնար) .
խառնէ մաքուր գաւազանովմը : Եր-
բոր ջերմութիւնը կիջնայ 60 կամ 70
աստիճան . այսինքն եռացումէն 10 կմ
20 աստիճան վար, դի՛ք մէջը նէֆթեղին
ոդիքը տաք տաք, անցուր շուտով մը
կտաւէն . և պահէ լայն քերան ապակի
ամանի մէջ : Ջամանակ անցնելով կը-
պայծառանայ, և գրեթէ անդոյն կըւ-
լայ :

Ասի կըտրվի կառքերու վրայ ներ-
կը տալէն ետե . երկաթի, թուճի,
պղնձի, փայտի, կանթեղի, և չայտանի
վրայ :

Ա Հանիճ Ք . ժիարի (ժէմանի) համար :

Փոշի քէհրիպարի չորս ունկի դի՛ք
եփած կտաւատի մէկ լիտր եղի մէջ, և
յարէ . թէ որ աս իւղոտ վեռնիճին
6

մէջը դնես նէ ֆթ եղին ոգիքը և յա-
րես, կըլլայ քնարի վեռնիշ :

Եւ թէ որ աս վեռնիշը տաք տաք
տաս թուշի վրայ, և յետոյ աաքցնես
զթուշը՝ որպէս զի նէ ֆթ եղին ոգիքը
թուշի, կառնէ աս թուշը մէկ գոյնմը
աւելի կամ քիչ մութ կարմիր, որուն
ոչ ջուր և ոչ ոգիքը դինիին կըներ-
գործէ :

Ա ՀԱՆԻՇ. դ :

Ճ'երմակ մեղքէ մոմը լուծելով ափ-
սինթի աղով, (ֆելին թուղիով), և
յետոյ շփելով որ բանին վրայ որ կու-
զես, կըլլայ վեռնիշմը փայլուն, և
չայլայլիր ջրէն :

Ա ՀԱՆԻՇ պատիերաց :

Պատկերաց վրայ վեռնիշ կըտըրվի՝
որ զգուները կենդանացընէ և պահէ,
և ոչ եթէ փայլեցընելու համար, որ
կըշփոթէ և կարգելէ առարկաներուն
ամբողջ տեսութը : Կմանապէս զգու-
շանալու է՝ որ չի գեղնըցընէ ալ, այլ
մանաւանդ պէտք է որ աս վեռնիշը

թափանցիկ ըլլայ թեթև և անօսր .
ուստի ամմէնէն աւելի նախապատիւ է
բեեկնիին ոգիքը (այսինքն թիրէմէն-
դիին կմ նէֆթ եաղի ոռւհին), բայց
որպէս զի աղէկ ըլլայ ամմէն պահան-
ջած թէուիովը , պէտք է ձութը այս-
ինքն շահտանէ սախըզին խառնել բե-
եկնի հետ , կամ մէկ տեղ հալեցընել
թիրէմէնդիի ոգիքին մէջը (մէկ մաս
ոգիք , ու կէս մաս ձութ) , և յետոյ
քամելլաթէ , և թողտալ որ իստակ-
նայ . աս վէռնիչը զգուշութք շինելու
է , որ չի բոլնկի :

ՆԿԱՐՉՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ
ԳՈՅՆՔ

Գ. Լ. · Ժ. Ա. ·

Ալեք շինելոյ Ա, աբօլիկ դեղին :

Առ հողէ լամակիքմը , որուն տակի
դին ծեփէ ցեխովմը (չամուռովմը) ,
որ բաղկացած ըլլայ իրեք մասին մէկը
եղուտ հողովմը (ընտոր լիւլէ չամու-
ռին) . և վեցերորդ մասը խառնած

ըլլայ մեռած գլխովն արջասալին կամ՝
գողգոթարով։ Հետոյ դիր աս լամպի-
քին մէջը 22 մաս աղեկ սիղիկոն (սիւ-
լիւկէն), և երկու մաս անուշադր (նշա-
տըր), որ աղեկմը անկանի մէջ փոշի-
ացած ըլլան, և մէկմէկու հետ խառ-
նած, և քիչմը ջրով ցողցղած զան-
դուածմը եղած ըլլան առաջուց, և աս
լամպիկիս մէջը այնչափ տեղը լեցընե-
լու է, որչափ որ լամպիքը կրակին մէ-
ջը պիտի թաղվի. յետոյ ծեփէ բերնի
գլխակը և զիսողովակը՝ խմօրովմը, որ
շինած է ալուրի սոսինձէն (մալէզէն).
ու երբոր աղեկմը չորցած է ասի, ըս-
կըսիր տաքցընել զլամպիքն քիչ քիչ,
և սաստկացներ հետ զհետէ կըրակը՝
մինչեւ որ աս ամանին տակը կըսկըսի
քիչմը կարմըիլ. և երբոր գործողուիլ
լըմնցած է՝ մարէ զկըրակը, և թող որ
պաղի ամանը :

Հետոյ կըդանաս լամպիքին տակը
զանգուածմը, զոր հանելով և դնելով
քուրայի մը մէջ, և սաստիկ կըրակով
հալեցընելով թափէ երկըթէ փայլուն
գաղափարի (խալըսի) մէջ։

Արքուն շնորհած ՀՅՈՒԽ էաբիր :

Ասպուռէն եղած կարմիր գոյնը ,
միշտ իւր մէջը գեղնութիւն մը ունենա-
լով , անհաջոյ կըլլայ ու աղտօտ . ուս-
տի արհեստաւորաց գաղտնիքը աս է ,
որ առաջ լաւմը կըլլան զասպուռը
այնչափ՝ որ մինչեւ ալ գեղին ջուր չի-
տայ : Ետքը թրջելով զանի՝ ասոր ջրին
մէջը կըթաթիւն բամպակէ կտաւ կմ
աստառ , որ լաւմը ծըծէ , յետոյ աս
կըտաւը ձգելով մետաղական կալաքա-
րի (այսինքն մաքուր քալեայ թաշիի)
լուծութեն մէջը , քակել կուտան զգոյ-
նը . ետքը մէջը դնելով մէկ թեթև
թըթվուտմը , զոր օրինակ լիմոնի ջուր ,
կարմիր գոյնը կըտորտանայ (չէօքմիշ
կըլլայ) տակը կիջնայ , լուծած սօտայ-
ին (մաքուր քալեայ թաշիին) հետ . ո-
րով կըլլայ խիստ լուծանելի կարմիր
աղմը :

Փարիզի մէջ կըծախվի բարակ թըլ-
թէր՝ որոնց մէկ դին աղուոր բիրինձի
գոյնմը տարածած է , որ քիչմը թա-
ցութ յարելով՝ կուտայ խիստ աղուոր
վարդի գոյն , որ կըգործածեն , թէ
հաստատուն մարմին , թէ բամպակ , և

թէ բուրդ ներկելու համար : Այն գոյ-
նը հեղուկ ալ կը ծախվի, այսինքն սու-
լու մանտրը Ճերմակ հողէ ամաններու
մէջ : Ասոր շինելու կերպը գրեթէ նոյն
է վերի ըսածիս պէս :

Դանելով ասպուռը կտաւէ տոպրա-
կի մէջ, կը թըրջեն անձրեի կամ գետի
ջրով, և ոտքով կը կոխ կը ուտեն մինչե-
որ ջուրը ալ չի գեղնիր : Երբոր աս-
պուռին դեղին նիւթը պակսեր է, կը-
խառնեն իր ջուրին 12 անգամ աւելի
ծանրութեն չափ անուշ ջուր, այսինքն
12 խաթ ջուր, և անոր մէջը կը դընեն
15 անգամ ասպուռէն աւելի մետա-
ղական կալաքար (մաքուր և Ճերմակ
քալեայ (թաշի), որ ֆռանսը կերէն կը ս-
վի քառապօնաթ տը սուտ : Աս ամմէնը
մէկտեղ խառնելէն ետեւ, կը թողուն
որ 2 ժամ հանգչի, և յետոյ կը քամեն
կը տաւով . աս քամած ջուրը դեղին է .
ասոր մէջ կը թաթիսեն բամպակ կամ
քամպկէ կտաւ, մէջը կը քամեն լիմօնի
ջուր, միշտ աղէկ խառնելով ամմէնը :

Առամպակին կը տորները կառնեն քիչ
քիչ բաւական զօրաւոր կարմիր գոյն .
24 ժամէն յետոյ հեղուկը բոլորովին
կը պակսի կարմիր գոյացութենէն, այն-

սլես որ ալինչ դնես մէջը չի կարմրիր:
 Աերկած բամպակեղեն բաները լը-
 ւալով սլաղ ջրին մէջ մինչև որ ալ չի-
 կարմրի ջուրը, կըտաւին գոյնը քիչ
 փայլուն (շաֆխլը) կըլլայ, բայց միշտ
 աղուոր է: Ի՞ս ներկած կըտաւը դնե-
 լով յետոյ տաք ջրին մէջ՝ որ քսան ան-
 զամ առաւել է քան զկշիռքը չիլուա-
 ցած ասպուռին՝ որ գործածեցինք ա-
 ռաջ. և աս ջուրիս մէջ լուծած է աս-
 սլուռին 10 մասին մէկը մաքուր մե-
 տաղական կալաքարը, կըթողուն մէկ
 ժամու չափ մէջը, կըշաղուեն աղէկմը.
 Ջուրը կըդեղնի, իսկ կըտաւը ընդ հա-
 կառակիը կըլլայ սլաղ վարդագոյն, ցո-
 սօլուխ բէմալէ. և աս գոյնս այնչափ
 կաղուորնայ՝ որչափ որ լըվացվի յետոյ
 մաքուր սլաղ ջրի մէջ:

Կ աղուած կըտաւը հանելեն ետե,
 մընացած ջրին մէջը խառնելով լիմոնի
 ջուր՝ այնչափ որ քիչմը թըթվուանայ,
 իսկոյն հեղուկը կունենայ աղւոր վար-
 դի գոյն, որ 'ի սկզբան երեսը կերե-
 նայ, և յետոյ քիչ քիչ ջուրը իստակ-
 նալով, ամանին տակը կինայ խիստ
 քարակ կարմիր փոշիմը՝ որ ջրէն զատեկ-
 լով կամաց կամաց կըչորցընեն պնակիտ

(Թապախի) մէջ , որ կըսվի տնկական
կարմիր կամ փոռթուխալի փոշի :

Այս փոշիս յարելով լիմօնի ջրով՝ կըւ-
լայ կարմիր հեղուկ մը . ետքը գնձի-
կով կառնեն ճերմակ պղտի ամանի մէջ
կամ խավանօղի մէջ և կըչորցընեն :
Խոկ եթէ որ թղթի վրայ առնեն և չոր-
ցընեն դնելով քանիմը շաբաթ օդա-
ւոր , այսինքն բաց տեղմը կերենայ կա-
նանչ , դեղին , կամ բիրինճի դոյն :

Հարուր օխայ ասպուռը կուտայ եր-
կու հարիւր տրամ աս կարմիր փոշիկս ,
բայց այս քանակութիւնը կըտեւէ շատ
երկան ատեն , զի թեթև ըլլալով շատ
կըքաշէ :

Կերպ շինելու աղէի լահ խըստընէն :

Այս լաքը մի հասկընար կոմալաքան,
այլ կարմիր կամ ալ փոշիմը որ կըդոր-
ծածվի քաշուածներու համար : Առ
խելմը աղէկ խըռմըզ , և դիր շիշէիմը
մէջ . վրան լեցուր իր կըշիռքին երկու
չափը զօրաւոր ողիք գինիի , և այնչափ-
մընալ շոգիացած այսինքն իմպիկէ ե-
լած ջուր , և թող որ թափէ դոյնը քա-
նիմը օր անուշ կըակի քով . քամէ ցու-

սիւզմիւշ ըրէ յետոյ բոլորը . և դիր
մէջը քանիմը կաթիլ¹ անագի , այս
ինքն խալայի լուծութի . Ալսկըսի ա-
մանին տակը տորտանալ աղէկ կար-
միր մը . Երկու ժամէն երկու ժամ շա-
րունակելու է քանիմը կաթիլնոյն լու-
ծութենէն , մինչեւ որ ամմէն գունա-
ւոր մասունքները տորտանայ (չէօք-
միշ ըլլայ) , և յետոյ վրայի ջուրը կա-
մացմը թափելով , մնացածը շատ ջրով
լուանալով և ջրէն զատելով կըչորցը-
նես ու կըպահէս պէտք եղած ատենի
համար :

Հանել աղէկ կարմիր լահ՝ պորոն (չէօքիւ պօյա)
արմադէն որ Քուանսըզէրէն էլսալի կառանս :

Կըդնեն ութը տրամ աղէկ տորոն
պզտի տոսլրակի մը մէջ՝ որ կարած է
հաստ բամպակեղէն կըտաւէ , և մե-
ծութիլ կըրնայ առնել դրածին քա-
ռապատիկը (չորս խաթը) : Այս տո-
պրակը կըդնեն քարէ անկանի (հավա-

¹ Երկու մաս քէզասկ մէկ մաս թուզ ոռւհի
կըխառնէս , կըակի վրայ քիչմը կեռացընէս , որ
գէշ ծուխերը ելլայ , յետոյ մէջը կըձգես խա-
լայ՝ որ լուծի :

նի) մէջ, վրան կըլեցընեն Երկու հարիւր տրամ անուշ ջուր, և կըձգմեն զանի ուժով մինչեւ որ ջուրը մութ կարմրի, աս ջուրը կըքամեն կառնեն, յետոյ նորէն ջուր կըդնեն և այնչափ կընեն՝ մինչեւ որ աւ չի կարմրիր ջուրը, կամ թէ աղօտ գոյնմը կունենայ։ Այս գործողուն մէջը գրեթէ հազար տրամ ջուր կըդործածվի։

Այս կարմիր հեղուկը կը կըլեցընեն անպաւոր ամանի (խալայլը խազանի) մէջ, և կըտաքցընեն՝ մինչեւ որ աղէկ եռայ։ Հետոյ կըվերցընեն և կըլեցընեն Ճերմակ հողէ ամանի մէջ, մէջը կըդնեն ութը տրամ պաղլեղ (շապ) ջրով հալած, և կըխառնեն աղէկմը, յետոյ մէջը խելմը բօթասի (մոխրաղի կամ բելին թուզիի) լուծուի կըխառնէն, այնչափ որ անուշցնէ պաղլեղին թթուն։ Հեղուկը կըսկսի փրփրիլ, և նոյն ատենը կըտորտանայ ամանին տա կը աղուոր կարմիր գոյնմը։

Երբոր աս հեղուկը կամ լուծուիր պաղի, վրայէն դեղին խտակ ջուրը կառնեն, մնացած կարմիր փոշին եռացեալ (խայնար) ջրով կըլըւան, և կըթողուն որ կամաց կամաց չորնայ։ աս

չոր կարմիր փոշին գործածած տորոնին
չորրորդ մասին մէկն է :

Ի՞ս գունաւոր փոշին աւելի կատա-
րեալ կըլլայ , փոխանակ չոր տորոնի՝
թարմ (թազէ) արմատը գործածե-
լով այսպիսու : Կըծեծեն նկ տրմ թարմ
արմատը տորոնին թուճ անկանի (հա-
վանի) մէջ փայտէ կոթով , մինչեւ որ
ըլլայ թանի (թառխանայի) թանձ-
րութի : Ի՞ս ջրոտ խմօրը դնելով յե-
տոյ բամսլըկէ առալրակի մէջ , կըշա-
ղուեն ջրով մինչեւ որ ամմէն գունա-
ւոր մասը փոխէ : Կունաւոր ջրին մէ-
ջը կըդնեն ութը տրամ պաղլեղ , և
խելմը մոխրաղ (բելին թուզի ,) ինչ-
պէս վերը ըսինք . կարմիր լաքը մաքուր
ջուրէ անցընելու է , և հասկա չորսը-
նելու :

Ի՞ս կարմիր ներկս կուգայ հոս Ա ի ին-
նայէն . օխան քսան դուռուշէն աւելի
կըծախվի , նախաշները կառնեն ,

Ալեքու շինելու ահագոյն ժողի :

Պէտք է փոշի ընել $\frac{1}{8}$ կենդանիի ա-
ծուխը (քէօմիւրը) եղջիւրի (պույնու-
զի) կամ սակորի, $\frac{7}{8}$ աղէկ իւղոտ չամ
փայտին ածուխին հետ, և մէկ մէկու
հետ աղէկ խառնելէն ետե, պէտք է
դնել մէկ քուրայի (բօթայի) մէջ, և
կամ սըռսըզ յախճապակ (ֆառֆու-
ռի) ամանի մէջ, յետոյ բերանը ¹ ա-
ղէկ ծածկելէն ետե, պէտք է թաղել
ամանը բոլորովին ածուխի փոշիի մէջ,
յետոյ չորս դիէն ածուխ լեցունելով
տալու է զօրաւոր կըրակ իրեք ժամու-
չափ, և յետոյ թող տալու է որ պա-
զի. և երբոր բացվի կըտեսնըվի որ մին-
չև յախճապակէ ձերմակ ամանը ալ
աղուոր գունով սեցած է: Ասսե գոյնը
շատ բանի կըծառայէ:

1 Քուրային կափարիչին, այսինքն խաբախի
մէջը տուաջքիչ մը ջուր կըլեցնեն ու շուտմը
կըթափեն, և յետոյ ծեծած ալակիի (պիլո-
ռի) փոշի կըցանեն, և կըդոցեն քուրային բե-
րանը:

Ալեքու շինելու հանահնչեա էապոյտ գոյն :

Կըփոշիացընեն անկանի մէջ հաւասար բաժին աղեկ ժանդ (Ճենկեառ), և քուշմօռթառթառ, մէջը կըլեցընեն Ց մաս ջուր, և ամմէնը մէկ պուխալի մէջ դնելով, թող կուտան որ մարսը վի ութը օր անուշ տաքութը : Հետոյ կըմըզեն (սիւզմիւշ) կընեն, և մէջը կաւելցընեն ժանդառի կշռին ութը մասին մէկը խէժ (առասլ զամիսի), և կըըռնեն ամանը մեղմ տաքութե վրայ մինչեւ որ խէժը հալի :

Դանկ կունենան աղուոր կանանչ գոյնմը, որ կըընան բաց ընել կամ մութ (խօյի), որչափ որ աւելի կամ պակաս կըշոգիացընեն, այսինքն ջուրը կըթոցընեն :

Կապութը :

Կառնեն աղեկ լեղակ (չիվիտ), և կըփոշիացընեն ապակի անկանի մէջ. յետոյ վրան կըլեցընեն իր կըշոքեն չորս անդամ աւելի զօրաւոր Ճերմակ ծծումքի ոգիք (այսինքն զաճ եաղի). աղեկմը խառնելին ետե՛ կըլեցընեն

շիշէի մէջ, և կըթողուն որ հանգչի 2/4
ժամ. յետոյ աս խառնուրդին վրայ
կըլեցընեն 12 անդամ աւելի իրենց
կշռքէն անձրեի ջուր, և կանցընեն կըր-
կին (երկու խաթ) լաթէ :

Դիմուալու համար թէ որչափ մոխ-
րադ (բելին թուզու) դնելու է մէջը՝
որպէս զի չէզոքանայ դրած թթուտը,
կառնեն քիչմը չափով լաթէ քամա-
ծէն, և կըխառնեն ջրի հետ, և կը-
դնեն մէջը մոխրադ, և կըտեսնեն որ
կոյնը բոլորովին կընստի ամանին տա-
կը, այնպէս որ թէ աւելի դնեն ալ չի-
նստիր, կիմանան համեմատութք թէ,
բոլորին որչափ մոխրադ դնելու է :
Աստի յետոյ կըլուծեն բաւական մոխ-
րադ ջրով, և կանցընեն աս լուծուիր
թղթէն, և կըհեղուն լեղակին վրայ :
Խառնուրդը կըսկըսի փրփրիլ, և կըս-
կըսի նըստիլ ամանին տակը խիստ ուշ
մէկ կապուտ տորտ մը շատ բարակ .
կառնեն վրայի խստակ ջուրը, մնացա-
ծին վրայ կըլեցնեն տաք ջուր այնչափ՝
մինչև որ համ չունենայ . յետոյ դար-
ձեալ վրայէն առնելով խստակ ջուրը,
կըսորցընեն ձերմակ սինակի (թապա-
խի) մէջ, և կըլլայ խիստ բարակ կա-

պուտ գոյնմը , ինչ խառնը վի մէջը՝
քանի որ չէ չորցած լուծութիւն՝ Ափ-
րիկայու խեժ (առապ զամիսի) կըլլայ
աղուոր կապուտ գոյն գործածելու հա-
մար :

Աերու շինելու Բաօբիութաւէ դեշին ուեմբ
պաղան էիրէ :

Կըխառնեն հարիւր տրամ պառիթ
փոշի եղած , 16 արամ ածուխի խիստ
բարակ փոշիի հետ . աս խառնուրդը
քուրայի մէջ լեցընելով , կըդնեն հա-
լոցական բռան մէջ կամ օճախի մէջ .
կուտան սաստիկ կրակ երկու ժամու-
չափ : Երբոր քուրան պաղած է , այս
մոխրագոյն զբնձապի սև եղած խառ-
նուրդ նիւթը , կըդնեն յախձապակ
կամսըլը ամանի մէջ , խառնելով հե-
տը 32 տրամ կիր եղած տէմիր պօզա-
նի բարակ փոշի , որ ֆուէնկէվար կըսվի
անդիմօնիօ քուուտօ . այս զանգուածս
յետոյ կըլուծեն ձգելով օխամը եռա-
ցեալ ջրի մէջ , և կըշարունակեն նոյն
եռացումը կէս ժամ . խիստ յետոյ որ
վար կառնեն , կըդնեն մէջը օխայ ու

կես ջուր , և խիտ լաթէ կանցընեն ա-
մէնը . լաթէ անցած նիւթը գինիին ման
մութ գեղին է , և կը տորտացընեն զա-
նի քացախով¹ : Ամանին տակը նըստա-
ծը՝ ջրով լըւալով մինչեւ որ անուշնայ
ջուրը , յետոյ լաթի վրայ կառնեն և
կը չորցընեն :

Ասոր գոյնը մութ Փօռթուխալի գե-
ղին է . թէ որ մէկը կուզէ անկէ բաց
ընել կամ ճիշտ Փօռթուխալի գոյն
ընել , պէտք է որ տորտացընէ ճերմակ
արջասպի եղով , այսինքն զաջ եաղիով ,
որ կիսով չափ ջրի հետ խառնած է ,
փոխանակ քացախ դորձածելու :

Ճերմաէ գոյն աւելէ յարմար նէաբնութե :

Որովհետեւ իւստիւպէջը , կը գեղնի
ատեն անցնելով , և ինչ և իցէ թըթ-
վուտմը դպչելով իրեն՝ շուտով կայ-
լայլի , ասոր համար հիմակվան ատենը
թէնկարըութե և թէ պատկերհանուե
աւելի քան զամենը յարմար կը դատ-

¹ Տորտացնելու համար՝ պէտք է քացախը
քիչ քիչ լեցնել , մինչեւ որ բոլոր փոշին տակը
նստի :

վի և կըգործածվի այն փոշին, որ կը-
շինվի այսպէս :

Հաւասար բաժինը պաղլեղի լուծու-
թեան և քացխակ կապարի (խուռացուն
թուզիի) լուծութե իրար խառնելով,
որ իսկոյն կըտորտանայ կապարը սպի-
տակ գունով ամանին տակը, որ ջրով լը-
ւալով ու չորցընելով կըպահէն՝ պէտք
եղած ատենը գործածելու համար :
Ասի շատ աժան կըլլայ, թէ որ պաս-
մաճիները գիտնան գործածելաս խառ-
նուրդին ջուրը փոխանակ պաղլեղի, և
տակի տորտը նկարչաց ծախեն :

Ասոր կերպը՝ կըխօսինք երբոր պաս-
մաճիութե վերաբերած բաներու վը-
գրենք, թէ ինչպէս կըընան գործածել-
գուներուն աւելի հաստատութե և ա-
զուորութեան համար :

‘Ա, Ի՞ն իւրական մեր մահ իւստիւպէմ շինել:

Առաջ աղէկ իւստիւպէմը կըշինվեր
Քուէմա քաղաքը, հիմա փոխադրեցաւ
՚ի Ա իւննա, և մանաւանդ Վլաժան-
ֆիւթեր քաղաքը . աս գործատանը
իւստիւպէմ շինելու նոր կերպը հրա-

տարակեց քաջալերական լնկերութիւն
այսպէս :

Ո՞ւ աքուր կապարի թիթեղները կմ
բարակ տախտակները կըկախեն պը-
տուկներու վրայ, որք լեցուած են վայ-
րի խնձորով շինած քացախէ . աս պը-
տուկները տեղաւորած են մէկ սենեկի
այսինքն օտայի մէջ՝ որ սուպայով խիստ
տաքցուցած է . կապարին բարակ տախ-
տակները քացախէն ելած գոլորշիքէն
բարեկնալով կամ ուտվելով կըբրդին՝
կտոր կտոր կիյնին պտուկներուն մէջը,
և կըճերմըկին : Հետոյ լրւանալով կը-
զատեն աւելի բարակ փոշիները, և ա-
ղէկները խոշորներէն կամ գէշերէն .
ասկէ է որ այլ և այլ տեսակ իւստիւ-
պէճներ կան :

Լ ըւալու կերպը գործաւորաց վար-
պետութիւնն է զատել աղէկը գէշէն .
Ճերմակագոյն իւստիւպէճը է խիստ
մաքուրը, որ միայն սղատկերհանութե-
և նկարչութե համար կըդորժածվի :
Եւ որովհետեւ սոսկ իւստիւպէճը գըն-
ձիկի աղէկ չիդար, և զարդարանքի
նկարներուն աւելի յարմար գոյնմը ու-
նենալու համար, կըխառնեն մէջը կըա-
քար (քիլէճ թաշը կամ մէռմէռ), և

շատ տեղ կըխառնեն երած ծծմբակ՝
պառիթի՝ որ աւելի յարմար է, և շատ
տեղ ալ չեն խառներ աս նիւթին երա-
ծը, այլ կըխառնեն չերածը որ գոյնը
աւելի ձերմակ մնայ :

Այսպուածք գոյն հասարակ գանվարին ծաղիկ :

Վանդարիօն ծաղիկը իրեք տեսակ
է, գեղին, կարմիր և կապուտ։ Աս կա-
պուտ ցեղը քիչմը խոշոր է, որ լատի-
ներէն չիանուս ալ կըսվի, ցորենի ան-
դերու (թառլաներու) մէջ շատ կը-
բուսնի, մանաւանդ Ալփիա կամ Ո՞-
ռայու լեռներու վրայ շատ կըդըտնը-
վի . ասի կըժողվեն իր խանտիլովը, և
թղթի վրայ տարածելով կըչորցընեն
բարեխառն տաք սօպայի վրայ : Ըս-
դիկները, որ կիսաչափ չորցած են, կը-
ցողէն վրանին քիչմը առապ զամփիով՝
որ լուծած է ջրով, և կըսկսին շաղուել
ամմէնը մէկտեղ, որպէս զի հաւասար
ամմէնը տամկանան խեժին ջրովը . ե-

1 Պառիթ, որ 'ի մեր լեզու ծանրոյթ, է մաս-
նաւոր ըստիտակ քարմը՝ որ քան զամմէն քարը
կամ հողը ծանը է բնութը. ասոր ծծմբակը չե-
հալիր ջրին մէջ :

զած խմորը կըդնեն երկու թղթի մէջ,
և վրան ծանր բանմը կըդնեն որ կո-
խէ : Քանիմը օրէն յետոյ քարէ ան-
կանի մէջ կըյարեն լոսելով , մէջը ա-
ւելցընելով քիչմը պաղլեղի , այսինքն
(շապի) ջուր , յետոյ կըքամեն և ջու-
րը կառնեն , և սոյն քամած ջուրը սրո-
ւը ամանի մէջ դնելով՝ կըշոգիացընեն ,
այսինքն կըթոցնեն . ամանին տակը
կըմընայ աղուոր կապուտ դոյն մը տըն-
կական :

ՊԱՏԿԵՐՀԱՆԱԿԱՆ ՀԱՍՐՔ

ԳԼՈՒԽԻ.

Ո ադրասապութեան ալարին հանահան պակապահի ,
հատեի , և գուներու իշղային նիշարագընութե-
համար ըստ ներուե կրտանդիի :

Աս պատկերհանս հնարեց նոր կերպ-
մը պատկերք քաշելու այսպէս : Խոշըր-
կեկ կըմանըն կոտրտելով ոչխարին
ոտվըներուն ոսկորները , և կեփեն ջրով
եղէն զատվելու համար . յետոյ նոյն
ոսկորները դնելովք օթայի մը մէջ կե-

ըեն կրակով՝ մինչեւ որ կիր (քիրէճ) դառնայ, և ապա կըփոշիացընեն :

Ալբատրաստեն խմորմը աղէկ ալուրէ, և կըչորցընեն զանի մեղմ տաքութ կրակի . յետոյ կառնեն հաւասար կըշուով աս խմորէս, և վերի ըսած ոսկրին փոշիէն, և մէկ տեղ խառնելով կըլուեն (սահ կընեն), և յետ շրփելէն՝ փայտեղէն տախտակը սունկ քարով (բոմզայով) կըցանեն վրան աս պատրաստած և լոսած փոշիէն քիչմը, և շրփելով սունկ քարով՝ կըտարածեն վրան զփոշին այնչափ՝ որ գոցվին փայտին ծակտիքը : Յետ այնորիկ գնձիկով ալկուտան վրան շապիկմը ալնոյն ջրով յարած փոշիէն, և երբոր չորցերէ, տախտըկին վրայ կըկպցունեն աւազաւոր թուղթ, և անոր վրայ ալկուտան թեթև շապիկմը նոյն բաղադրած փոշիին ջրով յարածէն, և կամ թէ որ կուզեն միանգամ կամ երկուք ալկուտան, որպէս զի կատարեալ, ըլլայ ծըծողութիւր :

Յառաջ քան զբանելը կամ զնկարելը ներկերով, պէտք է տալ աս տախտակին վրայ մէկ շապիկ մը եփած կտաւատի (քէթէն թօհումիի) եղով և կի՞մ

մեկոնի (խաշխաշի) եղով՝ որպէս զի խիստ ծծողութիւն հիման բարեխառնի :

Խակ լաթի վրայ քաշելու պատկերքին հիմը կամ տակը պատրաստել պէտք է, գրեթէ նոյն վերի ըսած կերպովը . միայն թէ ինչ գոյն որ կուզեն նոյն բաղադրութեն մէջը խառնելով կուտան հիմանը, այսինքն կըտաւին կամ աստառին վրայ, մէկ երկու և իրեք անդամյետ չորնալէն, հաւասարապէս շապիկ մը :

Գործածելու գուները պէտք է որ պինտ առաջլոսած ու սղկած (էզմիշ) եղած ըլլան իւղով, մաքրելով զայն յետագայ կերպովս :

Պիտք է ընել թանձրըկեկ խմորմը երած ոսկորին մոխիրէն՝ որ փոշի եղերէ, ջրով շաղվելով զանի . զոր գնտակի ձեռվ կըլորցընելով կըդնեն կրակի մէջ, որ կաս կարմիր կըլլայ . յետոյ կըվերցընեն կրակին մէջէն, և անմիջապէս տաք տաք կըձգեն եղի մէջ, որոյ քանակութիւնը ըլլայ նոյն գնտակը ծածկելու չափ : Երբոր կըպաղի եղը, կըպարպեն շիշէի մէջ, խառնելով հետը քիչ մը ոսկը մոխիրէն . 24 ժամ հանգչելէն ետեւ՝ կիստականայ (տուռուռլմիշ

կըլլայ) եղը . և կըրնայ լաւ գործած .
վիւնըկարելու համար :

Երելով ոսկըրները ոչխարին ոտվը -
ներուն պայծառ և զօրաւոր (քէսկին)
կըակով , մինչեւ որ խիստ Ճերմըկին , լո-
սելով յետոյ , և խառնելով եղին հետ
կունենան անայլայլելի Ճերմակ գոյնմը :

Այն ոսկորները երելով գոց ամանի
մէջ , զոր օրինակ գոց փոթայի մէջ ,
կունենան շադանակի այսինքն քեստա-
նէի գոյնմը :

Փռանսայի բիռիթ մառսիալ կամ
սիւլֆիւռ տը Փէռ ըսած նիւթը է բը-
նական մետաղական խառնուրդ հանք-
մը 'ի ծծըմբէ և երկաթէ՝ դեղին ոս-
կեգունով բանմը , որուն ամմէն մէկ
սառնորակ մասանց ձեւը կամ հնգան-
կիւնի է և կամ խորանարդ ուղղան-
կիւնի : Օ ասի երես կըլլայ աղէկ կար-
միր գոյն մը , նման հնտու կարմիր գու-
նին :

Վճելի (ուստուռայի) յեսանին
(պիլէիին քարին) տակը եղած մոխրա-
գոյն կամ սև նիւթը Փռանսըզերէն
կըսվի առտուաղ . ասոր կապուտ տե-
սակնալ կայ . սոյն կապուտ տեսակ կաւ
հոտօղ քարը , երելով , և ոսկըի մոխր-

բին հետ միատեղ լոսելով, և ըւալով՝
որ զատվի իւղային մասունքը, կըլլայ
մոխրագոյն (զընձասլի) գոյն մը :

Արթի (ասմայի) ուռերը կամ ճիւ-
ղերը երելով գոց ամանի մէջ, մինչեւ
որ աղէկ ածուխ (քեօմիւր) ըլլայ, յե-
տոյ լոսելով զանի, կըլլայ կապուտակ
սև գոյնմը :

Ֆռանսըզերէն կըսվի բասթէլ, լա-
փիսի (խուռաշունխալէմի) ձեռվ զանա-
զան գունով շինածներկեր, որոնցմով
նկար կամ պատկերք կըզըեն դիւրուն
կամ տիսէնեօյի համար, որոնց բաղադ-
րութիւր կըլլայ հետեւեալ կերպովս :

Բասթէլը կըշինվի խառնելով ոսկ-
ըին մոխիրը՝ իր չափին հինգերորդ մա-
սին պալէնայ ձկան ըզեղին (պալըխ
նէֆսիին) հետ տրամ $\frac{1}{5}$ և ասոր մէջը
աւելցընելով գունաւոր նիւթ : Օ որ
օրինակ մէկ մաս պալըխ նէֆսի յարե-
լով օխամը եռացեալ ջուրի մէջ . մէ-
ջը կըդնեն 5 մաս ոսկըին մոխիրը, և
կըլոսեն ամմէնը գունաւոր նիւթով,
պէտք եղած աստիճանաւ բացութեան
կամ գոցութեն գունոց . յետոյ կըկլոր-
ցընեն յարմար ձեռվմը, և կըշարեն
տախտակի վրայ և կըչորցընեն :

Ասոկ գունաւոր նիւթերը լուելով
ոսկը մօխիքով, կը շինեն գունաւոր լա-
փիսներ :

Հիմը պատկերքի, որ պատրաստած
է ոսկը մօխիքով, որ ոչ այլ ինչ է,
թէ ոչ փոսփորակ մը կը այսինքն քե-
րեցի միացած ֆոսֆօրի թթվուտին
հետ, որ շաղված է աղեկ ալուրով՝ որ
ոչ երբէք կը ճաթուտի. կը ծծէ շուտով
զնը կարը, և իր ծծող որակութիւն կը-
դիւրացընէ քաշվածքը, քան զուրիշ
կերպ պատրաստած հիմը։ Խռող որ ամ-
մէն պատկերհան կը ընայի ինքիրէն պատ-
րաստել աս հիմը :

Քաջալերական ընկերութիւն | օն-
տօնին վարձահատոյց եղաւ աս գիւտը
գտող կուանտի հեղինակին .

Կերպ պալու ժարէ արյաններուն գոյնիը հին
մարմարինի . այսինքն նոր արյանը անընդհայի
նմանցնէլ :

Աս դաղտնիքն հաղորդեցաւ ուսում-
նական Ճեմարանին Փարիզու : Կառ-
նեն ըստ չափու մեծուե արձանին խել-
մը չիմարած մաքուր և Ճերմակ կիր,
և խիստ բարակ կը փոշիացընեն . և ա-

սոր հետը իրեք մասին մէկը կըխառնեն փոշին Ճերմակ մարմարիսնին, և ուղած գունին բացութեն և մթութել նայելով՝ կաւելցընեն մէջը սե խուռում, և քիչմը աւ դեղին օգոր. առաջ քիչմը փորձի համար կըշինեն և կընային որ ուղածէն բաց է՝ քիչմընալ խուռում կաւելցընեն :

Երդ ամմէնը մէկ տեղ խառնելով աղէկմը կըյարեն պէտք եղածին չափ թարմ (թազէ) հաւկիթի Ճերմըկուցով շուտ շուտ՝ որ չիսկտանայ, և միակերպ կըտարածեն նկարի դնձիկով արձանին վրայ բարակ շապիկ մը աս խառնուրդէն : Փորձի համար շինածէն առաջ մէկ քարի վրայ քիչմը կըտարածեն՝ որ նային գոյնը յետ չորնալուն, և ետքը անոր համեմատութեր կըթաղադրեն ուղած գոյնը :

Լայ մէկ ուրիշ կերպմընալ : Լեռացընեն (խայնաթմիշ կընեն) զխուռումը մայալանմիշ եղած, այսինքն փըրփըրած շեռով և զանի խայնար խայնար կըտարածեն գնձիկով արձանին վրայ հետզհետէ շատ անդամ մինչեւ որ ուղած գոյնը գըտնայ հին արձանի նմանելու :

Արքանի և մարմարին տադի վասա վայութեան
տալ որդին ով ըստուածնի :

Հռոմայեցիք՝ մէկ օխոյ ֆուրը վեց
տրամ Ճերմակ քալեայ թաշիով, և 16
տրամ Ճերմակ մեղրեմնմով կեփեն, և
խայնար խայնար կըտարածեն զանի
ֆռչայով մէռմէռ քարին վրայ . և որ-
չափ որ կըտարածեն, այնչափ ու կը-
րակի կըմօտեցընեն զքարը՝ մինչև որ
ծծէ զվեռնիցը : Խոկ Ֆլորէնցա քա-
ղաքը կառնեն 100 տրամ Ճերմակ մեղ-
րեմոմ, և կըհալեցընեն մաղմաղ կրա-
կով, և մէջը կըդնեն ինը տրամ ու
կես թիրէմէնթին, և կըզբուշանան
որ կրակը շատ ըլլայ, և աս խառնուր-
դը եփ չելլայ : Օ ասի տաք տաք կը-
տարածեն ֆռչայով մէռմէռին վրայ,
և զքարը կրակին քով կըբըռնեն, և
նորէն ֆըռչայով կըհաւսարեն . այս-
ինքն հաւսարելու ատենը, ընտոր խա-
լաֆաթաիները ունին կասկարամը, ա-
նորպէս մէջը կրակ դնելով քարին մօս
կըբռնեն զգուշուր, որ չի դաշի քարին

Պահել ժանիէ և 'ի բջէ պղինչը , որուն վրայ
իսն գորուածքներ :

Պղնմակ տախտակները՝ որոնց վրայ
փորուած են պատկերք և կամ ուրիշ
ձեւ բաներ , երբոր ժանկոտին՝ կապա-
կանին , ուստի շատ հարկաւոր է պա-
հելը :

Վոր համար ()կիւստ Վիշելսանը
հնարեց մէկ կերպմը պահելու զանոնք ,
զոր ուրիշներնալ շատ փորձեցին՝ թէ
հետագայ կերպով շատ այլէկ կըպահ-
վի :

Կախ կըշփեն զպղինմակ տախտակ-
ներն տէպէշիրով խիստ բարակ փոշի
եղած , և կըթողուն որ կատարեալ չոր-
նայ , և կըմաքը են որ ցիմնայ վրան եղիւ
մը նշան : Հետոյ կըկըտըտեն և կըման-
ըեցընեն զպալըխ թութիսալին մանը
մանը , և կըդնեն անկանի և շիշէի մէջ ,
ու վրան կըլեցընեն բաւական չափով
աղէկ ճերմակ գինի . կըգոցեն շիշէին
բերանը քուռչով , և կըդնեն շիշէն ա-
ւազին վրայ՝ ու կուտան մեզմ տաքուի .
իսկոյն կըլուծի , և ուրիշ տաք գինի
պատրաստ ունենալով , քիչ քիչ կըլե-
ցընեն մէջը պէտք եղած հեղուկուիլ

(սուլույութեր) տալու համար . յետոյ լաթէ կանցընեն որ կըլլայ թափանցիկ . աս բաղադրութիւնէս կըթափեն պղընձի վրայ . քանիմը ժամէն ետքը կըպընտանայ , թափանցիկ ըլլալով տակէն փորուածքը կերենայ : Եւ երբոր այն փորուածքը պէտք ըլլայ գործածել , դիւրաւ կելլայ վրայի տուածթութխալը : Պղինձէ տախտակը կըդնէն քիչմը տաք տեղ , թեթևմը կըտաքցընեն , և վրան կըլեցընեն տաքուկ ձերմակ գինի , խկոյն թութխալը կըկակզնայ և կըհեղուկնայ , ուստի դիւրաւ կըզատվի տախտակէն և կըմաքընէն :

ԹՐԱԴՐԱԿԱՆ ԵՒ ՏՊԱԴՐԱԿԱՆ ՀՆԱՐՔ

ԳԼ. ԺԳ.

Այս աւեսակ պողագրութիւն՝ որ իռչի տեղական
պողագրութիւն, իամ որ իռչի բազմապատճեալ
պողագրութիւն :

Այս կերպ տպագրուե համար՝ կընտ-
րեն զայն տեսակ կրաքար՝ տախտա-
կը, որուն տաշվիլը դիւրին կըլլայ. մե-
ծութիւն աս քարիս համեմատ ըլլայ քա-
շած ու էսիմին, իսկ թանձրութիւն եր-
կու կամ երկու և կես մատնազափ, որ-
պէս զի դիմացկուն ըլլայ : **Ա**յս քարիս
մէկ երեսը արծնելէն ետե, որ քիչմը
թեթե ծակոտկէն ալ մնայ նէ՝ արհես-
տաւորաց հաջոյ է, լափիսով կըքաշեն
ու էսիմը . յետոյ վրայէն կանցնին մաս-
նաւոր մէլանովմը՝ որ շինած է սև խու-
ռումով ձարպով և թիրէմէնթիի ողի-
քով՝ որպէս զի քէզապը չուտէ զանի :
Այս որ կըհամարին՝ թէ աս մելանը

1 Ա ըսած քարերնիս սախըզ թաշիի նման է :

կոմա լաքայով, այրիչ բօթասով, սե
խուռումով կամ վառած մեղքեմոմի
ծուխով կը ընայ բաղադրը վիւ։ Յամին
1812. տեսայ Ա Եննայու գործատանը
մէջ, որ կը գրեն քարին վրայ բարակ
զէմպէրէկի կտորով՝ որ գրչածե կը տ-
րած է սուր մկրատով, և պղտի բարակ
փայտի կամ փետուրի վրայ յարմար-
ցուցած։

Դաեւ ինչ և իցե ճառեր կամ ոտա-
նաւորներ և մուղիքայի նօթաներ, յու-
եղանակի խազեր, կը գրեն աս զըսովս,
և երբոր չորնայ՝ կը դնեն քարը մէկ
տեղմը քիչմը ծուռ բռնած, և վրան
կը թափեն քիչ քիչ հասարակ քէղապ՝
ջրով խառնած, մինչև որ արհեստա-
ւորին ուղածին պէս ուտէ զքարը, և
քիչմը ցածնան մելան ջիտպած տեղե-
րը. յետոյ կը լըւան զքարը մոխրի ջրով
և մաքուր ջրով, և կը սրբեն. անկից
ետքը կը դնեն տղելու համար յարմար-
ցուցած տեղը, և վրան կակուղ կա-
շիով պատած գրտնակով, այսինքն օխ-
լաւույով։ կը լորցընելով կուտան մելա-
նը՝ որ նմանապէս բաղադրած է խու-
ռումով ճարպով, թիրէմէնթիի կամ
նաւթի ողիքով և քիչմը ալ կը տաւա-

տի , այսինքն քեթեն թօհումիի եղով .
 յետոյ վրան կըդնեն թուղթը կամ կը-
 տաւը , և մետաքսեղեն բեհեղը , այս-
 ինքն սանտալը և այլն , այն կերպով
 ինչպէս հասարակ տպագրութե օրէնք
 է . իսկ վրան փոխանակ մէնկէնէյով
 սըխմելուն , հաստ և ծանր պղինձէ դր-
 լան , այսինքն կըլոր տիրէկ մը՝ որուն
 մէջը կապարաւ լիք է , կըրելով մէկ
 անդամ կըտանին կըբերեն . ետքը կը-
 բանան չէրչիվէն , և կըհանեն թուղ-
 թը՝ որ մաքուր տպած է , կըդնեն նո-
 րէն ուրիշ թուղթ : Ուն որ մաքուր
 չելայ կըսրբեն քարը մաքուր մոխիր
 ջրով , և ամմէն մէկ անգամնւն կուտան
 մելանը նոյն օխլաւույով . Եզբոր մաշի-
 գիծերը կամ գիրերը . քարին վրայ նո-
 րէն ջրով խառնած քէզատ կըլեցընեն ,
 և կըկերցընեն , մինչեւ որ բաւական
 ցըցվի գիծերը կամ գիրերը : Աս ալ
 գիտանալ պէտք է , որ գիրերը կամ գի-
 ծերը շատ ցըցվելու հարկ չիկայ , զի
 տեսայ որ հազիւ թէ զգալի են : Ասանկ
 տպագրութիւն շատ աժան և շատ գիւ-
 րին կըլլայ , մանաւանդ ան բաներուն
 միայն կուգայ՝ որ սանդուանձլը գիծեր
 չունին :

Վ Եննայու դործատանը մէջ տեսայ
որ այնպէս մաքուր կըտըպէին՝ որ ամե-
նեին չունէին տարբերութիւն պղնձէ-
տիպերէն : 1809. 1810 : Կըտիլ թէ
լ'նգղիայէն եկած չիթերուն կաղպար-
ները այսինքն խալիպները աս կերպովս
քարի վրայ փորած են : Եոր տեսակմը
ալ փորվածքի հնարեցին՝ որ պղնձի
պէս վերի ըսած քարի տեսակին վրայ
կըփորեն , և ամմէն տեսակ պատկերք
կըտըպեն , նաև սանդռանջը բաներ :
Եաւ սոսկ կըզըեն ինչ ձեւ որ կուզեն՝
քարին վրայ մեղրեմոմով աճառով (սա-
պոնով) և մեղծով (խուրումով) բա-
զադրած մելանով, կամ ճարպով շի-
նած մելանով . յետոյ զքարը թաց լա-
թով կըսրբեն ամմէնմէկ անգամուն ,
և նորէն վերի ըսած մելանը կուտան .
քարին ճերմակ մնացած տեղերը որ
ջուր է ծծեր՝ չի պլըշկիր մելանով, հա-
պա ուր որ սեւ է՝ այն մասը միայն կառ-
նէ մելան : Աս նոր կերպը՝ քարը կեր-
ցընելու համար ժանտաջուր չի դործա-
ծեր :

Վեզրեմոմով և աճառով շինած մե-
լանը տաքցընելով կըդործածեն :

Գաղառունել անեղծանելի մշան (մարէնէտ) :

Որովհետեւ խաս մելանը աղածական
բարկածինացեալ թթվուտը՝ որ ֆռան-
սըզերէն կըսվի ասիտ միւռիաթիք օք-
սիժէնէ . իսկոյն կեղծանէ , և գրած
գիրերը աներեսոյթ կըլլայ , թէպէտ և
դխտորի (մաղիի) ջրով նորէն կերեի
և կըկենդանանայ , ասոր համար հարկ
եղաւ ուրիշ տեսակ մելանմը փնտուել
որ ամենեին չավրի :

Ասի երկու կերպով կըշինվի :

։ Ութը տրամ հնտու փայտ կե-
փեն 100 տրամ ջրի հետ մէկ ժամու
չափ . մէջը կաւելցընեն չորս արամ
պաղլեղ , կըքամեն հեղուկը , և նորէն
կեփեն մինչեւ որ մնայ նկ տրամ . յե-
տոյ կըդնեն մէջը սե մանկանէղ 8
տրամ . և չորս տրամ արաբական խէժ
(զամլս) :

Ե : Ութը տրամ հնտու փայտը , 24
տրամ խոշրկեկ ծեծած գխտորով , և
90 տրամ քացախով , և այնչափ ալ
ջրով կեփեն . ութը վայրկենի չափ որ
կեփի կըքամեն , և ասոր մէջը տասւեր-
կու տրամ արջատպի (զաճը խպոլղի)
փոշի կըխառնեն , և ութը տրամ զամլս

առապի . խիստ ետքը չորս տրամ լեզակ (չիվիտ) լուծածարջասպի իւղով (զան եաղիով) կաւելցընեն մէջը :

Վաղարքել աղէի հարմիր մէլան :

Վառնեն չորս տրամ աղէկ դառմին ֆր լալ , վրան կըլեցընեն 16 տրամ այրող անուշագը , այսինքն նշատը ոռուհու , և մէջը աւելցընելով քսան ցորեն ձերմակ առապ զամփի՝ կըթողուն որհանգչի , մինչեւ որ լուծի զամփը : Վսկարմիր մելանաւ տպած և դրած զիբերը կըդիմանան շատ տարիներ , և չեն ավրիր , և շատ գեղեցիկ կերեան :

Վաղէի սև մէլան դպագրութեան համար :

Տպագրութեն մելանը պէտք է որ ըլլայ այնչափ թանձր՝ մինչեւ որ չիվազէ , շուտով չորնայ . նոր տպածը ևս պէտք է որ չավրի , խոնաւ ֆր թաց թղթի վրայ որ կըկոխվի՝ չի տարածվի . և աս մելանը պէտք է որ ամենեին սև ըլլայ և փայլուն :

Գործատունները հիմայ շատը ընկուզի (ձեվիզի) եղը կըգործածեն աս

մելանը շինելու համար : Աւստի ընկուզի եղը կըդնեն մէկ պառխաճի ձեռվ Երկթէ կմ պղինձէ, պղափի հաստ կաթ սայիմը մէջ, իրեք մասին երկուքը լեցընելով, որուն վրայի կափարիչը (խափախը) ուժով վիտաներով կամ մանտալներով ամուր կը հաստատեն . սաստիկ կըտաքցընեն եղը . անկի ելած գումրչիքը կըբորբոքի, ուստի վրան թաց լաթ կըծածկեն : Քիչմը ատեն աղեկ եփելէն ետե, կամաց կամաց կըպակսեցընեն կրակը, և կըբանան զգուշութ ամանին բերանը, և կըխառնեն երկըթէ թքալիտէս բանովմը խելմը ատեն :

Կրակի վրայ կըդնեն ամանը և նորէն կըտաքցընեն, բայց շատ կրակ չեն խտար առաջին անգամունպէս . և երբոր կըտաքնայ եղը՝ մէջը կըդնեն՝ 4500 տրամ եփած եղին . 90 տրամ խիստ չոր հացի կճեպ (քէնար), վեց կամ եօթը սոխ, յետոյ կըծածկեն բերանը, և կեռացընեն քիչ կրակով մինչեւ իրեք ժամ . և երբոր կըդատեն թէ եփը վէռնիճի խըլամ եկած է, այսինքն մէկ պաղած կաթիլը մածուցիկ եղած է, կամ թէ երկու մատի մէջ որ առնեն, և քանի բանան գոյեն՝ թէլթէլ կեր

կըննայ. Ասկ թէ որ չէ եկած աստիճանը՝ դարձեալ եփելու է, մինչեւ որ գայ պէտք եղած խըլամը : Ըետոյ կըզըտեն եղը դեռ չիպաղած, քանիմը ծալք լաթէ անցընելով. առ եղս որչափ հիննայ՝ այնչափ աղէկ կուդայ տրակազըութեն, վասն զի ժամանակը կուտայ թանձրութի մը և փայլունութի մը :

Վո եղին 128 արամին մէջը կըխառնեն և քիչքիչ կըյարեն 20 տրամ սեխուռումին թեթև տեսակը. ոմանք ալ սե խուռումին տեղը, կըխառնեն չամ սաղըղիին խուռումը՝ որ կառնեն երելով զանի, և անոր ծուխը մէկ դոց տեղմը առնելով : Վոկէ սե մելանը թեպէտ սուդ կըլլայ, բայց խիստ աղուոր կըլլայ : Վերի ըսած վէտնիճական եղին մէջը զանազան գոյն խառնելով, զանազան գունով մելան կըլլայ . զորօրինակ բռուսական կապուտ խառնելով, կըլլայ կապուտ . զինճիֆրա և գառմէն խառնելով, կըլլայ կարմիր . զըռնըս խառնելով կըլլայ գեղին :

Վո եղին մէջը լաքա կամ տամլա տախըզ զամիս խառնելով կըշինեն պղինձի վրայ փորուածքի համար, և ուրիշ բաներու վէտնիճ :

ՈՍԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ ՀՆԱՐՔ

ՊԵՏ ԺԴՎ :

ԱԵՐԻԵԼ ՔՂՄԱՀՐԵԱՅ (ՔԵԼՄԵԼԵՒ) Բաները :

Փղոսկրեայ բանը՝ որ կուզեն ներկել, սկզբ է առաջ եփել մաքուր ջրով, որին մէջը խառնած են խելմը արջասալ (զաջի խպուղզ), և չնչքորակ (կիւվերշիլէ). ասոնց թըթուն կըթափանցէ փղոսկրին, և կըտրամադրէ զանի՝ որ ծծէ գուներուն մասունքը :

Երբոր կուզեն կարմիր գունով ներկել փղոսկրը, կառնեն սկառլաթ չուխային խիստ մանը կտորվանքը, կամ որ չուխային գործատանը մէջ կայ ալ չուխային խուզածը կմկտուրքը (խըռքընդըն), զասի հասարակ ջուրով կեփեն. և երբոր եփ կելլայ, մէջը կըձգեն Յշտրամ մոխիրի աղ կամ խալեա թաշի. երբոր բուրդը իր կարմիր գոյնը թող կուտայ, և ջուրը աղէկ կըկարմրի, մէջը կըձգեն քիչմը պաղլեղ, յետոյ լաթէ կանցընեն զջուրը որ բուր-

Դը զատվի : Արդ յետ վայրկենի չափ
միայն թաթխելուն փղոսկրը կամ սոսկ
ոսկորը ջրով խառնած քէզապի . մէջ ,
ապա կըձգեն պաղ գունաւոր ջրին մէջ ,
և կըթողուն հոն մինչեւ որ ուզված գոյ-
նը դայ :

Յօհե որ կուզեն խատուտիկ ընեն ,
այսինքն ալածայ , մեղքեմոմով զանա-
զան տեղերը կըծածկեն , և այնպէսներ-
կին մէջը կըձգեն ոսկորը՝ որ տեղ տեղ
Ճերմակ մնայ , այսինքն սօմախիլէնմիշ
ըլլայ :

ՃԵՐՄԷՒՆԵԼ ԴԵՂՆԱԾ ԳՀՐԱՆՔ :

Լուծէ բաւական չափով ջրի մէջ
այնքան պաղլեղ որ ջուրը Ճերմկի , յե-
տոյ եփի զանի , և փղոսկրէ բանը ձգէ ,
և թող մէջը մէկ ժամ ատենի չափ ,
բայց երբեմն երբեմն պղտի ֆուչայով
շփէ , և երբոր աղէկ Ճերմըկի , հանէ
մէջէն և թաց լաթի մէջ պըլլէ , և կա-
մաց կամաց չորսուր որ ցիճաթի :

Կըրնայ շփվիլ փղոսկրը սեւ սապու-
նով կըակի մօտ բռնելով . և երբոր
վրան փրփրի՝ յետոյ սըբէ . աս կերպովս
ալ , բաւական կերթայ դեղնութիւն :

Ուրել իւրա մէրմը իշխուլու գլուխը :

Վա կերպս միայն կըվերաբերի այս ալիսի փղոսկրեայ բանին՝ որ կամ չառ խէ քաշված է, և կմ կըրնայ քաշվիլ։
Վարդ՝ բաւական քանակութե՛ ջրի մէջ մարե քիչմը կիր, և թող որ հանգչի, յետոյ երեսէն իստակը առ, և դիր մէջը փղոսկրը, և քանիմը եփ բեր, իսկոյն կը ճերմը կի ոսկորը. յետոյ չառ խի վրայ դնելով նորէն արձնէ (Ճիլայ ըրէ). վերջի Ճիլան բարակ թէպէշի բով տուր. առաջ թաց թէպէշի բով, յետոյ չոր թէպէշի բով. Արակէս զի և թէպէշի բով աղէկ բարակ ըլլայ, և ըգծէ զբանը, յետ ծեծելուն զանի ջրի մէջ կը ճգէն զփոշին. 5 կամ 6 վայր կենի չափ կենալէն ետե, երեսի ջուրը կառնեն ուրիշ ամանի մէջ, և 24 ժամ կը թողուն որ զըտի. երեսի ջուրը թափելէն ետե, տակի մնացածը կը որցը նեն և կը պահեն Ճիլայի համար։

Ա ա ն ի շ ա յ ն ե լ Ք լ ո ս ի ր ը :

Վա 25 տրամ կիւվէրժիլէ քէզապի ,
խառնէ հետը 125 տրամ ձերմակ զի-
նիի քացախ , կմ հասարակ ջուր , դիր
մէջը փղոսկրը և պահէ , մինչեւ որ բա-
ւական կակղնայ , և ընդունակ ըլլայ
ինչ ձեւ որ կուզես՝ տալ անոր :

Արսիլի՝ թէ որ եփես ուժով փղոսկրը
մանր կըտըրտած մանրագոր ըսած ար-
մատով և ջրով մէկ տեղ՝ կըկակղնայ :

Պ ի ն դ ա յ ն ե լ ի ա ն ի շ ա ծ Ք լ ո ս ի ր ը :

Արփաթտեն ձերմակ թղթի մէջ
կակղած փղոսկրը , որին ուզած ձեւը
տըված էն , և կամ վրան ինչ ըռեսիմ
որ տըվեր էն , յետոյ կըդնեն ձերմակ
հասարակ աղի մէջ՝ որ կըակով կամաց
կամաց չորցուցած է ան աստիճան՝ որ
ըթուտամիշ կըլլայ , և կըզգուշանան
որ յետոյ խոնաւութիմը չառնէ . ուս-
տի խիստ չոր տեղ կըսլահեն :

Ուրեւ ներպ հակըշինելու զիշուիրը :

Կառնեն 150 տրամ սև քալեա թաշի և 112 տրամ չիմարած կիր, ամմենը մէկ տեղ կըդնեն երկու օխայ եռացեալ ջուրի մէջ, և կըթողուն որ հանգչին իրեք օր . յետոյ կընային որ ջուրը բաւական կարմիր չէ, կըդնեն մէջը քիչմընալ կիր և քալեա թաշի . յետոյ ամանը քիչմը ծռելով՝ վրայէն զրտած ջուրը կառնեն, և մէջը կըձգեն փղի ոսկորը կամ ոսկորը տասնըհինգ օր, մինչեւ որ բաւական կակըդնայ :

Ուրեւ ներպ պնդացինելու (Քեչոցնելու) ժըշտուիրը և ուրեւ ոսկորիները :

Կըլուծեն բաւական ջրի մէջ խնճորի չափ պաղլեղ, և կըդնեն պաղլեղին կշռին հաւասար չափով ոսկորի փոշի, կըսկըսին եփել աս ջուրը՝ մինչեւ որ վրան բարակ մարմը կապէ, և ան ատենը կըձգեն մէջը ոսկորը կամ փղոսկորը մէկ ժամու չափ, և յետոյ կըհանեն մէջէն, և կըդնեն մաղաղայի մէջ քանի մը օր, մինչեւ չորնայ կամաց կամաց :

“ԵԵՐԻԵԼ ՀԱԽՆԴԱԾ ՔՂՐԱՔԸ :

Կըլուծեն զինիի ոգիքի մէջ ան տեսակ դոյնը՝ որ կըրնայ հալիլ աս ոգիքին մէջը . զոր օրինակ , թէ որ կուզեն կարմիր դոյնմը տալ կըդործածեն հընտու կարմիր փայտը , մանը ջարթած կամ բարակ թալաշ եղած . երբոր գոյնը բաւական թափած է ոգիքին մէջ , կըդնեն մէջը կակղցած փղոսկրէ բանը . և քիչ ատենի մէջ կըթափանցէ դոյնը բաւական խորունկութիով , յետոյ կուտան ուզած ձեր . միայն թէ շատ տաշել պէտքը չէ՝ որ տակեն ձերմակը երեւան չելլէ :

“ԵԵՐԻԵԼ ՌՈՒՐԸ ՀԱՆԱՀՆՀ ԳՐԱՆՈՎ :

Կառնեն խելմը ժանդառ , այսինքն ձէնկեառ աղէկմը լոսած (սահտ եղած) . կըդնեն պղնձէ (պախըռէ) մանի մէջ , և այնչափ քաջախ ալ հետը՝ որ դրած ոսկորը ծածկէ . յետոյ դնելով մէջը ոսկորը կամ փղոսկրը , կըդոյեն ամանին բերանը , և կըծեփեն զանի թղթով՝ որին վրայ քսած է հաւկըթի ձերմիլուցով շաղված կիրը , կամ

ուրիշ ինչ և իցէ ծեփելու բանով մը .
յետոյ կըդնեն աս ամանը տաք ֆըշ-
խիի մէջ տասնըհինդ օրի չափ , և կը-
հանեն յետոյ անկէ՝ որ աղէկմը ներ-
կած է կանանչ գունով :

Ուէ որ տաք ֆըշիը չիգտնըլի , տաք
մոխիրի վրայ կըքնայ դըրվիւ տասնը-
հինդ օր :

Դաստիարակութիւն :

Ոսկորը չիներկած թէ որ մոխրի կիմ
բոթասի մաքուր ջրով եփես , աղէկ գոյն
կառնէ ետքը ,

Օ որ օրինակ հալէ ժանգառը ջրով
կամ քացախով , մէջը լեցուր քիչմը
եղ արջասապի (զաչեաղի) կամ պաղ-
եղ . և յետոյ դիր մէջը եփած ոսկորը ,
քիչ ատենէն կըկանցի :

Ոօմ չիան ռահուրը , և ուշեւը հանանչ ներիել :

Դ Պօլիս կանանչ գունով թէզպիհը
խիստ հաճոյ է . ասոր կերպը շատ դիւ-
րին է : Առ հաւասար բաժին կարմիր
պղնձին խարտուքը և անուշադը փոշի
եղած , և խառնէ մէկտեղ . դիր հողէ

սըռսըզ ամանի մէջ . Ետքը մէկ շար սօ-
մին հատերը , և մէկ շար բաղադրած
փոշին տեղաւորէ . յետոյ բերանը դոց
թաղէ աս ամանը մէկ ցեխաւոր (չա-
մուռլու) կամ խօնաւ տեղմը . և եր-
բեմն երբեմն խառնէ որ տակը վրան
հաւասար գունաւորին . և անչափ ա-
տեն ուշացուր , մինչեւ որ ուզված գու-
նը գայ . Ետքը հանէ մէջէն :

Պահանկ աւըրէ քելէրին կանանչ դոյն
տալու համար :

ՀԱՅԵԼԻԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

ԳԼ : ԺԵ :

Հայլիին ապակին , այսինքն Ճամը
կամ պիլլօռը , պէտք է որ առաջուց
աղէկ արձնած ըլլայ : Բայց հայլի շի-
նելու ատենը աւպէտք է որ լաւ մը ա-
պակին մաքրըվի լուացած մաղած մոխ-
րով , ֆանէլայի կտորով շփելով , և յե-
տոյ սրբելով խիստ մաքուր լաթով :
Եւս առաւել հայլի շինելու ապակին ,
պակասութիմը ունենալու չէ որ հա-
ւասար ընդունի սըռը : **Հ**այլիին սըռ

տալու համար, ինչպես տեսայ փարիզի գի գործատանը մէջ, կառնեն չորս հինգ անագի զանգուած (խալայի սօմնւն), որուն մէջը քիչմը պիզմիւթ ալ խառնած է . կըսկսին ծանր կռանով (մեծ չեքիձով) ծեծել, մէկմէկու վրայ դրած անագին զանգուածները . և հետզհետէ կըփոփոխեն զանգուածներուն կարգը, այսինքն հակառակ կերպով շարելով, այնչափ՝ որ մինչեւ բաւական տարածին և բարկընան թղթի բարակութի գան . յետոյ աս անագին թերթերը կըտարածեն մաքուր հարթ մարմարիոն քարի վրայ՝ որոյ տարածութիր մեծ է քան զթերթին տարածութիր, և վրան՝ ¹ ծանր փայլուն օխլաւումը կըտարութերեն՝ որ բոլորովին հաւսարի թերթին մակերեսոյթը, այսինքն երեսը :

Ենագին թերթին մէկը տարածած ըլլալով մարմարիոնեայ տախտակի վր, կըթերեն կըդնեն շարժական սեղանատախտակի վրայ՝ որ կեցած է հարթ

¹ Ծանր գլանը խոշոր հայլիներուն թերթերուն համար է, իսկ մանր կամ չափաւոր թերթերը երկու երկաթ գլանի (այսինքն չիլինտույթ) մէջէն կանցընեն :

հաւասար, և պէտք եղած ատենը կըլլ-
նայ ծռիլ դէպ 'ի մէկ կողմը։ Երբոր
անագին թերթին երեսը աղտոտ է,
կըփայլեցրնեն թերթը կըծիկովմը՝ որ
թաթիսած է սնդիկի (ժիվայի) մէջ։

Երկու քովը թերթին, այսինքն խա-
լայէ թապաղային, կըդնեն փայլուն
պղնձէ քանօն (Ճէտվէր), որոնց մէկ
դին կլոր է և մէկալ դին տափակ։ առ
կլոր դին պէտք է որ կոխէ անագը։ և
ետեի և առջի դին կըդնեն մէյմէկ քա-
ռակողմեան տափակ քանօններ՝ որ մէ-
կալներէն ցած են, և կամ նեղկուկ
թուղթ կըկպցընեն։

Ետքը շատ սնդիկ կըբերեն կըլեցը-
նեն անագի թերթին վրայ, մինչեւ որ
տարածի ծածկէ թերթին երեսը։ և
խելմը բարձր կենայ սնդիկը, այսինքն
կէօլիպէս։

Որովհետեւ օդին ներգործութենո-
վը սնդկին վրայ մարմը կըկապէ, նայ-
ելու է որ ապակին դրած ատենը տա-
կը չիգայ։ ուստի ապակին կըբերեն
կըդնեն երկու փայտեղէն գանօնի վր,
որք հաստատած են սեղանի սպառվա-
ծին, այսինքն բերվազին վրայ։ և կը-
մօտեցընեն ապակին մէկ ծայրը ուրնդ-

կին վրայ, և զդուշութեր առաջ կըհքեն
ապակին շխտակ հօրիղոնաբար, անանկ
որ՝ ապակին սնդկին մէջը մտնայ, և
առջե կըհքէ սնդկին վերի թերթերը,
որ և կըպած թղթէն դուրս կըթափի
կըվազէ սեղանին վրայ. յետ տեղաւո-
րելուն ապակին՝ որ գրեթէ կըլողայ
մնդկին վրայ, քիչմը սեղանը կըծռեն
մէկ կողմը, որպէս զի վազէ սնդիկը ա-
պակիին տակէն, և հեծնի կամ նստի
անադի թերթին վրայ, և անստենը
քանոնները կըհանեն, և հետզհետե-
աւելի կըծռեն սեղանը՝ մինչև որ ցամ-
քի սնդիկը :

Ապած մնդիկը կըժողվեն, սեղա-
նին մէկ կողմը բռնելով ամանմը :

Խիստ յետոյ ապակիին վրայ ասդին
անդին կըդնեն տափարակ հաւասար
ծանրութենով ֆանելայով պատած
կապար, և կըթողուն 8 կամ 10 ժամ
այնպէս՝ որպէս զի բոլոր մակերեսոյթը
ապակիին միակերպ կըպչի մալակոնած
անադին հետ :

Ալվերցընեն յետոյ ծանրութիները
ապակիին վրայէն, և հայելին ալ կը-
վերցընեն կըդնեն ուրիշ փայտէ շխտակ
սեղանի վրայ, և կըշարեն հայելիները

մէկմէկու վրայ՝ քանի որ ետեւ ետեւ
կըշինվի, մէջ տեղերնին բարակ թուղթ
դնելով. և ասանկ հորիզոնական դըր-
քին մէջ կըթողուն 24 ժամ. յետոյ
սեղանին մէկ դին վեր կըվերցընեն 6
մատի չափ բարձրութը, այսինքն մէկ
անկիւնին դիեն միայն՝ որպէս զի ցամ
քի սնդիկը, և թող կուտան 24 ժամ
առանց դպչելու. յետոյ 24 ժամէ 24
ժամ վեց վեց մատ վեր վերցընելով,
կըթողուն որ բոլորովին ցամքի սնդի-
կը. այնչափ կըվերցնեն մէկ անկիւնին
պատին դէմ կոթնցընելով, մինչեւ վեր
վերցած անկիւնը սեղանին՝ ուղղահայ-
եաց դիրք կունենայ. բայց հայլիները
մէկ դիեն չենկելով բռնել կուտան՝ որ
չիկործանին : Եւ ասանկ քիչմը ատեն
ալ պահելով՝ որ աւելորդ սնդիկը կա-
րենայ վագել, խիստ յետոյ զատ զատ
կըվերցընեն կըպահեն, որ օդ տեսնա-
լով՝ ամրնայ սըռը, և աս կերպովս կըւ-
լան պատուական հայլի :

Փարիզ տուները հայլին մաքրելու
համար խելմը դինիի ոգիքին մէջը քիչ-
մը ջուր կըխառնեն, և խիստ բարակ
թռիթօլի մէջը կըդնեն, և մաքուր հօ-
լանտայի քթան լաթը ասոր մէջը թաթ-

իւելով հայլիին երեսը կըմալակոնեն ,
և այնչափ կըսրբեն՝ որ կըչոքնայ կը-
մաքրի և կըփայլի հայլիին երեսը :

Ընէլ գոտնո համ իլորաչն հայլէ :

Վնտաձե այսինքն կլօր ապակին
կըակով կըտաքցընեն՝ մինչեւ որ չիմնայ
մէջը խոնաւուի , ու աղէկ չորնայ . յե-
տոյ կըխառնեն մէկ մաս պիզմութ ը-
սած անագի կամ կապարի նման մե-
տաղը . չորս մաս մնդկի հետ միատեղ,
և սաստիկ կըբակով կըհալեցընեն զաս
խառնուրդը , և տաք տաք կըլեցընեն
ապակի գունտին մէջը , և ասդին ան-
դին ժուռ կածեն՝ որ ամմէն կողմը ա-
պակիին տարածի , և պաղելով կպչի
աս մալակոնը , և այսպէս յետ պաղե-
լէն աղուոր կըփայլի , և կըլլայ գնտա-
ձե հայլի :

Ուրեշ իւրականալ գնտաչն համ իլոր հայելէ
շնէլու :

Անդիկ չորս օնցայ , պիզմութ մե-
տաղ երկու օնցա , անագ մէկ օնցա ,
կապար մէկ օնցա , ամմէնը մէկէն մա-

լակոնած այսինքն սնդկին մէջը յարած, և յետոյ ջրի մէջ թափած և լուծած, չոր լաթով սրբած շիշէի մէջ բերանը գոց կըպահէն: Ալոր ապակին (պիլլօռը) տաքցնելէն ետեւ, մէջը երկայն ձագառմը (խունիմը) կըդնեն՝ որ հասնի մինչեւ յատակը, որպէս զի երբոր տաքցուցած մալակոնը պարպըմի՝ մէջը չի ցաթկրութէ (Փսխայ ըլլայ), և ասդին անդին ծռելու և դարձունելու է ապակին, որ ամմէնդին հաւասարառնէ՝ մալակոնը:

Եշ երբոր աս գունտը կախես, ամ մէն առարկաները մինիաթուռա քաշուածի պէս կերենայ փոքրիկ և համեմատ: Պատկերհանները աս կըդորձածէն:

ԳԼՅ ԺՅՕ:

ՃԵՐՄԱԿ ԵՐԻԸՆԻ ՌԵՐԸ (ԱԷՆԵՔ) ՀՅԻՒԸ

Երկըթին երեսը շուտով կըժանդոտի: ուստի տնական բաներու գործածութե՛ երկըթէ թերթերը շատ անյաջող կըլլայ: բայց երկըթի բարակ տախ-

տակներուն վրայ շապիկմը անագի տալով անվախ և շահաւոր կրլայ ամմէն կերպ բաներու գործածութեն համար :

Արդ՝ անագաւորելու (խալայլամիշընելու) համար երկըթի թիթեղներուն (թապաղաներուն) երեսը, կըշքիեն առաջ կրաւոր աւազով ու կըմաքըրեն, ետքը կըթաթխեն թթու ջրի մէջ, որ վարսակին (իւլաֆի) ալուրին խմորմամբը (մայալանմիշըլալովը) շինած ջուրմընէ, և կամ իւղարջասպիին (զաջ եաղիին) մէջ, մէկին՝ քսանէն աւելի ջուր խառնելով պատրաստած է . ասոր մէջը երկու անգամ խոթելով և հանելով, ուժովմը կըսրբեն և սաստիկ տաք տեղմը կըպահեն : Այս գործատուն՝ որ ըներ աս գործողութիւր, այլ սոսկ խարտոցելը երկթի թիթեղները բաւական կըհամարի : Ան ալ՝ որ փոխանակ թթու ջրին մէջ թաթխելու անուշադրի, այսինքն նշատըրի աղին ջրին մէջը կըթաթխեն : Եւ ոմանք ալ անուշադրի աղը կրակը ձգելով թերթը ծուխին կըբռնեն . իսկ ուրիշները նոյն թերթերը անուշադրի աղովը կըշքիեն :

Յետասանկ պատրաստելու թիթեղ-

ները կամ երկըթի թերթերը, կըխոթեն հալած անագին մէջ և կըդարձընեն մէկ դիէն մէկաւ դին՝ մինչեւ որ թերթերուն երեսը ծածկէ մէկ շապիկմը անագին : Այս կերպովս կանագաւորի (խալայլանմիշ կըլլայ) շատ տեսակ առարկաներ, զոր օրինակ ձիանց կեմեր, հալիսաներ, ձիանց համետներուն կոճակները :

Խակ Պայէմիայի դլխաւոր գործատանց կերպը ասանկէ, այսինքն կըծեծեն երկաթը չեքիչով, և կըբարկըցընեն ուղածներունապէս . ետքը չիլինտուօրսած շառխէ կանցնեն՝ որ միակերպ ըլլայ :

Բառումը ունին կամարակերպ՝ որ շարունակ վառած է, և անոր չորս դին շարած է տակառներով (ֆըշիներով) վարսակի (իւլաֆի) ալուրին թթուած ջուրը, որ կըշինեն դնելով և խըմորցընելով 1154 խորանարդ մատ ալիւր՝ ամմէն մէկ տակառի մէջ : Ը ուտով կըթթվի խառնած ջուրը, պատճառաւ ամանին եղած տեղին տաքունը . ուր տեղ մարդ հազիւ թէ կըլինայ դիմանաւ մինչեւ իրիկուն :

Ամմէն մէկ տակառին մէջը կըդնեն

300 թերթ դեպ 'ի երկանքը աեղաւո-
րելով, և 24 ժամ հօն պահելով. յե-
տոյ նորէն ալուր դնելով ամանին մէ-
ջը 24 ժամ ալ կըթողուն մէջը թեր-
թերը. և վերցընելով անկէ թերթե-
րը՝ կըդնեն խիստ հին մոխիր ջրի մէջ՝
որուն մէջը տասնըհինգ օրը անգամմը
կաւելցընեն լեցուն բաղնիքի թասմը
նոյն ալուրէն. 24 ժամ ալ ասոր մէ-
ջը պահելով, այնպէս որ ընդ ամմէնը
33 անգամ 24 ժամ կըմընան թերթե-
րը տակառին մէջը: Խիստ յետոյ կը-
դընեն թերթերը մաքուր ջրով լեցուն
տակառի մէջ, և հօն կըթողուն՝ մին-
չե երբոր կուզեն մաքրել. որ աւազով
և ջրով կըմաքրեն, այնպէս որ վրան
մէկ ուե արատմը ցիմնայ: Խիստ յետոյ
կըդնեն պարզ ջրի մէջ և հօն կըմնան՝
մինչե անագելու ատենը:

Ենագելու համար կըհալեն 18 խան-
դար անագ երկթէ կաթսայի (խազա-
նի) մէջ. և երբոր անագը աղէկ հա-
լածէ, կըդնեն մէջը քիչմը ճարպ (մոմ
եաղի) և քիչմ' ալ ջուր՝ որ կըպատ-
ճառէ եփմը և փրփուրմը. սոյն ատե-
նը կըբերեն 100 երկըթի թերթերը
թաց թաց, և կըդնեն փրփուրին վրայ

քիչ քիչ խոթելով տաք անագին մէջը , և ներս հրելով երկըթէ բռնիչովմը (խսաճով) , կըպառկեցընեն կաթնային տակը . և ուրիշ 100 թերթմ' ալնոյն կերպով կըտեղաւորեն , և մէկ քառորդ ժամու չափ մէջը կըպահեն՝ միշտ խառնելով փայտովմը :

Հետոյ վրայի ճարպը և ջուրը կըպարպեն ամանիմը մէջ , և կըսկսին դուրս քաշել մէկ մէկու ետև թերթերը , և կըտեղաւորեն , երկու երկայն երկըթէ դաւաղանի վրայ , որոնց ծայրերը հաստատած են մէյմէկ կետով , որպէս զի քամլին տւելորդ կաթիլքը :

Պաղածինալէս՝ գործալարին մէկը կառնէ մէյմէկ թերթ և կըթաթխէ կաթսային մէջը , և կըհանէ մէկ դիէն՝ որոնք որ միակերպ չեն առած , այսինքն կուղեմ ըսել քերթ քիւրթ առածները . և կըշարէ ինչպէս առաջին անգամը երկըթէ գաւաղանին վրայ , ուրիշ գործալարմ' ալ կըմաքըէ մէկիկ մէկիկ լաթով , և կըըփէ սղոցի փայտէ փոշիով , այսինքն թէստերէի մանրուկով :

Երբոր ամմէն թերթը ելած է , ցաթկըտած անագները կըժողվեն և կաթ-

սային մէջը կըդնեն, և նորեն կըլեցը-
նեն Ճարպը և ջուրը կաթսային մէջ
որպէս զի անագը չի կրանայ (քիրէՃ-
լէնմիշ չըլլայ) . և կըզգուշանան ալ
որ կաթսան դատարկ չիմնայ :

Հետոյ Ճերմակ թերթակերպ եր-
կաթները (թէնէքէները) կըբերեն և
կըդնեն բռան մօտը . և տաք կըպա-
հեն : Այէկը կըմաքըէ մնտուկի մէջ
լցուած վարսակի (իւլաֆի) թեփով,
մէկ ուրիշ մը ալ առջինին ձեռքէն ե-
լածը կառնէ, և նոյն գործը կընէ դար-
ձեալ . ապոնց երկուքին ձեռքը հին
քուռչեր կան . իսկ երրորդ մալ ձեռ-
քը մաքուր լաթ կայ՝ որ կըկատարէ
մաքըէլը :

Հասարակօրէն կաւելցընեն երկու
օխայ պղինձ, ամմէն մէկ հարիւր քառ-
սուն օխայ անագին . երբոր անագը
խիստ տաք է, թէնէքէին գոյնը գեղին
փառլախ կըլլայ . իսկ թէ որ քիչ տաք
լլայ, անագը թանձը կըկազի երկըթէ
թերթերուն վրայ :

Եւ որովհետեւ տաք անագաւոր թեր-
թերը մինչեւ որ պաղին, վրայի անագը
կըվազէ սպառվածին (քէնարին) դին,
ուստի շատերուն քէնարը անագը թան-

ձըր կըլլայ : Ասի շտկելու երկու ճար
կայ :

Պ . Այսպիսի անհաւասար անագո-
տած թիթեղը կըբռնեն կրակի վրայ ,
մինչև որ կակղնայ և վաղե աւելորդը :

Է . Այժմսայիմը մէջ կըդնեն քիւ-
մը անագ քիւ կրակով հալած . յետոյ
թերթին քենարը թանձր եղած դին
կըխոթեն տաք անագին մէջը , և դուլ
դանակով վար կուտան աւելորդը :

Երբոր ամմէն բան աւարտած է ,
կըդնեն Յօ կամ Կօ թերթը մէկ տեղ
հաստ փայտի վրայ , և տափակ չէքի-
չով կըզարնեն թէ տակը և թէ վրան ,
և աս կերպովս կողորկեն թերթերուն
երեաները և միակերպ կընեն , և կըկա-
պեն մէկ տեղ . մէջ տեղը թերթերուն
կապոցին կորացընելով , այսինքն հավ-
շալը ձգելով :

Կըխարձեն Յ60 տրամ Ճարապ ամմէն
մէկ Յ00 թերթին . և 2520 տրամ ա-
նագ ան թերթերուն՝ որք ունին 11
երկրաչափական մատ և երկու գիծ եր-
կանք , և ութը մատ ու կէս լայնք :

Փալւուն ընել լիտեղը այսինքն անտառուր
մէրլին էրեւը, որ Քո" . Խուստէ և լւալին
հըմլէ, այսինքն մէջլէ լինեցէ շինել:

Կատ տարի չէ որ ըստ պատահման
գտնը վեցաւ փալիլուն թերթերէ գոյն
զգոյն վեռնիձներով ծածկած բաներ
շինվիլ, որք գիտես թէ Արուսեկի կը-
նմանին ամենեւին . որ ուրիշ բանմը չէ
թէ ոչ ներդործութի մը պարզ կամ
բաղադրեալ թթուուաներուն անա-
գաւոր երկրթէ թերթերուն վրայ, ուս-
տի հօս կըդնեմ քանի կերպով որ կըլ-
լայնէ . միայն թէ պէտք է դիտնալ՝ որ
անգղիացւոց թանագներուն վրայ ա-
ղեկ կըլայ, իսկ գաղղիացւոցը աղեկ
ըլլար :

Ալբու .

Ալբու . ա : Այս այս այս

Ալբուծեն չորս օնցա հասարակ աղ-
ութ օնցա ջրի մէջ . ուր կաւելցնեն
երկու օնցա ալ թթուուա շնչրորակի
(կիւվերջէլէ քէղապի) :

Է :

Ալթը օնցա , ջուր , երկու օնցա
թթուուա շնչրորակի , և երեք օնցա

աղածական թթուուտ (թուղ ոււուու-
հի) :

Դ :

Ութը օնցա ջուր , երկու օնցա թթ-
թուուտ աղածական , և մէկ օնցա թթ-
թուուտ ծծմբական (ճերմակ զածեա-
զի) :

ԱԵՐՊԻ ԳՐԾԱԾԵԼՄ- աս ԵՐԵՒ ԲԱՂԱՌԵՐԵՆԵԸ :

Վա իրեք բաղադրութե մէկը , որը
որ ըլլայ նէ , տաքցնելով կըթափեն
Ճերմակ թանագին վրայ , որ տեղաւո-
րած է հողէ կասկարայի վրայ . խսկոյն
երեսը կամ շատ անգամ բոլոր թիթե-
ղը կըլլայ փալփլուն , յետոյ կըթաթ-
խեն և կըհանեն մէկ թթուակ ջրի մէ-
ջէն , և կըլլվան :

Խակ եթէ թիթեղը աղեկմը տաքցը-
նես կըակով մօտ կարմրութե , և թա-
փես վրան պաղ իրեք խառնուրդէն մէ-
կը , աստղանման ձեռվ փալփլուն կըլ-
լայ :

Խայց կռանի (չեքիչի) շիգար , կաւ-
րի , ուստի խորոփաւոր բան չի շինվիր :
Յետոյ աս փալփլուն թերթերուն

վրայ կուտան թափանցիկ և գունաւոր
կամ անգոյն վեռնիչ :

Փալփլուն ըլլալուն պատճառը աս
է որ , երբ երկըթէ թիթեղներուն վր
կուտան անագը (խալայը) , վրայի դին
կը սառնորականայ , թթուուտը միայն
երեան կըհանէ զանի , ասոր համար
գոյնզգոյն կըփալփլի :

Պահելէք :

Աս վերի ըսածներէս 'ի զատ փորձեց
մէկը՝ որ Արքունի թթուուտը (ասիտ
նիթոօ մուռիաթիքը) աւելի կըյար-
մարի աս բանիս համար , երբոր քիչ-
մը տաքցուցած թափես անագաւորած
թերթերու վրայ :

Պարծապանաց Եղանակ . առ :

Չորս մաս թթուուտ շնչքորակի ,
մէկ մաս հասարակ աղ , և երկու մաս
շոգիացեալջուր (իմակիկէ ելած ջուր):
Է :

Չորս մաս թթուուտ շնչքորակի , կմ
որ նոյն է , աղէկ ժանտաջուր , և մէկ
մաս անուշատը (նշատըր) :

፩ :

Երկու մաս ժանտաջուր , մէկ մաս
աղածական թթուուտ , և երկու մաս
շոգիացեալ ջուր :

፪ :

Երկու մաս ժանտաջուր , երկու մաս
թթուուտ աղածական , և չորս մաս շո-
գիացեալ ջուր :

፫ :

Վեկ մաս ժանտաջուր , երկու մաս
թթուուտ աղածական , և իրեք մաս
ջուր շոգիացեալ :

፬ :

Երկու մաս ժանտաջուր , երկու մաս
թթուուտ աղածական , երկու մաս ջուր
շոգիացեալ , և երկու մաս թթուուտ
ծծմբական (ճերմակ զաճեաղի) :

፭ :

Երկու մաս թեթև ժանտաջուր , պ-
կիսով չափ ջուր խառնած , մէկ մաս
աղ հասարակ :

፮ :

Երկու մաս թեթև ժանտաջուր , մէկ
մաս անուշադր (նշատը թուզու) :

፯ :

Օօրաւոր թթուուտը քացախին
(սիրքէ ուուհի) , և թթուուտը ծծմբա-
կան՝ ջրով խառնած :

Վարժածնելու էղանակը :

Առ վերի ըսած բաղադրութեց, որն
որ ըլլայ, մէկին մէջը սպունգը (սիւն
կերը) թաթխելով, կըտարածեն թա-
նաքներուն վրայ հաւասարապես. թէ
որ թանաքները տաքցուցած ըլլայ քիչ-
մը, և թթուուտները (քէղապները)
զօրաւոր, կամ տկարացած ջրով, 'ի
վայրկեան ժամանակի կըլլայ դոյնզգոյն
փալփլուն, և կամ 5 կամ 10 վարկե-
նի մէջ:

Հետոյ կըձգեն թիթեղները պաղ
ջրի մէջ և կըլըւան՝ շփելով կակուղմը
բամպակով կամ փետուրով, և կըթո-
ղուն որ ցամքի, և երբոր վրան չեն ու-
ղեր տալ վեռնի՛, կըձեփեն քիչմը
թանձրըկեկ ջրով թրջած արաթական
խեժով (արագ զամփիով) :

Դասովերելի . ա :

Առ վերի ըսած գործողութիւններս
թէպէտ հեշտ է, բայց վարժութի ալ-
պէտք է, վասն զի յարմար ատեն լր-
ւալու է. թէ որ փութաս՝ թիթեղ-

ներդ չունենաք փայլունութիւն, իսկ եւ
թէ ուշանառն կը սկզբայ և կը թումիւն

։ Օ անօթութիւն ։ Է :

Դասրժողութիւնը կատարելէն ետեւ
սախ լրւալու է թեթև թթուցած
ջրով, այսինքն մէկ օխայ ջրին մէջ՝ գը-
նելու է մէկ դգալ ժանտաջուր, և ետ-
քը մաքուր ջրով լրւալու է :

Գ. Լ. : Ժ. Լ. :

Եմանցնելուսպատճեն մետահաւեղէն բեհեղի (Ճան-
յանց առաքեած), համարժաթիւ ։ Ա զանձ
ա, զի՞ր (յայշայտն) նայսաս ծայս
ամեն սիցոյ դուռնա զայր ։ Ճանասի բանեւ

Խայմախ թաշի քարը փոշի կը վերա-
ծեն և կը մաղեն, յետոյ ձկան սոսինձի
(պարիս թութխալիի) հետ կը խառ-
նեն, և կը առարածեն ձերմակ թղթի
վրայ։ Օ անազան ներկեր ինչ որ կու-
զեն խառնելով աս ձերմակ փայլուն
բաղադրութեր հետ, թղթին վրայ կը
տարածեն և աղեկ ընելու համար ու-
նակութիւն (իտման) կուզէ։ Բայց յա-
ռաջ քան տարածելը աս բաղադրութեր

թղթին վրայ թէ, որ տաք կոխես զա-
նազան փորագրած ձևեր, և յետոյ
վրան տաս բաղադրութենէն, խիստ
աղուոր կըլլայ :

Ըստուշիւն, չուեան, համարը, բռուրտը, բամ-
պահը, ժնանը, իանեցը, ջուրին անընադիան-
ցէւն ընեւ որ ջուր չէծցծէն :

Հալեցուր կըակով, առանց եռաց-
նելու 155 $\frac{1}{2}$ տրամ աղէկ ճերմակ ա-
ճառ (սապօն), 38 օխայ ջրի մէջ. նմա-
նապէս ուրիշ նոյն քանակութք ջրի
մէջ 211 տրամ պաղլեղ, և աս լուծու-
թեանը մէջ 48 տրամ բաւական ջրով
հալած սոսինձ (թութխալ) դիր, և
յետոյ խառնէ զասի աճառի ջրին հետ
ամմէնը մէկ տեղ: Խնցուր կամաց կա-
մաց աս ջրին մէջէն՝ պատրաստած նիւ-
թերդ առանց եռացնելու. Երբոր ա-
ղէկ թրջած են, բըռէ որ ցամքի :

Ոմսնք ամմէն տեսակ կտաւեղէն
բաները կանցնեն աճառի ջրէն, յե-
տոյ պաղլեղի և սոսինձաւոր ջրէն զատ
զատ, մէկտեղ չիխառնած. բայց ջրին
տաքութիւր պիտի ըլլայ մօտ եռալու:
Քայց ամմէն տեսակ թղթերու հա-

մար՝ հալեցուր 32 տրամ շերմակ աշառ, 8 օխա անուշ ջրի մէջ՝ 192 տրմ պաղլեղ, և 64 տրամ սոսինձ (թութ խալ), 16 տրամ խէժ արաբիոյ (զամիս արապի)։ որոնք հալած ըլլան բաւական ջրով առաջուց։ Աս ամէնը միացուր խառնէ՛ աճառի ջրին հետ։ թաթ խէ՛ հօն թղթերը՝ քիչմը տաքցընելէն ետեւ։

Թաղթերը չորցընելու համար մէկը մէկու վրայ կըշարեն, յետոյ վրանին 100, օխայի ծանրութիւն կըդնեն, և կըշըզմեն՝ որ ցա մքին։

ՈՒՐԻշ ԷԵՐՊ :

